ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԷԼԻԶԱ ՌԱՖԻԿԻ ԴՈՒՐԳԱՐՅԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ (ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԻԴ.03.02 _ «Տնտեսական, սոցիալական և քաղաքական աշխարհագրություն» մասնագիտությամբ աշխարհագրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

Գիտական ղեկավար՝
աշխ. գիտ. թեկնածու, դոցենտ
Մ. ԹՈՐՈՍՅԱՆ

Երևան – 2016թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……..……...3

Գլուխ 1. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ.....9

1.1. Զբոսաշրջության զարգացման աշխարհագրական գործոններ..…….....9

1.2. Զբոսաշրջության ոլորտի տեղը տնտեսության մեջ …...…….....……16

Գլուխ 2. ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ…..28

2.1. Ռեսուրսային ներուժի բնութագիր.....28

2.2. Բնական ռեսուրսներ …….....…….....33

2.3. Մարդածին, պատմամշակութային ռեսուրսներ …….....73

2.4. Զբոսաշրջության ոլորտի ենթակառուցվածքներ...…….....79

Գլուխ 3. ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 88

3.1. Զբոսաշրջության կազմակերպման վրա ազդող գործոնները.....88

3.2. Զբոսաշրջային առաջարկն ու պահանջարկը…….....93

3.3. Զբոսաշրջային կլաստերների ձևավորման նախադրյալները……..……...99

Գլուխ 4. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԸ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ.....116

4.1. Գյուղական համայնքային զբոսաշրջության հայեցակարգը……..……..……116

4.2. Գյուղական զբոսաշրջության զարգացման հիմնական փուլերը.....…....123

4.3. Տեղական կառավարման մարմինները և զբոսաշրջության կազմակերպումը.....127

4.4. Զբոսաշրջային ծառայությունների փաթեթի կառուցվածքը.....…….....129

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ…….....135

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……...137

ՀԱՎԵԼՎԱԾ…...……144

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսության ամենաշարժուն և շահութաբեր ոլորտներից է, որի զարգացման արագ տեմպերը և արտարժույթ ձեռք բերելու առավել մեծ հնարավորությունները նպաստավոր պայմաններ են ստեղծում տվյալ երկրի տնտեսության առանձին ոլորտների, մասնավորապես, զբոսաշրջային ինդուստրիայի ձևավորման ու զարգացման համար: Այն յուրահատուկ տեղ է զբաղեցնում ոչ միայն առանձին երկրների տնտեսություններում, այլև միջազգային տնտեսական հարաբերություններում: ՀՀ-ում կան զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ ռեսուրսներ, որոնց նպատակային, արդյունավետ օգտագործելու դեպքում այն կարող է դառնալ ազգային տնտեսության կարևորագույն բնագավառներից և նպաստել տարածքային համաչափ զարգացմանը: ՀՀ զբոսաշրջության համալիր զարգացման համար կարևորվում է մարզերի ներգրավվածությունը, դրանց ենթակառուցվածքների զարգացածության մակարդակը, զբոսաշրջային ռեսուրսների հասանելիությունը, դրանց համակողմանի գնահատումն ու արդյունավետ օգտագործումը: Մարզի մակարդակով զբոսաշրջության ինդուստրիայի պլանավորված կազմակերպումն անդրադառնում է տվյալ մարզի տնտեսության աճի և բնակչության կյանքի որակի բարձրացման վրա:

Հիմնախնդրի բազմաշերտությունն ու բարդությունը պահանջում են դրա աստիճանական, փուլային ուսումնասիրություն: Ակնհայտ է, որ հիմնախնդրին համապարփակ ու ամբողջական լուծում տալու և համապատասխան ծրագրեր մշակելուն պետք է նախորդի առանձին վերցրած տարածքային միավորների՝ զբոսաշրջային ներուժի գնահատումը և զբոսաշրջային ինդուստրիայի զարգացման հնարավորությունների բացահայտումը: Գիտական մակարդակով դա կարող է իրականացվել, եթե հենվի միասնական տեսական և մեթոդաբանական հիմքի վրա: Այդպիսի հիմքի մշակումը, թեկուզև վարկածի մակարդակով, կարող է հենվել առանձին տարածքային միավորի ուսումնասիրության վրա:

Մեր կողմից, որպես օրինակ ընտրվել է Սյունիքի մարզը, որը հարուստ է զբոսաշրջային ռեսուրսներով և ունի բարենպաստ աշխարհագրական դիրք: Այստեղ

առկա է զբոսաշրջության զարգացման փոխկապակցված սոցիալ-տնտեսական խնդիրների այն անհրաժեշտ բազմազանությունը, որոնք ի մի վերցրած Սյունիքի մարզը դարձնում են հետազոտության մոդելային տարածք: Այդպիսի հետազոտությունը ոչ միայն գիտամեթոդական հետաքրքրություն է ներկայացնում և օգտակար է լինելու ՀՀ այլ մարզերի ուսումնասիրության ու զբոսաշրջության կայուն զարգացման ծրագրերի մշակման համար, այլև իր գործնական ուղղվածությամբ կարող է նպաստել Սյունիքի մարզում առկա սոցիալտնտեսական հիմնախնդիրների լուծմանը:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ զբոսաշրջության կայուն զարգացումը հանդիսանում է ՀՀ կառավարության տնտեսական ծրագրերի գերակա խնդիրներից մեկը, և կոչված է տարածքային համաչափ և կայուն զարգացման զբոսաշրջային ներուժի բացահայտմանը, ռեսուրսների օգտագործման արդյունավետացմանը: Հետևաբար պահանջված են դառնում զբոսաշրջային ինդուստրիայի տարածքային կայուն զարգացման հայեցակարգերը, կանխատեսումները, նախագծերը և նպատակային ծրագրերը:

Վերոհիշյալ հիմնախնդրի շուրջ Հայաստանում և դրա առանձին մարզերում թեպետ կատարվել են ուսումնասիրություններ, բայց դրանք հիմնականում արտահայտված են առանձին կազմակերպություններին կից զբոսաշրջության ծրագրերի համատեքստում և չունեն գիտական արժեք: Այդ է պատճառը, որ անհրաժեշտություն է առաջանում ՀՀ առանձին մարզի օրինակով իրականացնել գիտական համալիր ուսումնասիրություն, որի հետազոտության մեթոդները կիրառելի կլինեն այլ մարզերի և ողջ երկրի զբոսաշրջային ռեսուրսների ներուժի գնահատմանն ու զբոսաշրջության ինդուստրիայի զարգացման հեռանկարների բացահայտմանը, իսկ վերջնական արդյունքները կարող են օգտագործվել դիտարկվող մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական ծրագրերում: Սյունիքի մարզի համար դեռևս պատշաճ գիտահետազոտական աշխատանք չի կատարվել, և այս բնագավառում զգացվում է համապարփակ ուսումնասիրությունների անհրաժեշտություն: Հետևաբար Սյունիքի մարզը, որպես ՀՀ ծայրամասային և սահմանամերձ տարածաշրջան, զբոսաշրջության ինդուստրիայի համալիր և համակարգային ուսումնասիրության կարիք ունի:

Զբոսաշրջային ներուժի քննարկումը՝ բնական, պատմական, սոցիալ-տնտեսական կողմերով, իրենց ենթակառուցվածքներով համարվում են գնահատման հիմքեր զբոսաշրջության ուսումնասիրություններում և պատշաճ ուշադրության են արժանի տնտեսության այս ճյուղի զարգացման համար:

Հետազոտության նպատակը: Ատենախոսությունում քննարկվում է զբոսաշրջության ոլորտի տեսամեթոդական հարցերը, ուսումնասիրվում է Սյունիքի մարզի զբոսաշրջային ներուժը, անդրադարձ է կատարվում դրանց օգտագործման խնդիրներին և նպատակներին, զբոսաշրջային կլաստերների ձևավորման առաջնահերթությանը, այդ ոլորտի ներքին ու արտաքին շուկաների գնահատմանն ու արժևորմանը, գյուղական համայնքների զբոսաշրջային հնարավորությունների բացահայտմանը, մարզի մակարդակով զբոսաշրջության սոցիալ-տնտեսական նշանակությանը և տրվում է այս բնագավառում հաջողության հասնելու կարևոր առաջարկներ: Հետազոտության նպատակն է՝ վերլուծել զբոսաշրջության զարգացման աշխարհագրական գործոնների օգտագործման հնարավորությունները, բացահայտել Սյունիքի մարզում զբոսաշրջային ինդուստրիայի զարգացման հեռանկարային ուղղությունները և տալ դրա սոցիալ-տնտեսական նշանակությունը:

Հետազոտության խնդիրներն են: Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

1. Հիմնավորել զբոսաշրջության զարգացման աշխարհագրական գործոնների ուսումնասիրման տեսական և մեթոդական հարցերը:
2. Վերլուծել Սյունիքի մարզի զբոսաշրջային ռեսուրսների ներուժը, ցույց տալ առանձին բաղադրիչների դերը զբոսաշրջային ինդուստրիայի զարգացման մեջ:
3. Բացահայտել Սյունիքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման մեջ զբոսաշրջության ունեցած դերն ու ներուժային հնարավորությունները:
4. Պարզել Սյունիքի մարզի զբոսաշրջային ինդուստրիայի ուղղությունները, դրանց տարածքային կառուցվածքը և զարգացման տեսլականը:
5. Բացահայտել Սյունիքի մարզում զբոսաշրջային կլաստերների ձևավորման ու գյուղական հանայնքային զբոսաշրջության զարգացման հնարավորությունները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Ատենախոսության հետազոտության օբյեկտը Սյունիքի մարզի զբոսաշրջության աշխարհագրական գործոններն[1] են, առարկան՝ Սյունիքի մարզի զբոսաշրջային ներուժի աշխարհագրական գործոնների համակարգը ու դրանց կիրառումը զբոսաշրջության մեջ:

Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքը: Ատենախոսության համար հիմք են հանդիսացել արտասահմանյան և հայրենական հետազոտողների աշխատությունները, զբոսաշրջության ոլորտին առնչվող ՀՀ իրավական ակտերը, միջազգային կազմակեպությունների հետազոտական, վերլուծական, մեթոդաբանական նյութերը: Տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության զբոսաշրջության վերաբերյալ տվյալները: Հետազոտության մեջ կիրառվել են համակարգային, տարածական, համեմատական վերլուծության ու քարտեզագրական մեթոդները: Պաշտպանության ներկայացվող սույն աշխատությամբ փորձ է արվել համալիր մեթոդաբանական հնարավորությունների օգնությամբ բացահայտել Սյունիքի մարզի աշխարհագրական գործոնների կարևորությունը զբոսաշրջության զարգացման գործում:

Պաշտպանվող հիմնադրույթները:

- Հիմնավորված է, որ Սյունիքի մարզում առկա են աշխարհագրական հիմնական գործոնները, զբոսաշրջության տարբեր ճյուղերի ձևավորման ու զարգացման համար:
- Որոշված են Սյունիքի մարզի զբոսաշրջային ենթակառուցվածքները, որոնք կարևոր են զբոսաշրջային ինդուստրիայի տարածքային կազմակերպման համար:
- Բացահայտված և հիմնավորված է, որ մարզի գյուղական բնակավայրերը ունեն զբոսաշրջային ներուժի յուրահատուկ գծեր զբոսաշրջային շուկայի ձևավորման համար:
- Բացահայտված են մարզի զբոսաշրջային այն ռեսուրսները, որոնք կարևոր գործոններ են մարզի զբոսաշրջային կլաստերների ձևավորման և զարգացման համար:

1. «Աշխարհագրական գործոն» հասկացությունը ատենախոսությունում մեր կողմից օգտագործվում է որպես զբոսաշրջության տարածքային կազմակերպման բնական, մարդածին պայմանների ու ռեսուրսների ընդհանրություն ձևավորող գործիք (գործոն):

Գիտական նորույթը:

- Առաջին անգամ կատարվել է Սյունիքի մարզում զբոսաշրջության զարգացման աշխարհագրական գործոնների համալիր վերլուծություն:
- Բացահայտվել է Սյունիքի մարզում զբոսաշրջային ներուժի բաղադրիչների դերը զբոսաշրջության զարգացման մեջ:
- Որոշարկվել է զբոսաշրջային ինդուստրիայի նշանակությունը մարզի սոցիալ-տնտեսական զարգացման գործում:
- Վերլուծվել և գնահատվել են մարզի զբոսաշրջային ինդուստրիայի հիմնական ուղղությունները և տրվել է դրանց զարգացման տեսլականը:
- Կատարվել է Սյունիքի մարզի զբոսաշրջային աշխարհագրական իրավիճակի վերլուծություն՝ ըստ զբոսաշրջային կլաստերների:
- Ուսումնասիրվել են գյուղական համայնքային զբոսաշրջության զարգացման հեռանկարները:

Կիրառական նշանակությունը: Ատենախոսության նյութերն ու ստացված արդյունքներն ունեն գիտաճանաչողական և գործնական նշանակություն: Դրանք կարող են օգտագործվել Սյունիքի մարզում զբոսաշրջային ինդուստրիայի զարգացման կիրառական գործընթացներում, ինչպես նաև ուսումնական ծրագրերում և դասընթացներում: Ատենախոսությունում մշակված մեթոդաբանական մոտեցումները կարելի է կիրառել ՀՀ այլ մարզերի զբոսաշրջության զարգացման ծրագրերը մշակելիս:

Փորձաքննությունը և հրատարակված աշխատանքները:

Թեմայի շուրջ զեկուցվել է հանրապետական գիտաժողովներում և ԵՊՀ «Սոցիալ-տնտեսական աշխարհագրության» ամբիոնում. պրոֆեսոր «Ս.Պ. Բալյանի 95 ամյակին նվիրված գիտաժողովում», Երևան, ԵՊՀ, 2007, պրոֆեսոր «Պ.Ս. Բոշնաղյանի ծննդյան 90 ամյակին նվիրված գիտաժողովում», Երևան, ԵՊՀ, 2011, Պրոֆեսոր «Լ.Վալեսյանի ծննդյան 80 ամյակի և գիտամանկավարժական գործունեության 55 ամյակին նվիրված գիտաժողովում», Երևան, ԵՊՀ, 2011, ԵՊՀ Տնտեսական, սոցիալական և քաղաքական աշխարհագրության ամբիոնի ընդլայնված սեմինարներում, Գիտությունը և կրթությունը Արցախում, Երևան, 2014, 3-4, Երևան, ՀՊՄՀ, 2015, Հանրապետական գիտաժողովի նյութեր նվիրված Հայոց Մեծ Եղեռնի 100-ամյակին:

Ատենախոսության թեմայով հրատարակվել է յոթ հոդված:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացություններից ու առաջարկություններից, օգտագործված 96 անուն գրականության ցանկից, 26 աղյուսակից, 13 նկարից: Ատենախոսության ամբողջ նյութը շարադրված է 143 էջի վրա:

Հեղինակն իր խորին երախտագիտությունն է հայտնում գիտական ղեկավարին՝ աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ Մ.Մ. Թորոսյանին՝ օգտակար խորհուրդների, աշխատանքի նկատմամբ ուշադրության համար: Շնորհակալություն եմ հայտնում՝ ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի տնտեսական, սոցիալական, քաղաքական աշխարհագրության ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմին աշխատանքի ընթացքում օգտակար խորհուրդների համար:

Գլուխ 1. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

1.1. Զբոսաշրջության զարգացման աշխարհագրական գործոնները

«20-րդ դարի ֆենոմեն»: Ահա այսպիսի բնորոշում է ստացել մեր ժամանակներում զբոսաշրջությունը: Գիտատեխնիկական առաջընթացի (ԳՏԱ) մասնավորապես տրանսպորտի զարգացմանը համընթաց, զբոսաշրջությունը դարձել է 20-րդ դարի ամենազանգվածային բնույթ կրող երևույթներից և տնտեսության ամենակարևոր գործոններից մեկը[66,67]:

Համաշխարհային տուրիզմի կոնֆերանսում (Մադրիդ 1981), զբոսաշրջությունը հաստատվեց որպես ակտիվ հանգստի ձևերից մեկը, այն իրենից ներկայացնում է ճամփորդություն, որի նպատակն է երկրների հետ ծանոթությունը [69, էջ8]:

2003թ. դեկտեմբերի 17-ին ընդունված «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքում «զբոսաշրջություն» հասկացությունը շարադրված է որպես ճանաչողական, հանգստի, առողջարարական, մարզական, կրոնական, ազգականներին այցելության, մասնագիտական, գործնական և այլ նպատակներով բնակության մշտական վայրից (երկրից) այլ վայր (երկիր) առավելագույնը մինչև մեկ տարի անընդմեջ ժամկետով ճանապարհորդություն իրականացնող քաղաքացիների գործունեություն [21]:

Դեռևս ԽՍՀՄ-ի տարիներին կատարվել են մի շարք աշխարհագրական բնույթի ուսումնասիրություններ նվիրված զբոսաշրջության բնագավառին: Գիտական հրապարակումներից առավել ուշագրավ են՝ Ն.Տ.Միրոնենկո, Ի.Տ. Տվերդոխլեբով (1981), որոնց ուսումնասիրությունները նվիրված են տարածքային ռեկրեացիոն համակարգերին: Հեղինակները վերլուծել են ԽՍՀՄ առանձին տարածաշրջանների ռեկրեացիոն ռեսուրսները, այդ թվում նաև մեր տարածաշրջանի, որտեղ առաջնային նշանակությունը տրվել է առողջարարական և ճանաչողական զբոսաշրջության ուղղություններին: Խորհրդային տարիների հեղինակներից Բ.Բ.Խրաբովչենկոն, Օ.Զ.Բայտերյակովը, Ա.Գ.Նիզամիևը և Մ.Ռ.Դուանը ուսումնասիրել են լեռնային շրջանների բնական նախադրյալները և տվել զարգացման ուղիները (2000): Հեղինակներից՝ Ա.Բ.Բրեդիխին, Օ.Ա.Բարսուկ, Յ.Պ.Սուպրունենկո, Է.Ա.Լիխանովա

(2005), իրենց աշխատություններում գնահատել են ռելիեֆի էսթետիկան և նշել զարգացման ուղիները: Վերջին տարիներին հեղինակներից Ա.Յ.Ալեքսանդրովա, Մ.Բ. Աստաշկին, Օ.Ն.Կոզիրևան, Ա.Ս.Կուսկով (2008), Մ.Ա.Մորոզով(2009), ուսումնասիրել են տարածքային կազմակերպումը միջազգային զբոսաշրջության մեջ:

Դեռևս ՀՀ անկախության տարիներին հասկանալի է, զբոսաշրջության ոլորտը նոր էր, և քիչ են կատարվել զբոսաշրջության ոլորտին նվիրված աշխատանքներ: Զբոսաշրջության ոլորտում առանձին աշխատություններից կարևորվում են Է.Յ.Օրդինյանի, Մ.Ա.Սահակյանի, Ա.Վ.Բաղալյանի աշխատությունները, որոնցում քննարկվել են ՀՀ անցումային տնտեսության կարգավորման խնդիրները զբոսաշրջության ոլորտում և տրվել են դրանց հաղթահարման ուղիները: Այս աշխատանքում առաջին անգամ փորձ է արվել Սյունիքի մարզի օրինակով գնահատել և վեր հանել բնական, սոցիալ-տնտեսական գործոնների դերը զբոսաշրջության մեջ:

Իր բովանդակությամբ զբոաշրջությունն արտաքին առևտրի մի մասն է, քանի որ ծառայությունները, որոնք տրամադրվում են զբոսաշրջիկին տրանսպորտի, հյուրանոցների, սննդի և այլ ձևերով, կրում են ապրանքային բնույթ և ինչպես ցանկացած այլ ապրանք, այն հանդիսանում է առք ու վաճառքի առարկա համաշխարհային շուկայում: Զբոսաշրջությունը իրենից ներկայացնում է տվյալ երկրի ժամանակավոր այցելուների կողմից արտարժույթով ձեռք բերվող նյութական և մշակութային բարիքներ, ծառայություններ, ապրանքներ, այսինքն՝ ապրանքների և ծառայությունների արտահանում, որն իրականացվում է տվյալ երկրի սահմաններում: Դրա համար էլ զբոսաշրջությունը անվանում են «անտեսանելի արտահանում»:

«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքում զբոսաշրջային ոլորտի ծառայությունները սահմանված են որպես՝զբոսաշրջիկներին մատուցվող և նրանց պահանջմունքների բավարարմանն ուղղված տեղաբաշխման, հյուրանոցային, տեղափոխման, էքսկուրսային, սննդի կազմակերպման և մատուցման, մշակութային, մարզական բնույթի միջոցառումների, հանգստի, զվարճանքի կազմակերպման և այլ ծառայություններ [21]: Զբոսաշրջության վիճակագրական փաստաթղթերում բերվում է զբոսաշրջային արտադրանքի հետևյալ տեսականին.

- հյուրանոցային ծառայություններ: Համաձայն «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի հյուրանոցային ծառայություններին են վերաբերվում՝ տեղաբաշխման, գիշերակացի, սննդի կազմակերպման և մատուցման, ինչպես նաև կեցության հետ կապված այլ վճարովի ծառայությունները,
- հասարակական սննդի ծառայություններ,
- մարդատար տրանսպորտային ծառայություններ, որի մեջ են մտնում ճանապարհային, երկաթուղային, օդային և ջրային փոխադրումներ,
- զբոսաշրջային օպերատորների, գործակալությունների և զբոսավարների ծառայություններ: «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքում զբոսաշրջային օպերատորների և գործակալությունների գործունեությունը սահմանվում է որպես զբսաշրջային արդյունքի ձևավորում, խթանում և իրացում, ինչի արդյունքում տրամադրվում է զբոսաշրջային փաթեթ, իսկ զբոսավարների գործունեությունը՝ որպես զբոսաշրջիկներին տեղեկատվական, կազմակերպչական ծառայության և մասնագիտական օգնության մատուցում,
- մշակութային ոլորտի ծառայություններ,
- ռեկրեացիոն ծառայություններ,
- ֆինանսական, ապահովագրական, վարձակալական և այլ տիպի զբոսաշրջային ծառայություններ:

Աշխարհագրական գործոններով պայմանավորված ցանկացած զբոսաշրջային տարածաշրջան բնութագրվում է լայն և նեղ մասնագիտացված ուղղություններով [59,66,69]:

Լայն մասնագիտացված զբոսաշրջային տարածաշրջանը բնութագրվում է նրանով, երբ զբոսաշրջիկը ճանապարհորդում է որևէ վայր ինչ որ նպատակով, և հետաքրքրված չէ տվյալ վայրի առանձնահատկություններով, նա օգտվում է միայն զբոսաշրջային ծառայություններից, քանի որ դրանք առաջարկվում են: Լայն մասնագիտացված տարածաշրջանը կարևորվում է հիմնականում գործնական զբոսաշրջության համար:

Նեղ մասնագիտացված զբոսաշրջային տարածաշրջանը զբոսաշրջիկներին գրավում է իր բնական առանձնահատկություններով և սոցիալ մշակութային

գործոններով: Սրանք հանդես են գալիս հանգստի և զբոսաշրջային տեսարժան վայրերով: Որպես հանգստի վայրեր առանձնացվում են հանգստյան գոտիները, արձակուրդների անցկացման վայրերը, որոնք հեռու չեն բնակության վայրից և ծառայում են կարճատև հանգստի համար: Զբոսաշրջային տեսարժան վայրերից են համարվում պատմական, մշակութային, կրոնական և զվարճանքի կենտրոնները [66]:

Զբոսաշրջության զարգացումը հիմնականում կախված է աշխարհագրական գործոններից, որոնք կոնկրետ տարածքի համար ունեն համապարփակ բնութագիր և ընդգրկում են բնական ու հասարակական բազմաթիվ ոլորտներ: Զբոսաշրջության զարգացման աշխարհագրական գործոնները կարելի է բաժանել երկու խմբի [58]:

1. արտաքին կամ էկզոգեն գործոններ.
2. ներքին կամ էնդոգեն գործոններ.

Արտաքին գործոնները զբոսաշրջության վրա ազդում են հասարակական կյանքում տեղի ունեցող փոփոխությունների միջոցով: Արտաքին գործոնների խմբին են դասվում՝ բնական, պատմամշակութային, տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական, քաղաքական իրավական, տեխնոլոգիական և բնապահպանական ոլորտները:

Բնական և պատմամշակութային գործոնները մեր կարծիքով գլխավոր ազդեցությունն են ունենում զբոսաշրջության զարգացման գործում: Բնական գործոնների դերը կայանում է նրանում, որ կարևորվում են ռելիեֆի, կլիմայական, բուսական և կենդանական աշխարհի յուրօրինակությունները, որոնք էլ նպաստում են զբոսաշրջության հետագա զարգացմանը:

Տնտեսության այնպիսի ճյուղեր ինչպիսիք են տրանսպորտը, կապը, շինարարությունը, ժողովրդական ապրանքների արտադրությունը և այլն, զբոսաշրջության համար ունեն հսկայական ազդեցություն: Այլ կերպ ասած հանդես են գալիս տնտեսության զարացման մեջ որպես կատալիզատոր [80]:

Տնտեսական գործոնները ուղղակիորեն կապված են զբոսաշրջության և տնտեսության զարգացման հետ: Երկրի տնտեսական զարգացման մակարդակն ազդում է ոչ միայն զբոսաշրջության այցելությունների ծավալի վրա, այլ նաև այնպիսի

տնտեսական գործոնների, որոնցից են՝ արժեզրկումը, բանկային տոկոսադրույքները, արտարժույթի փոխանակման կուրսերը և այլն: Բացի այդ տնտեսության զարգացումը սերտ կապված է զբոսաշրջության նյութատեխնիկական բազայի և ենթակառուցվածքների զարգացման հետ [58]:

Համաշխարհային զբոսաշրջային կազմակերպության փորձագետների հաշվարկներով արտասահմանյան ուղևորության արժեքի 5%-ով բարձրացումն արտագնա զբոսաշրջային ուղևորությունները կրճատում է 6-10%-ով [65]:

Սոցիալական գործոնները կապված են բնակչության ազատ ժամանակի մեծացման հետ: Արտադրության տեմպերի աճը մարդկանց մտավոր և արտադրական բարձր լարվածությունը ուժերի վերականգման և հանգստի անհրաժեշտություն են առաջացնում: Ժամանակակից աշխարհում նկատվում է արձակուրդային ժամանակահատվածի մեծացման և հանգստի նպատակներով դրա տրոհման միտում: Այսօր առավելապես տարածված են զբոսաշրջիկների կարճատև ուղևորությունները: Զբոսաշրջության մասնագետների կողմից այս երևույթն անվանում են միջակայքերով ճանապարհորդություն: Փորձագետների կարծիքով կարճ ժամանակահատվածներով ճանապարհորդող անձինք ուղևորության մեկ օրվա հաշվով ավելի շատ գումար են ծախսում, քան երկարատև ճանփորդություններ կատարողները: Կարճատև ուղևորությունները «բաշխվում են» ամբողջ տարվա ընթացքում և նպաստում սեզոնայնության կրճատմանը: Սոցիալական գործոնները նպաստում են մարդկանց կրթական, մշակութային մակարդակի բարձրացմանը: Գոյություն ունի ուղիղ կապ կրթական բարձր մակարդակ ունեցող մարդկանց և զբոսաշրջությամբ զբաղվողների միջև, որը բացատրվում է այն հանգամանքով, որ կրթված քաղաքացին ունակ է ռացիոնալ բաշխել իր ազատ ժամանակը:

Ժողովրդագրական գործոնները կապված են բնակչության թվի, խտության, սեռատարիքային կազմի և ընտանեական կարգավիճակի հետ: Աշխարհի տարբեր երկրներում կամ տարածաշրջաններում բնակչության թվաքանակի աճը ուղիղ համեմատական է զբոսաշրջիկների թվաքանակի աճին: ՀԶԿ փորձագետների կատարած վիճակագրական հետազոտությունների համաձայն զբոսաշրջության

հոսքերի ակտիվությունը բարձր է բնակչության մեծ խտություն ունեցող երկրներից, և հակառակը: Այսինքն միջազգային զբոսաշրջությունը հանդես է գալիս, որպես այլ ժողովուրդներին ճանաչելու միջոց [59]:

Զբոսաշրջության հոսքերի ինտենսիվությունը կախված է բնակչության սեռատարիքային և ընտանեական կազմից: Այսպես, զբոսաշրջության ակտիվ տեսակներով են զբաղվում առավելապես 18-30 տարեկան քաղաքացիները, սակայն զբոսաշրջության ինտենսիվության ամենաբարձր մակարդակը նկատվում է 30-50 տարեկանների մոտ: Զբոսաշրջության մեջ մեծ ակտիվություն են ցուցաբերում չամուսնացածները:

Խոշոր քաղաքներում ավելանում է միայնակ մարդկանց թիվը, որոնք ձգտում են աշխատանքում ձեռք բերել ավելի բարձր պրոֆեսիոնալ մակարդակ: Մի շարք Եվրոպական երկրներում զբոսաշրջային կազմակերպություններն այս շերտին դասում են ամենաակտիվ զբոսաշրջությամբ հետաքրքրվողների շարքին [58]:

Ժողովրդագրական գործոններից է համարվում քաղաքակենտրոնացումը: Ուրբանիզացիայի բարձր մակարդակ ունեցող երկրներում զբոսաշրջային հոսքերն առավել ինտենսիվ են, քան քաղաքակենտրոնացման ցածր մակարդակ ունեցող երկրներում: Ուրբանիզացիայի ամենաբարձր մակարդակը դիտվում է հյուսիսային Ամերիկայում (77%) և Եվրոպայում (71%), որոնք էլ համարվում են զբոսաշրջիկների հիմնական մատակարարները [92]:

Քաղաքական իրավական գործոնների խմբին են դասվում զբոսաշրջային տարածաշրջանի քաղաքական կայունության մակարդակը, սահմանների բացման քաղաքականությունը, զբոսաշրջության վարչական վերահսկողության մակարդակը, հարկային և դրամավարկային քաղաքականության միասնականացումը: Բնական է, որ քաղաքական կայուն վիճակը նպաստում է զբոսաշրջային հոսքերի ավելացմանն ու ընդհանրապես զբոսաշրջության զարգացմանը, իսկ ոչ կայուն իրավիճակն առաջացնում է զբոսաշրջային առաջարկի ու պահանջարկի նվազեցում:

Տեխնոլոգիական գործոնները պայմանավորված են ԳՏԱ-ի ձեռքբերումներով: ԳՏԱ-ի աճի տեմպերը պայմանավորում են զանգվածային զբոսաշրջային

ծառայությունների զարգացումը: Տեխնոլոգիական կարևոր գործոններից է համակարգչային տեխնիկայի կիրառումը: Վերջինս ոչ միայն հնարավորություն է ստեղծում փոխանցել կամ փոխանակել զբոսաշրջային տեղեկատվություն, այլև ձևավորում է յուրօրինակ սպառման համակարգ, ինչը զբոսաշրջիկին թույլ է տալիս անմիջականորեն կապվել զբոսաշրջային ծառայությունների մատակարարների հետ և մրցակցել զբոսաշրջության արդյունքի իրացման ավանդական ցանցերի հետ:

Բնապահպանական գործոնները սերտորեն կապված են զբոսաշրջության հետ, քանի որ շրջակա միջավայրը զբոսաշրջային գործունեության հիմքն է: Զբոսաշրջությունը լայնորեն օգտվում է բնական ռեսուրսներից, որոնց անխնա օգտագործումը կարող է բերել զբոսաշրջային արդյունքի ինչպես առաջարկի, այնպես էլ պահանջարկի նվազեցմանը, այսինքն՝ զբոսաշրջության անսահմանափակ զարգացումը կարող է նվազել [58]:

Զբոսաշրջության ներքին գործոնները կապված են զբոսաշրջության ինդուստրիայի ներսում տեղի ունեցող երևույթների և միտումների հետ: Զբոսաշրջության ներքին գործոնների ազդեցությունն անմիջականորեն ուղղված է զբոսաշրջային կազմակերպությունների ու ֆիրմաների նյութատեխնիկական բազային: Դրանք պայմանավորում են նաև զբոսաշրջության առաջարկի ու պահանջարկի փոփոխությունները: Զբոսաշրջության արդյունքի առաջարկի ու պահանջարկի վրա իրենց հերթին ազդում են հետևյալ գործոնները.

- սպառողների տեղեկատվությունը,
- զբոսաշրջության ոլորտի կադրային ապահովվածությունը,
- զբոսաշրջության ծառայությունների առաջ խաղացման և գովազդի նոր ուղիները,
- զբոսաշրջության գործունեության և մենաշնորհային կազմակերպությունների կոորդինացում և այլն:

Սեզոնայնությունը զբոսաշրջության վրա ազդող կարևորագույն գործոններից է: Այն ժամանակի ոչ մեծ միջակայքում որոշակի տեղերում զբոսաշրջային հոսքերի համակենտրոնացման հատկություն է: Լայն տարածում ունի «բարձր սեզոնայնություն», հասկացությունը, որը ընդգրկում է ամռան (հուլիս, օգոստոս) և ձմռան (հունվար,

փետրվար) ամիսները: Տարվա ընթացքում զբոսաշրջային պահանջարկը աչքի է ընկնում մեծ տատանումներով: «Տուրիստական սեզոն» են անվանում այն ժամանակահատվածը, երբ լինում է առավելագույն չափով այցելություններ: Զբոսաշրջության որոշ տեսակներ ենթակա չեն սեզոնայնության մեծ ազդեցությանը ինչպիսին են՝ (ճանաչողական, գիտական, գործնական և բուժական): Զբոսաշրջային կազմակերպությունները սեզոնայնության գործոնի ազդեցությունը նվազեցնելու նպատակով կարող են կիրառել ճկուն գնային քաղաքականություն [58,69,80]:

Այսպիսով, կարող ենք նշել, որ զբոսաշրջության զարգացումը պայմանավորող աշխարհագրական գործոնները, կազմված լինելով տարաբնույթ բնական և հասարակական ոլորտներից, հանդիսանում են աշխարհագրության համար լայն առումով և դրա առանձին ճյուղերի համար նեղ առումով ուսումնասիրության օբյեկտ և առարկա:

1.2. Զբոսաշրջության ոլորտի տեղը տնտեսության մեջ

Զբոսաշրջությունը հանդիսանում է համաշխարհային տնտեսության բարձր եկամտաբեր ճյուղերից մեկը: Զբոսաշրջությանը բաժին է ընկնում համաշխարհային համախառն արդյունքի, համաշխարհային ներդրումների, աշխատատեղերի և համաշխարհային սպառողական ծախսերի մոտ 10%-ը: Ընդ որում, եթե միջազգային զբոսաշրջությունից մուտքերի միջին տարեկան աճի տեմպը 2005-2010թթ. կազմել է 13%, ապա զբոսաշրջային ապրանքներինը կազմել է 7%, իսկ ծառայություններինը 10% է [42]:

Ծառայությունների վաճառքի առումով զբոսաշրջությունը միջազգային ասպարեզում դուրս է եկել առաջին տեղ, իսկ Եվրոպայի, Հյուսիսային Ամերիկայի, Փոքր Ասիայի, Խաղաղօվկիանոսյան և Ասիական տարածաշրջանի մի շարք երկրներում այն դարձել է ազգային եկամտի հիմնական աղբյուր (13-40%): Զբոսաշրջության զարգացման ուղղությամբ կողմնորոշված երկրներում այդ ոլորտից ֆինանսական ներհոսքը կազմում է ամբողջ արտահանման գումարի 10-35%, ընդ որում զբոսաշրջության զարգացումն ամբողջ աշխարհում բնութագրվում է բարձր տեմպերով (ծավալների տարեկան աճի մինչև 20%-ը) [54]:

ՀՀ-ում վերջին տարիներին ներգնա զբոսաշրջության միջին տարեկան աճը կազմել է 5.1%, իսկ արժույթային մուտքերինը՝ 14%:

Հայաստանը զբոսաշրջության մրցունակության 2013թ.-ի վարկանիշային աղյուսակում 140 երկրների շարքում զբաղեցրել է 79-րդ հորիզոնականը: Զբոսաշրջության մրցունակության ինդեքսը գնահատվում է երկրների երեք ոլորտների առանձին ցուցանիշների համադրությամբ [96]:

Դրանք են զբոսաշրջության կանոնակարգող դաշտը, բիզնես միջավայրն ու ենթակառուցվածքներն, ինչպես նաև զբոսաշրջության մարդկային, մշակութային և բնական ռեսուրսները, որոնցից յուրաքանչյուրի ինդեքսը հաշվարկվում է տասնյակ առանձին ենթոլորտների ցուցանիշներով:

Վերլուծությունը հիմնված է ինչպես զբոսաշրջության ոլորտին առնչվող տվյալների, այնպես էլ հարցումների հիման վրա: Զեկույցում ՀՀ-ության արձանագրած արդյունքները գնահատվում են որպես «տպավորիչ»: Բարելավումներ են արձանագրվել մի շարք ոլորտներում, առավել ակնառու զբոսաշրջության կանոնակարգող դաշտում, մարդկային ռեսուրսների և անվտանգության ոլորտներում, որոնց ցուցանիշներով մեր երկիրը համապատասխանաբար զբաղեցնում է 46-րդ, 44-րդ և 37-րդ հորիզոնականները: Առաջընթաց է նկատվում բիզնեսի սկսման (38-րդ հորիզոնական), ինչպես նաև մուտքի արտոնագրի ձեռքբերման մատչելիության ցուցանիշներով (35-րդ հորիզոնական): Նշանակալի առաջընթաց է արձանագրվել ՏՀՏ ենթակառուցվածնքերի, մասնավորապես ինտերնետ հասանելիության և օգտագործման ցուցիշներում (73-րդ հորիզոնական), ինչը արդյունքում վերջին տարիներին ավելացել են ներդրումները: Հարաբերականորեն թույլ զարգացած են շարունակում մնալ օդային, ցամաքային և զբոսաշրջությաան ենթակառուցվածքները՝ որոնց ցուցանիշներով մեր երկիրը համապատասխանաբար զբաղեցնում է 85-րդ, 94-րդ, 80-րդ հորիզոնականները: Զբոսաշրջության ոլորտում 2013 թ.-ին մրցունակությամբ առաջինն արդեն երկրորդ անգամ անընդմեջ զբաղեցնում է Շվեյցարիան: Լավագույն քառյակում են Գերմանիան, Ավստրիան, Իսպանիան և Մեծ Բրիտանիան:

Մեր տարածաշրջանի երկրներից աչքի են ընկնում՝ Թուրքիան 46-րդ, Ռուսաստանը 63-րդ, Վրաստանը 66-րդ, Ադրբեջանը 78-րդ և Իրանը 98-րդ [92]:

Ակտիվ պետական քաղաքականության իրագործումը ոլորտի զարգացման պարտադիր պայմանն է, որը թույլ է տալիս տնտեսապես ոչ շատ զարգացած, բայց հարուստ բնական ու մշակութային ներուժ ունեցող պետություններին գրավելու առաջատար տեղեր միջազգային զբոսաշրջության շուկայում:

Այդ առումով, զբոսաշրջությունը և հանգստի կազմակերպումը, հայտարարվել է ՀՀ տնտեսության գերակա ճյուղերից մեկը և սկսած 1998թ. գտնվում է պատասխանատու գերատեսչությունների ուշադրության ներքո, ինչի հետևանքով հանրապետությունում, վերջին տարիներին նկատվում է հանգստի և զբոսաշրջության ոլորտի աճ:

Զբոսաշրջության ձևավորումը որպես տնտեսության առանձին ճյուղ ստեղծվել 1931 թ-ին՝ Հայաստանի զբոսաշրջային ընկերության կազմավորմամբ: Մինչև 1970-ական թվականները շատ քիչ ուշադրություն էր դարձվում այս ոլորտին, չնայած որ կազմակերպման, կառավարման կառույցները աստիճանաբար ընդլայնվում և կատարելագործվում էին: ԽՍՀՄ տարիներին բնականաբար զբոսաշրջությունը ոչ մի առնչություն չուներ ձեռնարկատիրության հետ և հանդես էր գալիս իբրև աշխատավորների ակտիվ հանգստի ձև: 1980-ական թթ. երկրորդ կեսին բնակչության մի ստվար մասի եկամուտները սկսեցին աճել և զբոսաշրջության ոլորտում որոշակի առաջընթաց տեղի ունեցավ:

Միջազգային զբոսաշրջության կազմակերպմամբ զբաղվում էին հիմնականում երկու կազմակերպություններ՝ «Սպուտնիկ» և «Ինտուրիստ», որոնց գործունեությունը կոորդինացվում և կառավարվում էր ՀԽՍՀ արտասահմանյան զբոսաշրջության գլխավոր վարչության կողմից: Ինչպես ԽՍՀՄ-ում, այնպես էլ Հայաստանում, զբոսաշրջությունն ուներ սոցիալական բնույթ, կազմակերպվում էր արհմիությունների կողմից պետական քաղաքականությանը համապատասխան:

Հայաստանյան զբոսաշրջության զարգացման գործակալությունը հիմնադրվել է որպես կառավարության զբոսաշրջության առաջացման միջոց 2001թ-ի հունիսին: Գործակալության հիմնական նպատակն է եղել, գործարարության ոլորտի հետ համագործակցության շրջանակներում, մեր երկիրը ներկայացնել լոկալ և միջազգային շուկաներում և մշակել այնպիսի ծրագրեր, որոնք ուղղված են Հայաստանյան

զբոսաշրջության զարգացմանը: Զբոսաշրջությունը, որպես տնտեսության ճյուղ կամ ձեռնարկատիրական գործունեության առանձին ոլորտ, մեր հանրապետությունում լրջորեն ուսումնասիրված չէ: Սակայն նախկինում կատարված հետազոտությունները և մշակումները քիչ կիրառելի են այն պարզ պատճառով, որ շուկայական հարաբերություններին անցման փուլում տեղի են ունեցել զբոսաշրջության մակրոմիջավայրի ու դրա սուբյեկտների գործունեության արմատական և որակական բազմաթիվ փոփոխություններ, իսկ այժմ մշակվող ծրագրերը հիմնվում են կամ նախկին փորձի, կամ էլ որոշակի տեղային խնդիրների լուծման անհրաժեշտության վրա: Այս իմաստով տնտեսության կառուցվածքում զբոսաշրջության տեղի ու դերի իմաստավորումը ոչ միայն զուտ գիտական, այլև գործնական կարևոր խնդիր է, իսկ զբոսաշրջության զարգացումը կարող է իր հերթին մի շարք ճյուղերի և գործունեության տեսակների զարգացման հիմք հանդիսանալ: Բացի այդ զբոսաշրջության համար նոր ենթակառուցվածքների ստեղծումը թույլ կտա հաջողությամբ լուծել պետական ու համայնքային բյուջեների համալրման, բնակչության հանգստի սահմանադրական իրավունքի ապահովման և բազմաթիվ այլ հիմնահարցեր: Ներկայումս ՀՀ կառավարությունը մշակել է մի շարք պայմանագրային նախագծեր՝ զբոսաշրջության բնագավառում համագործակցության վերաբերյալ: Ընդ որում, եթե միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքում, ապա կիրառվում են Հայաստանի միջազգային պայմանագրերի նորմերը [10]:

Վերջին տարիներին զբոսաշրջության ոլորտում համագործակցության մասին միջկառավարական համաձայնագրեր են մշակվել ու վավերացվել ՀՀ և Արաբական Միացյալ Էմիրությունների, Ուրուգվայի, Արգենտինայի, Ուկրաինայի, Բելառուսի, Եգիպտոսի, Չինաստանի, Իրանի, Պորտուգալիայի, Հնդկաստանի և ՌԴ միջև: Մուտքի արտոնագիր ստանալու համար օտարերկրյա քաղաքացիներից գանձվում է տուրք՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով: Զբոսաշրջային և դիվանագիտական մուտքի արտոնագիր տրվում է միանգամյա, իսկ տարանցիկ երկարաժամկետ մուտքի արտոնագիր նաև բազմակի գործածության համար: Արտոնագիրը կարող է

երկարաձգվել ոչ ավելի, քան երկու անգամ՝ յուրաքանչյուր դեպքում մուտքի արտոնագրի ժամկետի 1/3-ի չափով: Հարկ է նշել, որ ՀՀ և ԱՊՀ երկրների միջև արտոնագրային ռեժիմը բացակայում է, որը գովելի փաստ է: Ներկա պայմաններում որոշակի անհրաժեշտություն է առաջացել առավել մեղմել արտոնագրերի տրման տարիֆային և ընթացակարգային որոշ նորմեր: Այն ազդեցություն կունենա՝ զբոսաշրջային փաթեթի ձևավորման համար, և առավել մեծ թվով զբոսաշրջիկներ ներգրավելու առումով:

Հայաստանը, որպես զբոսաշրջության համար գրավիչ, պատմա-մշակութային և բնական ռեսուրսներով հարուստ երկիր, մեծ ներուժ ունի միջազգային զբոսաշրջային շուկային առաջարկելու բազմաբնույթ, մրցունակ զբոսաշրջային արդյունք և բարձրակարգ ծառայություններ, որի համար անհրաժեշտ է ապահովել բարձր որակավորված աշխատուժ, ավելի բարձրակարգ ենթակառուցվածքներ ու ծառայություններ:

ՀՀ կառավարությունը նշում է, որ հարյուր հազարավոր օտարերկրյա զբոսաշրջիկներ, որոնք այցելում են Հայաստանի Հանրապետություն չեն գրանցվում վիճակագրության մեջ, քանի որ նրանց սպասարկում են անհայտ տուրօպերատորներ և զբոսաշրջության ինդուստրիայի այլ անհատ տնտեսվարողներ:

Նման դեպքերը հատկապես շատ են այն պատճառով, որ ոչ բոլոր զբոսաշրջիկներն են գալիս ՀՀ տուրօպերատորների միջոցով կամ առավելագույն դեպքում նրանց սպասարկում են ոչ բարեխիղճ տուրօպերատորներ:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը ՀՀ էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի (ՀԱՄՀ), Հայաստանում դոնոր կազմակերպությունների՝ Գերմանիայի Դաշնային համագործակցության (GiZ) և ԱՄՆ ՄԶԳ Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության (Ի-Դի-Էմ-Սի) ծրագրի աջակցությամբ 2013թ.-ի հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում իրականացրել է ժամանողների և մեկնողների ընտրանքային հետազոտություն հանրապետության գրեթե բոլոր սահմանային անցման կետերում՝ «Զվարթնոց» և «Շիրակ» օդանավակայաններում, Բագրատաշենի, Բավրայի, Գոգավանի, Այրումի և

Մեղրիի սահմանային անցման կետերում: Հարցումն իրականացվել է ժամանողների և մեկնողների շրջանում՝ 15-րդ այցելուի հետ, յուրաքանչյուր ամիս 7 ամբողջական օր տևողությամբ՝ նպատակ ունենալով հարցումն անցկացնել յուրաքանչյուր ամսվա մեջ ընդգրկված շաբաթվա բոլոր օրերը և այդ պարագայում ապահովել հետազոտության 1.5%-ոց ընտրանք: Այցելուների նկարագրից երևում է, որ զբոսաշրջիկները, հիմնականում ժամանում են Ռուսաստանից, Վրաստանից, ԱՊՀ երկրներից, Իրանից, այնուհետև Արևմտյան Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի երկրներից:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ ներգնա ճանապարհորդների ճանապարհորդության միջին տևողությունը կազմել է 17.59 օր, որից ամենաերկարը արձանագրվել է կրթության նպատակով՝ 36.31 օր և այցելություն հարազատներին, ընկերներին 22.75 օր: Պետք է նշել, որ հանգստի և ժամանցի նպատակով ներգնա ճանապարհորդները Հայաստանում անցկացնում են 10,47 օր: Մի հանգամանք էլ գոյություն ունի, այն է՝ ներգնա ճանապարհորդների 71.1%-ը հանգրվանել են բարեկամի կամ հարազատի տանը, իսկ հյուրանոցային հանգրվաններին բաժին է ընկնում՝ 22.9%-ը (հավելված 1), [90]:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ արտագնա ճանապարհորդները հիմնականում նախընտրում են մնալ բարեկամի կամ հարազատի տանը, վարձով բնակարանում կամ այլ հանգրվաններում և այդ կացարաններում նրանք ամենից երկարն են մնում: Թերևս, դա պայմանավորված է նրանով, որ արտագնա ճանապարհորդների հիմնական նպատակը հարազատներին այցելությունն է, կամ էլ աշխատանքը:

Հարկ է նշել, որ հարցման արդյունքներով յուրաքանչյուր ճանապարհորդ միջինում հանգրվանում է 41.7 օր, ընդ որում ամենաերկարը աշխատանքի նպատակով՝ 124.2 օր և կրթության նպատակով՝ 61.2 օր (հավելված 2):

Այնուամենայնիվ, վերջին տարիներին ՀՀ զբոսաշրջության ոլորտը զգալի աճ է ունեցել ներգնա զբոսաշրջային այցելությունների թվի և ստացված եկամուտների առումով: Այսպիսով՝ 2009թ-ին Հայաստան են այցելել 575281 միջազգային զբոսաշրջիկներ: Ներքին զբոսաշրջությունը 2004-2013թթ-ին աճել է տարեկան միջինը

10.8%-ով: Հայաստանյան իշխանությունները ներկայացնում են զբոսաշրջության բավականին դրական ցուցանիշներ: Ըստ պաշտոնական տվյալների՝ օտարերկրյա զբոսաշրջիկների թիվը՝ 2010թ. առաջին 10 ամիսներին աճել է 15% և հասել մինչև 488000 այցելուի: 19% աճ գրանցվել է Հայաստանի քաղաքացիների շրջանակներում, որոնք ճամփորդել են այլ երկրներ: Որպես այս ամենի արդյունք՝արտագնա զբոսաշրջիկների թիվը աճել է՝ հասնելով 2010թ-ին 474600 մարդու [90]:

Ընդհանուր առմամբ՝ վերջին տարիներին արձանագրվել է համաշխարհային զբոսաշրջային այցերի միջին տարեկան 4-4.5% աճ: Այսպիսով կարող ենք նշել, որ ՀՀ-թյան զբոսաշրջությունն ունի դրական զարգացումներ, արձանագրելով թե ներգնա, և թե ներքին զբոսաշրջային այցերի թվի կայուն և դինամիկ աճով:



Նկ. 1 ՀՀ ներքին և ներգնա զբոսաշրջության աճի դինամիկան 2001-2013թթ.

Հայաստան 2012թ.-ին ժամանել է 843330 միջազգային զբոսաշրջիկ՝11.3%-ով ավելի, քան 2011թ.-ը: 2013թ.-ի հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում հանրապետություն է ժամանել 677906 զբոսաշրջիկ՝ 12.4%-ով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: Ներքին զբոսաշրջիկների թիվը 2012թ. կազմել է 514771 մարդ, 2011թ.-ի նկատմամբ աճելով 5.2%-ով: 2013թ.-ի հունվար-սեպտեմբերին ներքին զբոսաշրջիկների թիվը կազմել է 587307, որը 2012թ.-ի նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 38.2%-ով: 2000-2013թթ.-ին Հայաստան այցելած ներգնա

զբոսաշրջիկների թիվն ավելացել է ավելի քան 18 անգամ: Հիմք ընդունելով վիճակագրական այս տվյալները մեր կողմից կազմել ենք ՀՀ ներքին և ներգնա զբոսաշրջության աճի դինամիկան 2001-2013թթ.(նկ.1):

Միջազգային շուկայում հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակության բարձրացման, ՀՀ զբոսաշրջային հոսքերի շարունակական ավելացման (շուրջ 10%), գյուղական համայնքներում զբոսաշրջության զարգացման, ներքին զբոսաշրջության զարգացման և ինտեգրման նպատակով, ՀՀ էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի պետական ու մասնավոր հատվածների շահագրգիռ կողմերի համագործակցությամբ մշակվել է «Զբոսաշրջության աջակցության ծառայություններ» 2014թ. ծրագիրը [90]:

ՀՀ զբոսաշրջության զարգացման առաջնահերթ քայլերից մեկը պետք է դառնա այն տեսամեթոդական հիմնահարցերի ուսումնասիրությունը, որոնց լուծման հիմնական ուղիները պետք է լինեն գիտական և մարքեթինգային հետազոտությունները զբոսաշրջության ինդուստրիայի ոլորտում:

Ակնհայտ է որ այցելողների համար Հայաստանը պետք է ընդլայնի իր հասանելիությունը դեպի զբոսաշրջության մարքեթինգի այլ ուղիներ՝ զբոսաշրջային շուկաներից այցելուներ գրավելու նպատակով: Հայաստանի ավանդույթները, արկածային զբոսաշրջությունը և էկոտուրիզմը նշվել են որպես մեր երկիր այցելելու հիմնական պատճառներ՝ ցույց տալով որ այս երկու նիշային շուկաները կարելի է զարգացնել, ի լրումն ավանդական, բնական, պատմական և մշակութային զբոսաշրջության վայրերի հետագա զարգացման: Երկրում գտնվելու ընթացքում հայկական ծագում ունեցող այցելուները հակված են մնալ իրենց ընկերների և բարեկամների տանը, այդպիսով ավելի քիչ ծախսելով կացարանի և ռեստորանների վրա: Զբոսաշրջության տիպիկ կացարաններում, ինչպիսիք են հյուրանոցները, հյուրատները, B&B-ները, հոթելները, հատկապես հանգստի, ժամանցի, գործնական, սպորտային ու մշակութային միջոցառումներին մասնակցության նպատակներով ճանապարհորդող զբոսաշրջիկների թիվը տարեցտարի ավելանում է: Այսպիսի հաստատություններում ավելի երկար ժամանակ հանգրվանելու համար այցելուներին գրավելու նպատակով, պետք է ծառայությունների որակը պահպանել: Հարկ է

նաև նշել, որ 55 և ավելի բարձր տարիքի զբոսաշրջիկները հակված են Հայաստան այցելել իրենց արձակուրդների ընթացքում, այդ իսկ պատճառով էլ այս խմբի ծառայությունների մատուցումը կարող է ավելի շատ այցելուներ ներգրավել:

ՀՀ զբոսաշրջության զարգացումը մեծապես կանխորոշված է ոլորտի ընդհանուր ենթակառուցվածքով, որի բարելավումը պահանջում է հիմնականում պետական նախաձեռնությամբ ծրագրեր իրականացնել: Զբոսաշրջության համաշխարհային շուկայում երկրի ճանաչելիությունը որոշակիորեն աճել է և արդեն ուրվագծվում է Հայաստանի դիրքավորումը որպես մշակութային զբոսաշրջության հանգրվանի[29]: ՀՀ կառավարության կողմից ոլորտի զարգացմանը ուղղված համազգային մասշտաբով իրականացվել են մի շարք տոնակատարություններ և մասնակցություններ հեղինակավոր միջազգային ցուցահանդեսներին:

ՀՀ կառավարությունն առավել մեծ թվով զբոսաշրջիկների մեր երկիր ներգրավելու համար մշակել է նոր վիզային քաղաքականություն: Սկզբում մեր երկիր այցելուները կարող էին միայն ստանալ 120 օրյա վիզա՝ մոտավորապես դրա համար վճարելով 40 ԱՄՆ դոլար:

Նոր քաղաքականության էությունն այն է, որ 21-օրյա վիզան կարող է տրվել Երևանի օդանավակայանում ժամանման ընթացքում՝ վճարելով 3000 դրամ կամ 8 ԱՄՆ դոլար [90]:

Կառավարության մշակած ծրագրերը ուղղված են լոկալ զբոսաշրջության զարգացմանը, այն հայտարարվել է տնտեսության զարգացման առաջանային ոլորտ: Շնորհիվ ՀՀ-ում տարվող պետական քաղաքականության, պետություն-մասնավոր հատված և սփյուռքի հետ համագործակցության՝ վերջին տարիներին զբոսաշրջության բնագավառում արձանագրվել է թե՝ քանակական, և թե՝ որակական աճ: Այդ մասին են վկայում վերջին տարիներին կատարված շարունակական այն գործընթացները, որոնք ուղղված են զբոսաշրջության ոլորտի օրենսդրական, հարկային զարգացումներին: Սյունիքի մարզը կանխատեսումների համաձայն զբոսաշրջության ոլորտում ամեն տարի կարող է ընդունել և սպասարկել մոտ 6000 և ավելի զբոսաշրջիկ: Եթե մեկ զբոսաշրջիկի սպասարկման համար միջին եկամուտը ընդունենք 200-250 ԱՄՆ դոլար

(5-6 օրյա ուղևոր), ապա զբոսաշրջային կազմակերպությունները կարող են ստանալ ընդհանուր առմամբ 1,0-1,3 մլն. ԱՄՆ դոլարի եկամուտ [36]: Մեր կարծիքով Սյունիքի մարզում զբոսաշրջային այցելությունները ավելի մեծ ցուցանիշների կարող է հասնել մոտակա տարիներին: Զբոսաշրջության ոլորտի առանձնահատկությունները և զարգացման ռազմավարությունը ներկայացված է (աղյուսակ 1-ում):

Աղյուսակ 1

Զբոսաշրջության առանձնահատկությունները և զարգացման ռազմավարությունը [36]:

Գործառնական առանձնահատկությունները	Զարգացման ռազմավարությունը
Զբոսաշրջային սպառման ծառայությունների տարածքային բաժանում	Տեղերի ամրագրում, նախնական պատվեր, փաթեթի արդյունավետ օգտագործում
Ճյուղի բազմատարությունը և զբոսաշրջային կառուցվածքի տարանջատում	Համագործակցություն, ծառայություններ իրականացող կազմակերպությունների միջև
Կայուն առաջարկ և պահանջարկ	Գովազդ
Զբոսաշրջային ռեսուրսների սպառողական արժեքի տարբերություն	Սպասարկման անհրաժեշտ մատուցվող լայն ծառայություններ
Զբոսաշրջային ծառայությունների պահանջարկի սեզոնայնություն	Գների սեզոնային տարբերակում, սեզոնային սակագների սահմանում
Զբոսաշրջային արտադրանք և ծառայություններ մատուցողների և սպառողների կողմից տարբեր պատկերացումներ	Կլաստերային ռազմավարության ներդրումը զբոսաշրջության ոլորտի զարգացման համար
Զբոսաշրջային ծառայությունների պահանջարկի ճկունություն	Ճկուն գնային քաղաքականություն, որը փոփոխվում է պահանջարկի հետ
Զբոսաշրջային ծառայությունների որակի ապահովում	Մասնագիտացում և սպասարկում
Ռեսուրսների օգտագործում, որոնք անհրաժեշտ են տնտեսության այլ ճյուղերի զարգացման համար	Համակարգված պլանավորում, զբոսաշրջային քաղաքականության մշակում՝ հաշվի առնելով նպատակային սկզբունքներ
Առք ու վաճառքի օգտագործման համապատասխանությունը	Երաշխիքային սպասարկում, զբոսաշրջային տարածքի դրական իմիջի պահպանում
Արտահանում, որն իրականացնում է երկիրը	Համաշխարհային զբոսաշրջային շուկայի կառուցվածքի ուսումնասիրում, երկիրը՝ որպես զբոսաշրջային մարզի դիրքավորում
Զբոսաշրջիկների և տեղի բնակչության տնտեսական դիրքի էական տարբերություն	Tax-free համակարգի ներդրումը, գնային քաղաքականության վերահսկողություն
Զբոսաշրջության ոլորտի աշխատատարություն	Աշխատուժի օգտագործման օպտիմալացում, կադրերի որակավորման բարձրացում
Ծառայությունների ապրանքի անշոշափելություն, արտադրության և սպառման միջև անբաժանելիություն, պահպանման անհնարինություն	Ծառայությունների որակի և ապահովության երաշխիք, ծառայությունների մատուցում պահանջվող մակարդակով, ծառայությունների փաթեթի իրացման ժամանակակից ռազմավարություն

Հայաստանի զբոսաշրջային արդյունքի խթանման համար նպատակային երկրներն ընտրվում են վիճակագրական տվյալների ուսումնասիրության հիման վրա: Ուսումնասիրությունները վկայում են, որ տարեցտարի ավելանում է Եվրոպական երկրների հետաքրքրությունը Հայաստանի՝ որպես զբոսաշրջային երկրի նկատմամբ: Ներգնա զբոսաշրջության թվային տվյալներն ըստ աշխարհագրական բաշխվածության կառուցվածքի և այցելության հիմնական նպատակի՝ բերված է հավելված 3-ում, իսկ արտագնա զբոսաշրջիկներինը՝ հավելված 4-ում:

Զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության նպատակները սահմանված են «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքով և «Զբոսաշրջության զարգացման» հայեցակարգով:

2015թ.-ին Հայաստանի զբոսաշրջային արդյունքն ազգային մակարդակով ներկայացվել է մի շարք միջազգային ցուցահանդեսներում, տոնավաճառներում և համաժողովներում: 2015թ.-ին նախատեսվում է նպատակային շուկա համարվող մի շարք երկրներից լրագրողների ճանաչողական այցերի կազմակերպում, որի հիմնական նպատակը հայկական մշակույթի, սովորույթների, պատմական ժառանգության և զբոսաշրջիկներին պատշաճ ներկայացնելն է, որը հետագայում օտարերկրյա լրագրողը կներկայացնի իր երկրում հրատարակվող թերթերում և ամսագրերում [90]:

Ծրագրի իրականացումը կնպաստի 2015թ.-ին, 2014թ.-ի համեմատ, Հայաստան զբոսաշրջային այցերի 10% աճին, համայնքներում զբոսաշրջության զարգացմանը և զբոսաշրջության զարգացման ասպարեզում միջազգային համագործակցության ակտիվացմանը: Ծրագրային այս միջոցառումն իրականացվելու է ՀՀ պետական բյուջեի և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների ֆինանսավորմամբ [89]:

Այսպիսով, կարելի է հաստատել, որ ՀՀ կառավարությունը որդեգրել է զբոսաշրջության համալիր զարգացման քաղաքականություն, այդ նպատակով իրականացվել են օրենսդրական փոփոխություններ և մարքեթինգային ուսումնասիրություններ, որոնց նպատակն է համալիր կերպով զարգացնել զբոսաշրջային ինդուստրիան:

Գլուխ 1-ում քննարկված տեսամեթոդական մոտեցումները հիմնականում վերաբերվում են ընդհանուր զբոսաշրջության տեսությանը: Մեր կողմից փորձ է արվել լեռնային փոքր տարածքի՝ Սյունիքի մարզի օրինակով ցույց տալ այն զարգացման դինամիկան, որը կնպաստի տարածաշրջանի զբոսաշրջության ոլորտի զարգացմանը: Սյունիքի մարզի զբոսաշրջության վերլուծության ժամանակ օգտագործվել է աշխարհագրական հետազոտության համար հիմք հանդիսացող մեթոդներն ու մոտեցումները: Աշխատանքում դիտարկվել են համակարգային, կլաստերային, հիմնախնդրային վերլուծության ու քարտեզագրական մեթոդները: Համակարգային մեթոդի միջոցով մարզի տարածքը դիտարկվում է որպես մի ամբողջական միավոր: Կլաստերային մոտեցման շնորհիվ վեր է հանվել Սյունիքի մարզի վարչական միավորների զբոսաշրջային ռեսուրսները, որոնք կնպաստեն մարզի տարածքում զբոսաշրջության հետագա կազմակերպման համար:

Գլուխ 2. ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Զբոսաշրջային ռեսուրսների ներուժի բնութագիր

Զբոսաշրջությունը հասարակության մեջ շատ գործառույթներ է կատարում և ընդգրկում է բնակչության բոլոր տարիքային ու մասնագիտական խմբերը: Այս ոլորտի բազմաֆունկցիոնալությունն արտահայտվում է նրանով, որ այն նպաստում է անհատի ֆիզիկական, գեղագիտական, հոգեբանական և այլ որակների ձևավորմանը: Զբոսաշրջության զարգացման անհրաժեշտությունն առաջ է բերում բնության պահպանության և բնական ռեսուրսների հանրային հասանելության հետ կապված խնդիրներ: Գիտական տեսանկյունից այս խնդիրների լուծումն առաջին հերթին կապված է բնական համակարգերի զբոսաշրջության ներուժ հասկացության հետ: Գործնական տեսանկյունից զբոսաշրջության պլանավորման, նախագծման և բնական օբյեկտների շահագործման հիմքում ընկած է դրանց ռեսուրսների գնահատման համակարգային մոտեցման կիրառումը, որի ժամանակ պետք է հաշվի առնել հետևյալ հայեցակետերը՝ եզակիությունը, հասանելիությունը, տարածաշրջանում դրանց տարածական խտությունը, բազմազանությունը, համալիրությունը և օբյեկտների առկա վիճակը [58, 69]:

Զբոսաշրջային ներուժի որոշումը, համարվում է Սյունիքի մարզում հանգստի և զբոսաշրջության կազմակերպման ժամանակակից խոշորագույն հիմնախնդիրներից մեկը: Զբոսաշրջային համակարգի գործունեության համար կարևոր և առաջնային նշանակություն ունի Սյունիքի մարզի բնա-մարդածին տարածքային համալիրը, որը բնութագրվում է բնական և բժշկական աշխարհագրության ցուցանիշների օգնությամբ և այդ ցուցանիշների օրական, տարեկան ու տարիների բազմամյա շարժընթացներով:

Դրանց յուրահատուկ բնութագիրը, որպես զբոսաշրջային համակարգի հիմնական մասի, հանդես է գալիս «տարողունակություն», «կայունություն» և «հուսալիություն» կատեգորիաներով [72]:

Ցանկացած տարածքի զբոսաշրջային համակարգի գործառույթը որոշվում է բնական համալիրի ամբողջականությամբ, կայունությամբ և հուսալիությամբ: Բնական համալիրը, ինչպես և բոլոր բարդ ինքնակարգավորվող համակարգերը, տիրապետում

են ինչպես բնական, այնպես և «կուլտուրականացված» կայուն վիճակին, այսինքը կարող են հակազդել արտաքին, այդ թվում մարդածին վնասակար ազդեցություններին մինչև որոշակի սահմանը: Թույլատրելի սահմանը անցնելու դեպքում, նկատվում է բնական համալիրի հավասարակշռության խախտում:

Այստեղից հետևում է, որ կայունությունը դա հարաբերական է, ծանրաբեռնվածության թույլատրելի սահմանը բնական համալիրների առանձնահատկությամբ պայմանավորված տարբեր է: Զբոսաշրջային ծանրաբեռնվածության գնահատման ժամանակ դիտարկվում է միայն բնական համալիրի և ռեկրեացիոն օբյեկտների դիմացկունությունը, իսկ տարողունակության գնահատման դեպքում հաշվի է առնվում նաև հարմարավետության աստիճանը: Տարածաշրջանի վրա ռեկրեցիոն ծանրաբեռնվածության լավագույն մակարդակը որոշվում է զբոսաշրջային ռեսուրսների օգտագործման բնույթով և բնական միջավայրի հավասարակշռության պահպանությամբ: Յուրաքանչյուր բնական համալիր աչքի է ընկնում զբոսաշրջային տարողունակության թույլատրելի մեծությամբ [43]:

Սյունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավ արևելքում, գրավում է 4 506քառ.կմ տարածք, որը կազմում է հանրապետության ընդհանուր տարածքի 15%-ը (նկ. 2):

Սյունիքի մարզը բավականաչափ հարուստ է զբոսաշրջային ռեսուրսներով, որը պայմանավորված է աշխարհագրական դիրքով, լանդշաֆտների բազմատիպությամբ, կենսաբազմազանությամբ, կլիմայաբուժական բարենպաստ պայմաններով, հանքային ջրերի, բնական և պատմական հուշարձաններով: Այդ ռեսուրսները կարևոր նշանակություն ունեն մարզի սոցիալ տնտեսական զարգացման գործում:

Սյունիքի մարզի զբոսաշրջային ռեսուրսներն առանձնանում են.

- բնական պաշարների հարուստ բազմազանությամբ,
- ինքնատիպությամբ և առողջարարական նշանակության բարձր արժեքներով,
- տարատեսակ ռեսուրսների տարածքային բաշխվածության մեծ խտությամբ,
- պատմամշակութային հուշարձանների ներդաշնակ զուգորդմամբ,
- բնական հուշարձանների լայն տարածումը:

Նկ. 2 Սյունիքի մարզի ակնարկային քարտեզ [26]

Զբոսաշրջության զարգացման անհրաժեշտ պայմանը ցանկացած տարածքում զբոսաշրջային ներուժն է: Տարածքի զբոսաշրջային ներուժի մեջ մտնում են բնական, պատմամշակութային և սոցիալ-տնտեսական նախադրյալների ամբողջությունը, որոնք անհրաժեշտ են որևէ տարածքում զբոսաշրջային գործունեություն իրականացնելու համար [58,60,69]: Շատ հաճախ զբոսաշրջային ներուժի տակ հասկացվում է տվյալ տարածքում որոշակի բացառիկ կամ ծայրահեղ դեպքում ոչ միայն տեղացիների համար հետաքրքիր օբյեկտների առկայությունը: Չնայած որ դա պարտադիր պայման չէ, այլ միայն ցանկալի: Տարածքի զբոսաշրջային ներուժն իր մեջ ներառում է զբոսաշրջային ռեսուրսները և զբոսաշրջային ենթակառուցվածքը: Առաջինը բաժանվում է երեք հիմնական խմբերի՝ բնական, պատմամշակութային և սոցիալ-տնտեսական: Սոցիալ-

տնտեսական ռեսուրսներն ունեն երկակի բնույթ, որոնց պատկանում են զբոսաշրջային ենթակառուցվածքի տարրերը, ինչպես նաև աշխատանքային, տեղեկատվական, նյութատեխնիկական, ֆինանսական ռեսուրսները և կառավարման տարրերը:



Նկ. 3 Տարածքի զբոսաշրջային ներուժի կառուցվածքը [69]

Ա.Ս. Կուսկովի կարծիքով տարածքի զբոսաշրջային ներուժի մեջ միավորվում են զբոսաշրջային ռեսուրսները, զբոսաշրջային ինդուստրիան և զբոսաշրջային ենթակառուցվածքը (նկ. 3):

Մասնագետների կողմից օգտագործվում է նաև «զբոսաշրջային ռեկրեացիոն ռեսուրսներ», հասկացությունը, որի մեջ են դասվում տարածաշրջանի բնակլիմայական, սոցիալ-մշակութային, պատմական, գիտա-արդյունաբերական, հնէագիտական, ճարտարապետական, տեսարանային, պաշտամունքային և այլ օբյեկտներն ու երևույթները: Վերջիններս հնարավորություն են տալիս բավարարել մարդու պահանջմունքները զբոսաշրջային գործընթացում, ստեղծում են տնտեսական և նյութական հիմք զբոսաշրջության զարգացման համար:

Զբոսաշրջության ռեսուրսները՝ բնական, մարդածին օբյեկտների ամբողջությունն են, որոնք պիտանի են զբոսաշրջային ապրանքի ստեղծման համար: Որպես կանոն հենց այդ ռեսուրսներն են կանխորոշում այս կամ այն տարածաշրջանում զբոսաշրջային

բիզնեսի ձևավորմանը: Մասնագիտական գրականության մեջ առանձնացնում են տարածքի զբոսաշրջային ներուժի գնահատման երեք հիմնական ձևեր [43]:

1. տեխնոլոգիական,
2. բժշկակենսաբանական,
3. հոգեբանական-գեղագիտական:

Տեխնոլոգիական գնահատականը արտացոլում է մարդու և բնական միջավայրի փոխգործունեությունը՝ տեխնոլոգիայի միջոցով: Այստեղ առանձնացվում են 2 կողմեր. մի կողմից արտահայտվում է զբոսաշրջային գործունեության առանձին ձևերի և ողջ համակարգի կազմակերպման համար ռեսուրսների օգտակարությունը, իսկ մյուս կողմից՝ տարածքի ինժեներաշինարարական յուրացման հնարավորությունները: Տվյալ դեպքում որպես գնահատման ընդհանրական օբյեկտ հանդես է գալիս զբոսաշրջության ինդուստրիան:

Զբոսաշրջության ճյուղի տեսանկյունից ռեսուրսը պետք է ունենա բարձր որակական հատկանիշներ (հարմարավետություն, վերականգնողական հատկանիշներ և այլն), որոնք անհրաժեշտ և բավարար են բնակչության որոշակի խմբերին, տուրիզմի և հանգստի կազմակերպման համար:

Բժշկակենսաբանական գնահատման ձևը իրենից ներկայացնում է՝ թե ինչպես են շրջակա միջավայրի գործոնները ազդում մարդու ֆիզիոլոգիայի և հոգեբանության վրա (ամենից առաջ դրանց հարմարավետությունը):

Աշխարհագրական գիտությունում ամենաշատ տարածում են գտել կլիմայական եղանակային գործոնների և պայմանների գնահատականը զբոսաշրջային ռեկրեացիոն գործունեության համար (օրինակ խոնավություն, տեղումների քանակ և ճնշում): Այսպիսի գնահատումների ժամանակ ուշադրության կենտրոնում են մարդու հոգեվիճակը և օրգանիզմի վիճակը (ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ զգացողություններով) [58,69]:

Գնահատականի հիմնական նպատակն է այս կամ այն տեսակի զբոսաշրջության համար մարդու օրգանիզմի համար հարմարավետ կլիմայական և եղանակային պայմանների աշխարհագրական գործոնների հայտնաբերումը:

Հոգեբանական գեղագիտական գնահատման դեպքում արտացոլվում է մարդու էմոցիոնալ զգացական ազդեցությունը լանդշաֆտների կամ դրանց առանձին տարրերի վրա: Այսօր բնության գեղեցկությունը դարձել է բնական-գեղագիտական սպառվող ռեսուրս և որպեսզի այն ռացիոնալ օգտագործվի, կարևոր է իմանալ, թե ինչ է այն իրենից ներկայացնում և ինչպես գնահատել [16]:

Այժմ զբոսաշրջության մեջ կարևորվում են նաև շրջակա միջավայրի, կենսաբազմազանության վերականգման պահպանությունները: Էկոլոգիական հետաքրքրությունն ու անաղարտությունն այսօր դարձել են զբոսաշրջային հոսքեր ներգրավելու հզոր միջոց: Բարեբախտաբար ՀՀ կառավարությունը ուշադրության կենտրոնում է պահում հանրապետության տարածքում բնապահպանության արդի խնդիրները:

2. 2. Բնական ռեսուրսներ

Սյունիքի մարզի բնական ռեսուրսներից հանգստի և զբոսաշրջության զարգացման համար իրենց բարենպաստությամբ մեծ դեր են խաղում.

- Ռելիեֆի երկրաձևաչափական առանձնացումները,
- կլիմայական ռեսուրսները,
- ջրային ռեսուրսները, այդ թվում հանքային աղբյուրները,
- կենսաբազմազանությունը,
- լանդշաֆտների վերընթաց գոտիականությունը,
- բնության հուշարձանները:

<u>Ռելիեֆի երկրաձևաչափական առանձնացումները</u>:

Աշխարհագրական հետազոտության մեջ զբոսաշրջային ռեսուրսների համար կարևորվում է ռելիեֆի նշանակությունը: Ինչպես նշում է Ն.Ս.Միրոնենկոն ռելիեֆը հայրենագետի համար հասցեի նման մի գիրք է, այն մեծ դեր ունի բնակչության տարաբնակեցման և տնտեսական զարգացում ապահովելու գործում [72]:

Ռելիեֆը ընդհանուր առմամբ իրենից ներկայացնում է մի բնական ռեսուրս, որը միշտ օգտագործվել է ինչպես անցյալում, ներկայում և կոգտագործվի ապագայում: Այսօր լեռնային ռեկրեացիոն զոնաները մրցակցում են ծովափերի հետ, որոշ դեպքերում

նույնիսկ գերազանցում են նրանց: Այն նպաստում է նյութական հարստության ստեղծման, աշխատանքային ռեսուրսների վերարտադրության և դրանով իսկ նպաստում է մարդկության գոյության և կյանքի որակի բարելավմանը [64]:

Պետք է նշել որ զբոսաշրջության տեսանկյունից ռելիեֆը հանդես է գալիս մի դեպքում որպես պայման, մյուս դեպքում որպես ռեսուրս:

Սյունիքի մարզի տարածքի մակերևույթը որպես պայման աչքի է ընկնում ռելիեֆի բազմազան ձևերով, ինչպիսիք են լեռնագագաթները, կիրճերը, հովիտները և սարահարթեր: ՀՀ-ի առավել մասնատված շրջաններից է, հարավային գոտին կազմված է գետահովիտներով խիստ կտրտված ծալքաբեկորային լեռնաշղթաներից և Սյունիքի հրաբխային սարահարթից:

Տարածքում ըստ հորիզոնական մասնատվածության առանձնացվում են՝ չմասնատված-21,%, թույլ մասնատված-5,3%, միջին-14,1%, ուժեղ-53,5% և խիստ մասնատված-6,1% մակերևույթ ունեցող տեղանքները: Բնութագրվող տարածքը ունի խորը մասնատվածություն [34]: Կան այնպիսի տեղամասեր, որոնք մասնատված են մինչև 700 մետր և ավելի խորությամբ: Լեռնային երկրների ռելիեֆի ամենաբնորոշ և առավել տարածված տարրը լեռնալանջերն են, որոնք տարբերվում են իրենց ձևերով՝ (ուղիղ, աստիճանաձև, գոգավոր, ուռուցիկ, քարափային) [15]:

Վերը նշված առանձնահատկություններից ելնելով և հիմք ընդունելով Բ.Բ. Խրաբովչենկոյի կողմից տրված տեսությունը [81], մեր կողմից գնահատվել են Սյունիքի մարզի տարածքում մի շարք լեռների դիրքադրությունը, տրվել է երթուղու ուղղությունը և որոշվել է դժվարության աստիճանը (հավելված 5): Լանջերի դիրքադրությունից ելնելով՝ կարելի իրականացնել հարմար վերելքներ, որը, մարզի տարածքում կնպաստի էքստրեմալ տուրիզմի մասնավորապես ալպինիզմի և էկոզբոսաշրջության զարգացմանը (նկ. 4):

Ռելիեֆի դերը զբոսաշրջության զարգացման մեջ ունի հիմնականում երկու ուղղվածություն՝ առողջարարական և սպորտային: Առողջարարական զբոսաշրջության ժամանակ հաշվի են առնում մինչև առավելագույնը ծովի մակարդակից 3000 մետր լեռնային շրջանները:



Նկ. 4 Սյունիքի մարզի ռելիեֆի հորիզոնական մասնատվածությունը [34]

Սյունիքի տարածքի ռելիեֆի երկրաբանական բարդ կառուցվածքը, մակերևույթի խիստ մասնատվածությունը, ապարաշերտագրական խայտաբղետությունը և բնական լանդշաֆտների զարգացման պատմությունը օբյեկտիվ պայմաններ են ստեղծվել բնական բազմազան հուշարձանների առաջացման համար: Սյունիքի մարզը իրավամբ կարելի է համարել բնական հուշարձանների թանգարան (նկ. 5):

Սյունիքի մարզում մեծ հետաքրքրություն են ներկայացնում հրաբխային լավային հոսքերը, որոնք զբաղեցնում են տարածքի շուրջ 1/4 մասը:

Բազմաթիվ լավային հոսքերում հանդիպում են բազալտների ու անդեզիտաբազալտների զանգվածներ, որոնք աչքի են ընկնում յուրահատուկ կազմվածքով:



Նկ. 5 Սյունիքի մարզի բնական հուշարձանները [35]

Պայմանական նշաններ

1. Արգելավայրեր 2. Արգելոցներ 3. Նոսր անտառների և մարգագետիններ

Բնական հուշարձաններ

4. Աչքի ընկնող երկրաբանական մերկացումներ 5. Հրաբխային կոներ և խառնարաններ 6. Ժայռային բուրգեր 7. Կարստային (սատանի) կամուրջ 8. Քարային ծով (սչինգիլներ) 9. Ժայռապատկերներ 10. Կիրճեր, գեղատեսիլ կանյոններ 11. Ջրվեժներ 12. Հանքային աղբյուրներ 13. Քարանձավային բնակավայրեր

Գոյացել են սյունաձև բազալտային, անդեզիտաբազալտային գոյացություններ, որոնք լինում են սովորաբար վեցանկյուն հնգանկյուն հատույթներով, դրանցից հայտնի են Որոտանի կիրճում՝ Որոտան գյուղի շրջակայքը [6]:

Հողմնահարման պրոցեսներից առաջացած ռելիեֆի ձևերը ոչ պակաս դիտարժան են համարվում: Գորիս քաղաքի մոտակայքում հողմահարման հետևանքով առաջացել է բնական թունել, որով անցնում է Երևան-Մեղրի խճուղին: Սյունիքի մարզկենտրոն Կապան քաղաքից 25կմ դեպի հարավ Շիկահողի արգելոցի ճանապարհին, գտնվում է գեղատեսիլ բնական հուշարձան, որոնք նմանվում են փղերի [14]:

Եզակի օրինակ է համարվում Գորիս քաղաքի տարածքում գտնվող քարային բուրգերը, որոնք առաջացել են արտաքին ուժերի հողմնահարման շնորհիվ:

Շրջակայքում կան բնական և անթրոպոգեն քարանձավներ, որտեղ ոչ հեռու անցյալում բնակվել են մարդիկ: Քարանձավ բնակատեղիներ կան նաև Հայաստանի այլ շրջաններում, սակայն Սյունիքի մարզը աչքի է ընկնում մի առանձնահատկությամբ, որ այստեղ բնակելի քարայրների թիվը անցնում է հազարից՝ միայն Խնձորեսկ, Տեղ, Քարաշեն և այլ գյուղերի տարածքում: Բազմաթիվ քարայրեր կան Գորիս գետի ձախափնյա վտակների կիրճերում (Խնձորեսկ), Որոտան գետի ափերին (Հալիձոր, Խոտ, Շինուհայր) [41]: Անկասկած զբոսաշրջության տեսակետից քարայրերի առկայությունը՝ մարզում կնպաստեն հետիոտն երթուղիների զարգացմանը: Հին Խնձորեսկի ողջ տարածքն իր բազմաշերտ պատմա-մշակութային շինություններով կվերածվի բացօթյա թանգարանի, որը կարող է դառնալ մարզի համար զբոսաշրջության ակտիվ կենտրոններից մեկը: Մարզի կիրճերից հայտնի են՝Որոտանի, Ողջիի, Գորիսի գետահովիտները: Որոտանի հովտում գետը հոսում է հրաբխային ապարների միջով և Սպանդարյանի, Շամբի ջրամբարներից ցած առաջացրել է խորը կիրճեր: Առանձնապես ուշագրավ տարածքով աչքի է ընկնում Որոտանի ստորին հոսանքը, որը սկսվում է Ույծ գյուղից մինչև ԼՂՀ-ի հետ ՀՀ սահմանն ընկած հատվածը: Սա համարվում է հանրապետության տարածքի ամենախոր կանիոնը, որի խորությունը «Սատանի» կամրջի հատվածում հասնում է 700մ-ի:

«Սատանի» կամուրջը համարվում է բնության անձեռակերտ հուշարձաններից մեկը: Այն առաջացել է մոտակայքում բխող տաք հանքային աղբյուրներից անջատված ածխաթթվային կալցիումի նստվածքներից (տրավերտիններից) և տաք հանքային ջրերից: Տրավերտինների կուտակումները գոյացել են գետի երկու ափերին կազմելով բնական կամարաձև կամուրջ [6]:

Երկրաբանական կառուցվածքի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պարզելու տարբեր ժամանակաշրջաններում ձևավորված, տարբեր խորության ապարաշերտերի կառուցվածքը, բաղադրությունը, որոնք էլ անմիջականորեն ազդում են մարդու առողջության վրա:

Բնական միջավայրի բոլոր տարրերը մարդու առողջական վիճակի վրա ունեն մեծ ազդեցություն, որոնց թվին են դասվում տարածքի երկրաբանական կառուցվածքը, ռելիեֆը և կլիմայի ազդեցությունը:

1. Տարածքի երկրաբանական կառուցվածքի և բնակչության առողջության միջև գոյություն ունի սերտ կապ: Սյունիքի մարզում երկրաբանական բարդ կառուցվածքի և բազմազանության պատճառով ձևավորվել է բարդ ռելիեֆ: Քիմիական տարրերի տարբեր քանակությունը, մի դեպքում ավելցուկը կամ պակասը առաջ են բերում տարբեր հիվանդություններ՝ օրինակ էնդեմիկ խպիպ, ֆլյուրոզ [17]:

Ըստ Ա.Ա. Ասմանգուլյանի Սյունիքի մարզի հողերում յոդի պարունակությունը փոքր է՝ 2.5մգ/կգ-ում, որը բացատրվում է տարածքի երկրաբանական կառուցվածքով՝ ապարների բաղադրության մեջ յոդն ունի խիստ փոքր բաժին, իսկ ջրերի, հողի մեջ այն մտնում է օվկիանոսից գոլորշիացած ջրից առաջացած մթնոլորտային տեղումների հաշվին:

Ա.Պ.Վինոգրադովը հաստատում է, որ համաշխարհային օվկիանոսում են գտնվում յոդի գլխավոր պաշարները, իսկ մթնոլորտը հանդիսանում է գլխավոր փոխադրողը: Սակայն հողերի մեջ նրանց մուտքը հիմնականում հանդես է գալիս հրաբուխների ծխից: Հրաբխային ծուխն ունի տենդենց կուտակվելու հումուսային հողի շերտերում, այդ իսկ պատճառով հումուսով հարուստ հողերը ավելի շատ յոդ են պարունակում, քան մնացած տիպի հողերը:

Զոբի առաջացման հիմնական պատճառը մեր հանրապետությունում կապված է շրջակա միջավայրում հիմնականում խմելու ջրում յոդի անբավարար քանակից: Ուսումնասիրություններից պարզվել է, որ մի շարք բանջարեղենների մեջ պարունակվում է բավականին քանակությամբ յոդ քան ջրերում:

Մ.Ս.Ստեփանյանի ուսումնասիրություններից պարզվել է, որ Սյունիքի մարզում վահանաձև գեղձի հիվանդությունները փոքրագույն արժեքով գրանցվել են Սիսիանի շրջանում՝ 0.7% և առավելագույն արժեքով Մեղրի շրջանում՝ 20.2%: Տարածաշրջանն աչքի է ընկնում բաց մոխրագույն և մոխրագույն հողերով, որտեղ յոդի պարունակությունը ամենացածրն է՝ 0.45-2.15 մգ/կգ: Ինչ վերբերվում է Սյունիքի մարզի Որոտան-Մեղրի գետերին, դիտարկվել են 134 նմուշներ: Արդյունքում յոդի միջին քանակը ջրային միջավայրում կազմել է 3.1մլ/լ: Համեմատաբար յոդի մեծ քանակը գրանցվել է դարձյալ Սիսիանի շրջանի ջրային միջավայրում՝ 4.35(1.1-8.5)մլ/լ: Մի քանի անգամ յոդի մակարդակը ցածր է գրանցվել Մեղրի գետում՝ 2.20մլ/լ [79]:

Մի շարք օգտակար հանածոների շահագործման և բնակավայրերին մոտ գտնվելու պատճառով, էկոլոգիական վիճակը գնալով վատթարանում է՝ աղտոտվում է մթնոլորտային օդը, ջուրը, հողը, բուսականությունը և կենդանական աշխարհը: Սյունիքի մարզի ամենաաղտոտված գետը Ողջին է, մասամբ՝ Գորիսը, Որոտանը և Մեղրին: Ողջին մինչև Քաջարան քաղաքը խմելու համար պիտանի է համարվում: Գետի ջրի մաքրությունը պահպանելու նպատակով կառուցվել է 30մլն.մ³ տարողությամբ հանքանյութի մնացուկների պոչամբար, որտեղ կուտակվում են Քաջարանի պղնձա-մոլիբդենային թափոնները:

Սակայն այս ամբարներն ամբողջությամբ չեն կարող պահպանել գետի ջրերը աղտոտումից, երբեմն մթնոլորտային տեղումներից հետո նրանք կարող են թափանցել գետի ջրերի մեջ վերջին հաշվով վնաս պատճառելով մարդկանց: Գետերի ջրերը աղտոտումից պահպանելու համար կարևոր նշանակություն ունի արտադրության տեխնոլոգիայի կատարելագործումը, որի շնորհիվ տարածքում թափոնները կհասցվեն նվազագույնի: Ըստ ՀՀ Բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոնի» 2007թ. տվյալների՝ Ողջի գետի ջրերի որակը լուրջ փոփոխություններ չի կրել [90]:

2. Տարածքի ռելիեֆը մարդու վրա թողնում է իր ազդեցությունը: Դա մարդկանց առողջության, կյանքի և գործունեության համար շրջակա միջավայրի անբարենպաստ լինելու փաստն է [17]:

Ըստ Ա.Ա. Ասմանգուլյանի ուսումնասիրությունների՝ շրջակա միջավայրի անբարենպաստ վիճակը բացասաբար է անդրադառնում սիրտ-անոթային, նյարդային և ալերգիկ բնույթի հիվանդություններով տառապող հիվանդ բնակչության վրա: Կարող են նկատվել զգալի ֆիզիոլոգիական տեղաշարժեր, որոնցից են՝սրտի զարկերի հաճախացում և գլխապտույտ մինչև 2000մ բարձրությունների վրա: Առողջ մարդկանց մոտ թթվածնային անբավարարության երևույթները դրսևորվում են 3000մ բարձրության վրա, որտեղ զարգանում է լեռնային հիվանդություն, որը առաջին հերթին ազդում է կենտրոնական նյարդային համակարգի վրա առաջ բերելով գլխապտույտ, սրտի զարկերի հաճախացում: Լեռնաբնակները հարմարվել են թթվածնի ցածր պարցիալ

ճնշմանը, որոնց հատկությունները փոխանցվում են ժառանգաբար: Հեմոգլոբինի և էրիտրոցիտների պարունակության տեսակետից լեռնաբնակները չեն տարբերվում հարթավայրերում բնակվողներից [4]:

Կլիմայական զբոսաշրջային ռեսուրսներ: Կլիմայական զբոսաշրջային ռեսուրսները այն կլիմայական պայմանների ամբողջությունն է, որոնք նպաստավոր են հանգստի տարբեր ձևերի կազմակերպման համար:

Կլիմայական պայմանները բաժանվում են հետևյալ խմբերի՝ բարենպաստ, համեմատաբար բարենպաստ, որի դեպքում հանգստի որոշակի տեսակներում հնարավոր են սահմանափակումներ, անբարենպաստ, երբ հանգստի որոշակի տեսակներ արգելվում են [58,68]:

Սակայն պետք է հաշվի առնել այն փաստը, որ բարենպաստ կլիմայական պայմանները հարաբերական են:

Կլիմայի հասկացության մեջ կարևորվում է բազմամյա եղանակային ռեժիմը: Կլիմայական ռեսուրսների համար կլիմայագետները խորհուրդ են տալիս մի շարք գնահատման մեթոդներ, որոնցից հայտնի են ա)կլիմայի հարմարավետությունը, բ) անհարմարավետությունը, գ) կլիմայի սեզոնայնության հիմնախնդիրը [48]:

Երկար ժամանակ հետազոտողներն իրենց ուշադրությունը սևեռում էին, թե եղանակային տարրերն ինչ ազդեցություն են թողնում մարդկանց վրա: Գործընթացի արդյունքում մշակվել է չափագրման նոր մեթոդներ, որոնցից ամենահայտնին ջերմաստիճանների էֆֆեկտիվությունն է: Դրանում առկա են՝ օդի ջերմաստիճանը, հարաբերական խոնավությունը, քամու արագությունը, արեգակնային ճառագայթումը և երկարալիքային ճառագայթումը: Ջերմաստիճանների և հարաբերական խոնավության միջև փոխազդեցությունը բնութագրվում են որպես էֆֆեկտիվ ջերմաստիճան (ԷՋ): Ջերմաստիճանները, հարաբերական խոնավությունը և քամու արագությունը համարժեք են էֆֆեկտիվ ջերմաստիճանին (ԷԷՋ):

Գոյություն ունի պայմանական ջերմաստիճանների «հարմարավետության զոնա» հասկացություն, որը մեծ մասամբ մարդկանց համար բարենպաստ է համարվում 17-23°-ը (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Մարդու համար հարմարավետության կլիմայական պայմանները [72]

Ջերմաստիճան, C°	Հարաբերական խոնավություն, %
20	85
25	60
30	44
35	33

Սակայն «հարմարավետության զոնաները» կարող են փոփոխվել՝ կապված մարդու առողջական վիճակից, մշտական բնակավայրից հեռու լինելուց և այլն:

«Հարմարավետության զոնաներից» դուրս մարդը զգում է իրեն շոգ կամ ցուրտ վիճակում, սակայն ակտիվ հանգիստ նախընտրող զբոսաշրջիկների մոտ «հարմարավետության զոնա»-ն համարվում է 12-16^0-ը:

Պայմանների «անհարմարավետության զոնա» ասելով հասկանում ենք կենդանի օրգանիզմների, մարդու առողջության, կյանքի և գործունեության համար շրջակա միջավայրի անբարենպաստ պայմանները:

Շրջակա միջավայրը բնութագրող ցուցանիշներից մեկը՝ անհարմարավետության գործակիցն է (ԱԳ), հիմք ենք ընդունել Արակավայի բանաձևը՝ որը մեջ է բերված [52]-ից: Այն ընդունել ենք որպես Սյունիքի տարածաշրջանի անհարմարավետության որոշման հիմք՝

$$ԱԳ= 0,81T +0,01H(0,99 T-14,3)+46,3,$$ որտեղ

T- ջերմաստիճանի մեծությունն է,

H-հարաբերական խոնավությունն է:

ԱԳ-ի միջին տարեկան արժեքները բացարձակ բարձրության մեծացման հետ մեկտեղ նվազում են: Մեր հաշվարկներով միջին տարեկան առավելագույնը դիտվում է ցածր լեռնային կիսաանապատային լանդշաֆտներում՝(Մեղրի 57.1, 627մ): Այստեղ օդի խոնավությունը պակաս է, ջերմաստիճանը բարձր: Նշված տարածքում ջերմության և խոնավության հարաբերակցության խախտման հետևանքով նկատվում է անհարմարավետություն: Բարձր լեռնային շրջանների համար ջերմաստիճանի ցածր

գործակից է լինում, մեծանում է հարաբերական խոնավությունը, այդ պատճառով մեծանում է անհարմարավետության գործակիցը: Ամենանպաստավոր պայմանները մարզում հանդես են գալիս նախալեռնային շրջաններում և գետահովիտներում, նպաստավոր է, երբ ԱԳ-ն տատանվում է 40-50-ի սահմաններում:

Ամենից առաջ կլիմայական գործոնների դերը կայանում է նրանում, որ երկրագնդի շրջանների մեծ մասում, եղանակային պայմանները զբոսաշրջության և հանգստի համար ամենուրեք նույն ամիսներին չեն հանդես գալիս, մարդիկ ձգտում են արձակուրդ վերցնել ավելի շատ տարվա հարմարավետ եղանակների ժամանակ: Սակայն երեմն, հատկապես նրանց համար, ովքեր զբաղվում են ձմեռային մարզաձևերով գերադասում են ընտրել ձմեռային հանգիստը: Ամառային ամիսները բայց և այնպես միշտ եղել է և գերակշռում է զբոսաշրջային հոսքերի քանակով, իսկ նվազում է ձմռան և միջսեզոնային ամիսներին:

Այս կամ այն զբոսաշրջային տարածքի համար «Սեզոնային» է կոչվում տարվա այն ժամանակահատվածը, երբ ամենամսյա զբոսաշրջիկների քանակը գերազանցում է ողջ տարվա ընթացքում միջին ցուցանիշին: Ամենաշատ այցելությունների ընթացքը ստացել է «թեժ սեզոն» անվանումը: Այն տարվա ընթացքը, երբ զբոսաշրջային հոսքերը բացակայում են, որը հիմնականում եղանակային անբարենպաստ պայմաններով է բացատրվում, ընդունված է անվանել «մեռած սեզոն» [58]:

Սյունիքի մարզի կլիմայական պայմանները լեռնագրության բարդության հետևանքով բազմազան են: Հանրապետության ամենատաք չոր մերձարևադարձային կլիմայով շրջանը Մեղրին է համարվում, իսկ ամենացուրտ վայրերից են Իշխանասարը և Զանգեզուրի լեռնաշղթայի մերձգագաթային գոտին: Գորիսն իր շրջակայքով հանրապետության հովտային շրջանների մեջ ամենախոնավ ու անձրևոտ վայրն է, իսկ Արաքսի հովիտը Մեղրու տարածաշրջանում՝ համարվում է ամենաչորայինը [48]: Կլիմայի բազմազանությունը թույլ է տալիս Սյունիքի մարզում կազմակերպել բազմասեզոն զբոսաշրջային ինդուստրիա: Սյունիքի մարզի կլիմայական պայմանները մեծ չափով կախված են տարածքի զգալի բարձրությունից: Կլիմայի վրա ազդող կարևոր գործոններից են արևելքում՝ Կասպից ծովի խոնավ և հարավ-արևմուտքում՝ Իրանական

սարահարթից եկող չոր օդային զանգվածները, որոնք կապված տարբեր բարձրության և տարբեր ուղղությամբ ձգվող լեռնաշղթաների հետ առաջացնում են տեղումներ և առաջացնում են մարզի տարածքում կլիմայական պայմանների խիստ բազմազանություն:

Կլիմայի կարևոր ցուցանիշներից է *արևափայլի տևողությունը*: Տարվա ընթացքում արևափայլի տևողությունը Սիսիանում կազմում է 2660ժամ, Սիսիանի լեռնանցքում՝2500ժամ, Մեղրիում՝2700ժամ, Կապանում՝ 2300ժամ, Գորիսում՝ 2100 ժամ, որը կազմում է հնարավորի 50-65%-ը, (աղյուսակ 3): Առավելագույն թվով անարև օրեր (4-10) դիտվում է ձմռան ամիսներին, երբ ամպամածությունն ամենամեծն է, նվազագույնը՝ հուլիս-օգոստոսին:

Աղյուսակ 3

Արևափայլի տևողությունը և անարև օրերի թիվը Սյունիքի մարզում [31]

Օրերևութ. Կայան	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան
Արևափայլի ամսական և տարեկան տևողությունը (ժամերով)													
Սիսիանի լ	115	117	151	175	243	298	326	309	265	217	140	131	2487
Գորիս	158	144	153	162	202	242	244	213	169	150	145	138	2120
Անարև օրերի թիվը (օր)													
Սիսիանի լ	8	8	7	4	1	0.5	0.2	0.8	1	3	6	10	50
Գորիս	4	6	7	6	5	3	2	3	6	7	5	5	59

Քամիների ուղղությունը և արագությունը նույնպես պայմանավորված են ռելիեֆի բնույթից: Արևելյան, արևմտյան և հարավային օդային հոսանքների ներխուժումների ժամանակ Սյունիքի բոլոր լեռնանցքներում իշխում են ուժեղ քամիներ: Հատկապես մեծ արագություններ են դիտվում Սիսիանի լեռնանցքում գրանցվել է հանրապետությունում քամու ռեկորդային արագություններ տարեկան միջինը՝ 8,0 մ/վրկ (աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Քամիների միջին արագությունները Սյունիքի մարզում (մ/վրկ) [53]

Օդերևութ. Կայան	Հունվար	Ապրիլ	Հուլիս	Հոկտեմբեր	Տարեկան	15մ/վրկ և ավելի օրերի թիվը
Մեղրի	1.6	1.5	1.9	1.4	1.6	1
Կապան	0.9	1.4	1.0	1.0	1.0	3
Գորիս	2.9	1.5	1.2	1.2	1.7	15
Սիսիան	2.5	2.5	3.6	2.2	2.7	4
Սիսիանի լ-ցք	8.5	7.3	8.6	6.3	8.0	85
Գորայք	1.4	1.4	2.0	1.4	1.6	4

Սյունիքի մարզում օդի ջերմաստիճանի տեղաբաշխման վրա մեծ է հատկապես լեռնային ռելիեֆի ազդեցությունը: Մարզում օդի ջերմաստիճանն ըստ բարձրության նվազում է: Ստորև բերված է (աղյուսակ 5-ում) պարզորոշ արտահայտվում է պատկերը:

Աղյուսակ 5

Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանները Սյունիքի մարզում [38]

Օդերևութ. Կայան	Բացարձակ բարձրությունը (մ)	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան
Գորայք	2031	-9.2	-7.6	-4.4	2.5	8.5	11.6	14.3	14.2	10.9	5.6	-0.6	-6.3	3.3
Սիսիանի լ-ցք	2380	-8.2	-7.5	-4.3	1.3	6.3	9,9	12.7	12.8	9.9	4.7	-1.0	-5.5	2.6
Սիսիան	1580	-4.5	-3.0	0.9	6.8	11.4	15,0	18.0	17,8	14,0	8.6	-2.7	-2.2	7.1
Գորիս	1398	-0.5	0.0	2.9	8.5	12.6	16.2	18.9	18.6	14.7	9.9	5.5	1.7	9.1
Վերին Խոտանան	1406	-0.2	0.2	2.4	7.9	12.9	16.3	19.2	18.8	14.5	10.2	5.7	2.1	9.2
Գեղի	1558	-1.1	-0.2	2.3	7.5	12.0	15.3	17.8	18.3	14.7	9.8	4.7	0.4	8.5
Կապան	705	0,6	2.2	5.7	11.5	16.2	20.3	23.5	23,1	18.7	13.0	7.3	2.5	12.1
Մեղրի	627	1,5	3.5	8.2	14.1	18.8	26.3	25.9	25.9	21.5	15.3	9.3	4.0	14.3

Աղյուսակ 5-ից երևում է, որ հունվարի միջին ջերմաստիճանը ամենաբարձր դիտվել է Մեղրիում՝ 0.9^{0}C, Կապանում՝ 0^{0}C: Ընդ որում Մեղրին համարվում է հանրապետության ամենատաք ձմեռ ունեցող շրջանը: Մեղրիում հուլիսի միջին

ջերմաստիճանը 25.8^{0}C է, տարեկան միջին ջերմաստիճանը գրանցվել է 13.8^{0}C: Մեղրիում ամռանը դիտվել է առավելագույնը՝ 43^{0}C:

Սյունիքի մարզի հյուսիսում ջերմային պայմանները միանգամայն այլ է: Այսպես, Որոտանի վերին հոսանքի ավազանում ձմռանը գոյանում է ձնածածկույթի հաստ շերտ: Գոռայքում, ուժեղ սառնամանիքների ժամանակ հունվարին միջին ջերմաստիճանը հասնում է -9.8^{0}C-ի, իսկ բացարձակ նվազագույնը՝-43^{0}C: Զանգեզուրի լեռնաշղթայում միջին տարեկան ջերմաստիճանը գագաթին 0^{0}C է, ստորոտում՝12^{0}C: Ձնածածկույթը ստորոտում 1 ամիս է պահպանվում, իսկ գագաթային մասում՝ մոտ 8 ամիս: Այստեղ ամառն անհամեմատ զով է, հուլիսին միջինը՝ ջերմաստիճանը՝ 13.8^{0}C է [48]:

Սյունիքի մարզի կլիմայի ձևավորման համար կարևորվում է *անսառնամանիք* ժամանակահատվածի միջին տևողությունը: Անսառնամանիք ժամանակահատվածի միջին տևողությունը Սյունիքի մարզում տատանվում է 60 օր-ից (Սիսիանի լեռնանցք), մինչև 253 օր (Մեղրի) սահմաններում՝ (աղյուսակ 6):

Աղյուսակ 6

Անսառնամանիք օրերի թիվը [57]

Օդերևութ.կայան	Միջին	Նվազագույն	Առավելագույն
Սիսիան	147	120	185
Գորիս	196	151	185
Մեղրի	253	224	317

Սյունիքի մարզում հստակ արտահայտվում են տարվա բոլոր եղանակները: Տարվա եղանակների առանձնացումը կատարվում է օդի միջին ջերմաստիճանի ցուցանիշների փոփոխման հիման վրա: Մարզում ձմեռը սկսվում է, երբ այն իջնում է 0^{0}C-ից ցած, ամառը՝ t>15^{0}C-ից, աշունը՝ t<15^{0}C-ից, մինչև 0^{0}C, գարունը՝ t>0^{0}C մինչև 15^{0}C: Յուրաքանչյուր սեզոն, սովորաբար բաժանվում է երեք ենթազոնաների: Ձմեռը բաժանվում է ձմեռնամուտի՝ 0-5^{0}C-ի, խորը ձմեռ՝ t<-5^{0}C և ձմռան ավարտ՝-5-0^{0}C: Գարունը մարզում սկսվում է մարտի երկրորդ տասնօրյակից և տևում է 78 օր, այն բաժանվում է գարնանամուտի (0^{0}C>t<5^{0}C), կանաչ գարունի (5^{0}C>t<10^{0}C) և գարնան ավարտի (t<10^{0}C): Ամառը մարզի տարածքում սկսվում է հունիսի առաջին տասնօրյակից (իսկ Մեղրու շրջանում՝ մայիսի սկզբից) և տևում է շուրջ 90օր: Աշունը

մարզում ամենակարճատև սեզոնն է համարվում և տևում է շուրջ 65 օր: Այն բաժանվում է երեք ենթասեզոնի՝ աշնանամուտ (t<15⁰C), ոսկե աշուն (5⁰C>t<10⁰C) և աշնան ավարտ՝ (5⁰C>t<10⁰C): Առանձին տարիների վաղ աշնանը մեծ է լինում ցրտահարությունների վտանգը: Գոգավորություններում պարզկա գիշերներին երբեմն դիտվում են բացասական ջերմաստիճաններ: Ցրտահարությունների վտանգը մեծ է Սիսիանի տարածաշրջանում, որտեղ օրական ջերմաստիճանային տատանումները մեծ չափերի են հասնում [45]:

Վերը նշվածների հիման վրա տրվել է բարենպաստ ամիսների եղանակացույց մի քանի բնակավայրերի համար, որով կարող են առաջնորդվել զբոսաշրջիկները Սյունիքի մարզ այցելելիս (աղյուսակ 7):

Աղյուսակ 7

Սյունիքի մարզի եղանակացույց [45]

Բնակավայր	Գարուն	Ամառ	Աշուն	Ձմեռ
Սիսիան	5 III – 18 VI 0° - 10°	19 VI -5 IX 15° - 18°	6 IX – 5 XI 15° - 0°	t>0°-ից
Գորիս	20 II – 9 VI 0° - 10°	10 VI – 9 IX 10° - 15°	10 IX- 30 XII 15° - 10°	t>0°-ից
Կապան	25 I -9 V 0° - 15°	10 V - 4X 15° - 10°	5 X - 4 I 10° - 0°	5 I - 24 I 0°
Մեղրի	17 II - 24 VI 3°	25 VI - 28 XI 15° - 25°	29 XI - 25 XII 10°	26 XII - 16 II 3°
Վերին Խոտանան	10 II - 8 VI 0° - 10°	9 VI - 10 IX 15° - 20°	11 IX - 4 I 15° - 3°	5 I - 9 II 0°
Բազարչայ	5 VI - 4V 0°	5V - 9 IX 10° - 15°	20 IX - 13 I 3° - 10°	13 I - 4 IV - 10°

Մթնոլորտային տեղումները Սյունիքի մարզում փոփոխական բնույթ է կրում: Տեղումների տարեկան քանակը Գորիսի և Կապանի տարածաշրջանների ցածրադիր մասերում կազմում է մինչև 500մմ, Սիսիանում՝ 350-400մմ, իսկ Մեղրու կիրճում՝ 250-

300մմ: Լեռնային բարձր գոտում տեղումների քանակը հասնում է մինչև 800-900մմ, առանձին տարիներին մինչև 1000մմ (աղյուսակ 8):

Սյունիքի մարզում հաճախ են նկատվում եղանակային անբարենպաստ երևույթներ, որոնցից են՝ երաշտները, խորշակները և կարկտահարությունը: Ցածրադիր գոտիներում երաշտային օրերի թիվը կազմում է Մեղրիում՝120-130օր, Կապանում, Գորիսում՝80-100օր, Սիսիանում՝40-50օր, երբեմն առանձին չորային տարիներին այն կարող է հասնել մինչև 130-140օրվա: Կարկտահարության դեպքերը, հաճախակի են հատկապես Սիսիանի շրջանում, որտեղ կարկուտով օրերի թիվը հասնում է մինչև 16օր, իսկ մյուս շրջաններում՝4-12 օր [45]:

Աղյուսակ 8

Մթնոլորտային տեղումների քանակը Սյունիքի մարզում, (մմ) [31]

Օդերևութ.ն կայան	Բացարձակ բարձրությունը (մ)	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան
Գորայք	2031	3	39	59	68	88	66	4	26	26	48	40	32	5
Սիսիանի լ-ցք	2380	5	57	84	104	106	88	3	25	25	59	64	38	7
Սիսիան	1580	2	19	32	48	62	54	2	14	18	32	27	15	3
Գորիս	1398	3	42	64	92	107	92	4	35	57	57	50	35	7
Վ.Խոտանան	1406	4	50	81	96	135	103	4	40	55	64	49	42	8
Գեղի	1558	2	36	52	70	89	54	2	20	25	44	35	25	4
Կապան	705	2	30	57	72	100	70	3	26	33	40	34	24	5
Մեղրի	627	1	18	27	39	47	26	1	7	10	21	24	13	2

Խոնավության պաշարների, գետերի, աղբյուրների հոսքի ձևավորման համար մեծ է ձնածածկույթի դերը: Սյունիքի մարզի ամենաբարձրադիր շրջաններում ձմեռը ցուրտ է, տևական: Զանգեզուրի լեռնագագաթներին փոքր տարածքներով հանդիպում են ձնաբծեր և ֆիռնային դաշտեր: Ձնածածկույթի միջին հզորությունը հասնում է 2մ-ի, իսկ ձյունածածկույթով օրերի թիվը՝270-ի: Ձմռան ընթացքում առավել շատ ձնաբքեր դիտվում են բարձր լեռնային գոտիներում, որտեղ նվազագույն ջերմաստիճանը գրանցվել է մինչև -41^{0}C: Կարճատև ամռան ընթացքում համարյա բոլոր ամիսներին լինում են նաև ցրտահարություններ, առավելագույն ջերմաստիճանը չի գերազանցում

10^0-ից, իսկ տեղումների քանակը հասնում է ընդհամենը՝ 50մմ-ի: Անսառնամանիքային օրերի թիվը չի գերազանցում՝ 50-60 օրից: Տեղումների տարեկան քանակը տատանվում է 800-950 մմ-ի սահմաններում [48]:

Սյունիքի մարզի ամենից տաք տարածքներով աչքի են ընկնում՝ Մեղրին և մասամբ Ողջի գետի ցածրադիր հովիտները, որոնք բնութագրվում են տաք անկայուն ձմեռներով և չոր ու շոգ ամառներով: Ապրիլից մինչև հոկտեմբեր ամիսներին ամսական միջին ջերմաստիճանները լինում են 10°C-ից բարձր: Շատ բարձր է նաև հուլիսյան միջին ջերմաստիճանը՝ 25.8°C: Կապանում հունվարյան միջին ջերմաստիճանը 0°է, Մեղրիում՝ 0.9°C, իսկ բացարձակ նվազագույնը գրանցվել է՝ -22°C: Մեղրին հանրապետության ամենատաք ձմեռ ունեցող շրջանն է համարվում:

Միանգամայն այլ են կլիմայական պայմանները մարզի հյուսիսում, հատկապես Որոտան գետի վերին հոսանքներում, որտեղ ձմռան ամիսներին ձնածածկույթի հզորությունը հասնում է մինչև երկու մետրի և հաճախակի են ուժեղ քամիները: Գորայքում ուժեղ սառնամանիքների հետևանքով հունվարյան միջին ջերմաստիճանը գրանցվել է՝ -9.8°C է, իսկ նվազագույնը՝ -43°C (ամենացածրը Սյունիքի մարզում): Ամռանն անհամեմատ զով է, հուլիսյան օդի միջին ջերմաստիճանը 13.8°C՝ [53]:

Այսպիսով բազմամյա ջերմաստիճանների դիտարկումների տվյալներով պայմանավորված ամենաբարենպաստ եղանակը մարդու առողջության համար համարվում է ամառը՝ հունիսի 18-ից մինչև սեպտեմբերի 5-ը: Սյունիքի մարզում զբոսաշրջության առումով կլիմայի գլխավոր առանձնահատկություններից են տարվա չորս եղանակների հստակ արտահայտվածությունը և կլիմայի վերընթաց գոտիականությունը: Այստեղ տարածված են հետևյալ կլիմայական վերընթաց գոտիները.

1. Չոր մերձարևադարձային կլիման ձևավորվում է մինչև 700մ բարձրություններում: Ընդգրկում է հիմնականում Մեղրու շրջանը: Ձմեռը լինում է մեղմ և կարճատև: Հաստատուն ձնածածկույթը լինում է առանձին տարիների և հալչում է շատ արագ: Հունվարին օդի միջին ջերմաստիճանները տատանվում են՝ 0°C-ից 3°C-ի միջև: Ամռան ամիսներին տարածաշրջանում դիտվում են երկարատև շոգ չոր եղանակներ, իսկ

հուլիս-օգոստոս ամիսներին օդի ամսական միջին ջերմաստիճանները տատանվում են 24°C-ից -26°C-ի, առավելագույնը գրանցվել է 41°C: Աշունը մեղմ է, տաք և չոր եղանակներով: Անսառնամանիք ժամանակամիջոցի տևողությունը 250օր է, իսկ մթնոլորտային տարեկան տեղումների քանակը չի գերազանցում 300-400մմ:

2. Չոր խիստ ցամաքային կլիման Սյունիքի մարզում ձևավորվում է՝700-900մ բարձրություններում: Հունվարի միջին ջերմաստիճանները տատանվում են 0-4°C –ի սահմաններում: Նվազագույնը գրանցվել է՝-33°C: Հաստատուն ձնածածկույթը, նույնպես ամեն տարվա համար բնորոշ չէ: Գարունը կարճատև է, ամառը՝ չոր, շոգ, արևոտ եղանակներով է աչքի ընկնում: Հուլիս-օգոստոս ամիսներին միջին ջերմաստիճանը հասնում է 26°C-ի առավելագույնը՝ 41°C: Աշունը մեղմ է, արևոտ և տևական: Անսառնամանիք ժամանակամիջոցի միջին տևողությունը 230 օրվա է հասնում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը կազմում է շուրջ 300մմ:
3. Ըստ Դ.Պողոսյանի Սյունիքի մարզում չափավոր շոգ կլիման, ձևավորվում է 900-1300մ բարձրությունների սահմաններում: Ձմեռը մարզի տարածքում չափավոր ցուրտ է, անկայուն ձնածածկույթով: Հունվարին օդի միջին ջերմաստիճանը մինչև -4^{0}C է, նվազագույնը՝-35°C: Գարունը մեղմ է, ամառը չոր և արևոտ եղանակների գերակշռությամբ: Հուլիս-օգոստոսին օդի միջին ջերմաստիճանը հասնում է մինչև 25°C-ի, առավելագույնը՝ 40°C-ի: Այս գոտում՝ անսառնամանիք օրերի թիվը հասնում է շուրջ 200 օրվա: Մթնոլորտային տեղումների տարեկան քանակը 350-530մմ է: Այս կլիմայական պայմանները բավականին բարենպաստ է մարդկանց հանգստի և բուժման համար:
4. Չափավոր ցամաքային կլիման, ձևավորվում է մարզի տարածքում՝1300-1900մ բարձրություններում: Ձմեռը չափավոր ցուրտ է, հաստատուն ձնածածկույթով: Հունվարին օդի միջին ջերմաստիճանը մինչև՝-7°C-ի, իսկ բացարձակ նվազագույնը՝-34°C-ի: Գարունը երկարատև է, ամառը չափավոր շոգ է, չոր եղանակների գերակշռությամբ: Հուլիս-օգոստոս ամիսներին օդի միջին ջերմաստիճանը հասնում է մինչև 22°C-ի, առավելագույնը՝ 38^{0}C-ի: Անսառնամանիք ժամանակամիջոցի միջին տևողությունը հասնում է 130 օրվա: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը

հասնում է 500մմ-ի: Կլիմայական այսպիսի բարենպաստ պայմանները բավականին նպաստավոր են էկոզբոսաշրջության և հետիոտն զբոսաշրջության զարգացման համար:

5. Բարեխառն լեռնային կլիման Սյունիքի մարզի տարածքում ձևավորվում է 1900-2400մ բարձրությունների վրա: Ձմեռը ցուրտ է, խոնավ և հանդես է գալիս հաստատուն ձնածածկույթով: Հունվարին օդի միջին ջերմաստիճանը 0°C-ից մինչև՝ -8°C է, բացարձակ նվազագույնը՝ -35°C է: Տարածաշրջանում գարունը երկարտև է և մեղմ: Ամառը տաք է, չափավոր խոնավ, պարզ եղանակների գերակշռությամբ: Հուլիս-օգոստոս ամիսներին օդի միջին ջերմաստիճանը 15°C է, առավելագույնը՝ 36°C է: Անսառնամանիք ժամանակամիջոցի տևողությունը շուրջ 200 օր է, իսկ տարեկան տեղումները հասնում են 600-700մմ-ի [31]: Բարեխառն լեռնային կլիման նույնպես բարենպաստ կարող է լինել զբոսաշրջության զարգացման գործում, հատկապես այնպիսի ուղղությունների ինչպիսին են՝ էկոտուրիզմը, ալպինիզմը: Բարենպաստ է նաև լեռնային հանգստավայրերի ու առողջարանների զարգացման, կազմակերպման համար:
6. Ցյունամերձ (խիստ ցուրտ) կլիման Սյունիքի մարզի տարածքում ձևավորվում է 3500մ-ից բարձր լեռնագագաթների շրջաններում: Ձմեռը երկարատև է (ավելի քան 6 ամիս), ձնածածկույթը տևական է և ձյան հաստությունը անցնում է 2մ-ից: Տարածքը բնորոշվում է բազմամյա ձնաբծերով, ֆիռնային փոքր սառցադաշտերով: Տարեկան տեղումների քանակը առավելագույնը 800-900մմ է: Կապուտջուղի գագաթին կան մշտական ձյան և սառցադաշտերի հետքեր: Ձմռանը ջերմաստիճանը ցածր է -10°C-ից, նվազագույնը՝ -46°C-ից: Ամենատաք ամսվա միջին ջերմաստիճանը 5°C-ից չի բարձրանում, իսկ առավելագույնը՝ հասնում է առանձին տարիներին մինչև՝ 20°C-ի: Անսառնամանիք օրերի թիվը չի անցնում 40-ից:

Կլիմայական պայմանները, զբոսաշրջության տեսակետից, բնութագրվում են հետևյալ ցուցանիշներով՝ բարենպաստ եղանակային պայմաններ, տարվա սեզոնների տևողությամբ և յուրաքանչյուր սեզոնում զբոսաշրջության որոշակի տեսակի համար բարենպաստ օրերի քանակով: Կլիմայի բաղադրիչներից յուրաքանչյուրն իր

ազդեցությունն է թողնում մարդու առողջության վրա: Գոյություն ունեն առողջության վրա ազդող մի շարք կոմպլեքսային մեթոդներ: Ռ.Ս. Մկրտչյանի կողմից մշակված մեթոդով կազմվել է Սյունիքի մարզի բժշկա-կլիմայական գոտիների շրջանացման քարտեզ՝ [նկ. 6]:



Նկ. 6 Սյունիքի մարզի բժշկակլիմայական գոտիները [46]

Բժշկա-կլիմայական գոտիներն իրարից առանձնացված են հաշվի առնելով ճառագայթային էներգիայի հաշվեկշռի մեծությունը, մթնոլորտային խոնավացման

աստիճանը և տարվա էքստրեմալ սեզոնների կլիմայական կոմպլեքսները: Այս գործոնները կարևորվում են նրանով, որ նպաստում են առողջապահական, բժշկական և կուրորտային խնդիրների ճիշտ լուծմանը:

Սյունիքի մարզի բժշկա-կլիմայական առանձնահատկությունները որոշելու համար մեր կողմից առանձնացվել են վերընթաց գոտիներ, հաշվի առնելով ձմռան և ամռան սեզոնների «խստությունները»: Սյունիքի մարզում վերընթաց գոտիների մեջ առանձնացրել ենք վեց առողջարարական գոտիներ՝ (աղյուսակ 9):

Առաջին գոտին ընդգրկում է 500-1000մ բարձրությունները: Այս գոտում ձմեռային սեզոնը բացակայում է, այսինքն օդի բազմամյա միջին ջերմաստիճանը 0^0-ից ցածր չի իջնում: Վեցերորդ գոտին ընդգրկում է 2000-ից բարձր շրջանները: Այս գոտում ձմեռը լինում է երկարատև, տևում է շուրջ 221 օր (Սիսիանի տարածաշրջանում): Այս ոչ բարդ շրջանացման սխեմայից պարզ է դառնում, որ յուրաքանչյուր տարվա սեզոն և ենթասեզոն, ներկայացնում են եղանակային տիպերի և կենսակլիմայական ցուցանիշների որոշակի կոմպլեքսներ: Ամեն մի գոտի մարդու առողջության համար կարևորվում է վերականգնման և պահպանման ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմերով:

Աղյուսակ 9

Սյունիքի մարզի կլիմայական գոտիներում սեզոնների տևողությունը (օր) [45]

Կլիմայական ցուցանիշներ		Առողջարարական գոտիների բացարձակ բարձրությունները (մ)					
		500-1000	400-1200	900-1600	1200-1600	1600-2000	2000-ից բարձր
Սեզոններ	Ձմեռ $t < 0^0$	0	36 (21-66)	94 (78-118)	95 (75-107)	127 (102-151)	166 (141-221)
	Ամառ $t > 15^0$	173	136 (104-153)	136 (103-163)	66 (51-82)	55 (9-88)	0
	Աշուն t (15^0 -0^0)	76	93 (82-103)	62 (59-68)	93 (88-99)	84 (67-107)	109 ()
	Գարուն t (0^0-15^0)	116	100 (95-106)	73 (63-83)	111 (104-114)	99 (88-120)	90
Ենթասեզոններ	Շոգ ամառ $t \geq 20^0$	119	56 (12-82)	75 (31-105)	0	0	0
	Ցուրտ ձմեռ $t \leq -5^0$	0	0	35 (10-75)	0	65 (8-113)	112 (82-158)

Մինչև 1600մ բարձրությունները, որոնք ընդգրկում են (1, 2, 3 գոտիները) աչքի են ընկնում արեգակնային ճառագայթների առատությամբ: 1200-1600մ բարձրություններ ունեցող շրջանները աչքի են ընկնում առավելապես մեղմ կլիմայական պայմաններով, որտեղ զբոսաշրջության զարգացման համար առկա հնարավորությունները մեծ են՝ իսկ 2000մ-ից ավելի բարձր գոտիներն աչքի են ընկնում ձմեռային սպորտաձևերի կազմակերպման համար:

Կլիմայաբուժական արժեքներն Սյունիքի մարզում ավելի արդյունավետ են անցողիկ սեզոններում (գարնան և աշնան ամիսներին), քանի որ ջերմաստիճանների միջին արժեքները մարդու առողջության համար ավելի բարենպաստ են, որի ընթացքում կլիմայաբուժության (օդաբուժություն, արևաբուժություն) կոմֆորտային պայմաններն հասնում են առավելագույնի:

Այսպիսով Սյունիքի մարզի տարածքն աչքի է ընկնում ռեկրեացիոն բարենպաստ պոտենցիալ հնարավորություններով: Վերջիններս կարող են կարևոր դեր ունենալ միջազգային նշանակություն ունեցող հանգստի և զբոսաշրջության կազմակերպման համար, որոնցից կարևորվում են.

- բնակչության առողջության վրա բնական միջավայրի տարրերից հատկապես մեծ ազդեցություն ունեն կլիմայական բաղադրիչները, ջերմաստիճանը, օդի խոնավությունը, մթնոլորտային ճնշումը: Վերջինիս կտրուկ փոփոխությունները բացասաբար է անդրադառնում սիրտ-անոթային համակարգի հիվանդություններ ունեցող մարդկանց վրա:
- ջրի քիմիական բաղադրությունը, կարող է պատճառ դառնալ այնպիսի հիվանդությունների, ինչպիսիք են՝ խպիպը և այլն [4]:
- հանքարդունաբերական ձեռնարկությունների առկայության շնորհիվ Սյունիքի մարզի որոշ բնակավայրերում աճել է էկոլոգիական վիճակի վատթարացումը, հատկապես՝ օդային և ջրային ավազանների աղտոտվածության չափը:

<u>Ջրային զբոսաշրջային ռեսուրսներ:</u> Ջրային զբոսաշրջային ռեսուրսների թվին են պատկանում այն ջրային օբյեկտները, որոնք բարենպաստ են հանգստի կազմակերպման համար: Ընդհարապես անբարենպաստ են շատ կեղտոտ գետերը,

աղբյուրները, լճերը, որոնց ափին հանգիստը հաճելի չէ: Ջրային ռեսուրսների բարենպաստ լինելը բնութագրվում է հետևյալ հատկանիշներով՝

- ջրի ջերմաստիճանը և դրա տատանումը տարվա ընթացքում,
- ափերի տեսակները՝ լողափեր, ժայռեր, խոտածածկույթային, ճահճային: Լողափերն իրենց հերթին լինում են ավազային, խճաքարային, քարքարոտ,
- ջրավազանի խորությունը,
- լողալու համար ջրավազանի անվտանգությունը,
- ջրավազանի աղտոտվածությունը,
- գետի երկարությունը, հոսանքի արագությունը, ջրվեժների առկայությունը և այլն:
- ափամերձ լանդշաֆտների բնութագրերը:

Որևէ երկրում զբոսաշրջության կազմակերպման, զարգացման համար շատ կարևոր նախապայման է բավարար քանակությամբ ջրային ռեսուրսների առկայությունը:

Զբոսաշրջության և հանգստի համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում Սյունիքի մարզի անկրկնելի լեռնային արագահոս գետերն ու առվակները, լեռնային լճակները, հանքային աղբյուրները, տարբեր ծագման լեռնային անզուգական լճերը:

<u>Գետերը</u> Սյունիքի մարզի նշանավոր ջրառատ գետերից են Որոտանը, Ողջին և Մեղրին, որոնք պատկանում են Արաքս գետի ավազանին: Գետերը սկիզբ են առնում լեռներում՝2000-3000մ բարձրություններից, որոնց սնուցման աղբյուրներն են համարվում ձնհալքը, անձրևները և ստորերկրյա ջրերը: Գետերի առավել ջրառատ և բարձր մակարդակի շրջանը համընկնում է լեռներում ձյան հալոցքի և անձրևների հետ՝ ապրիլ, մայիս, հունիս ամիսներին: Ամռանը գետերը ծանծաղում են, բայց երբեմն ուժեղ տեղատարափ անձրևներից հետո առանձին գետեր վարարելով վեր են ածվում սելավների [31]:

Նկատի ունենալով Որոտան գետի մեծ էներգառեսուրսները, Հրազդան գետի օրինակով, այստեղ աստիճանաձև դասավորությամբ ստեղծվել են ջրամբարներ և հիդրոէլեկտրակայաններ: Որոտան գետի վրա կառուցված՝ Սպանդարյանի, Տոլորսի և Շամբի ջրամբարները կարգավորիչ են գետի հոսանքում կասկադի ձևով կառուցված

Սպանդարյանի, Շամբի և Տաթևի հիդրոէլեկտրակայանների համար: Այս ջրամբարները նույնպես զբոսաշրջության համար մեծ հետաքրքրություն կարող են ներկայացնել: Սյունիքի մարզի ամենամեծ գետը Որոտանն է, որը իր երկարությամբ (178կմ) համարվում է հանրապետության տարածքով հոսող երկրորդ գետը Ախուրյանից հետո: Ավազանի գրաված տարածությամբ՝(2030ք.կմ.) Որոտանը գրավում է երրորդ տեղը, Դեբեդից և Հրազդանից հետո: Այն սկիզբ է առնում Սյունիքի բարձրավանդակի հյուսիս-արևմտյան և Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լանջերից՝ ոչ մեծ լճերից ու աղբյուրներից [3]: Վերին հոսանքում գետի հովիտն իրենից ներկայացնում է մի մեծ կիրճ, որն ընդարձակվում է Գորայք գյուղից ներքև: Միջին հոսանքում Որոտանը հոսում է Սիսիանի միջլեռնային գոգավորությունով, այնուհետև հարավից Բարգուշատի լեռնաշղթայի, իսկ հյուսիսից Ցորնասարի ու Եռաբլուրի սարահարթերի միջև ընկած խոր կիրճերով: Հանրապետության սահմաններից 111կմ հեռավորության վրա դուրս է գալիս հարթավայր և ընդունելով ձախակողմյան Հազարու վտակը միանում է Արաքս գետին [41]:

Որոտան գետի ջրհավաք ավազանի մակերեսը կազմում է՝ 5650ք.կմ է (աղյուսակ 10): Որոտան գետի առավել խոշոր աջակողմյան վտակներից է համարվում Սիսիան գետը, իսկ ձախակողմյան վտակներից հայտնի են՝ Գորիսը, Շաքին: Որոտանն աչքի է ընկնում նաև մի քանի տասնյակ մեծ ու փոքր վտակներով [3]:

Աղյուսակ 10

Սյունիքի մարզի շրջանացումն ըստ գետային ավազանների և հոսքի բնութագրիչների [50]

Սյունիքի մարզի գլխավոր գետերը	*Ջրհավաք ավազան (կմ²)*	*Գետի երկարությունը (կմ)*	*Գետաբերանի բարձրությունը (ծ.մ.)*	*Գետի մակերեսը (կմ²)*	*Գետի հոսքը մլն մ³*
Որոտան: Բացի Որոտան գետը (2030կմ²) ընդգրկում է Որոտանի Գորիս վտակի (146կմ²), Աքերա գետի Քարաշեն, Քաշուն և այլ վտակների վերին հոսանքների (300կմ²) ավազանները:	5650	178	270	2476	725
Ողջի: Ընդգրկում է Ողջի գետի, դրա Նորաշենիկ վտակի (884կմ²) և Կապանի տարածաշրջանից դեպի ԷՂՀ հոսող մանր գետերի (Ծավ և այլն) ավազանները:	1175	82	300	1341	502
Մեղրի: Բացի Մեղրի գետը (336կմ²) ընդգրկում է նաև Մեղրու տարածաշրջանի գետակների՝ Նոնաձոր, Կարճևան, Մալև, Շվանիձոր և այլն (328կմ²) ջրհավաք ավազանները:	336	36	500	664	166

Շաքի գետը աչքի է ընկնում իր հայտնի 18մ բարձրության հասնող Շաքիի ջրվեժով: Միջին հոսանքում Որոտան գետի մյուս աչքի ընկնող վտակներից է համարվում աջակողմյան վտակ Տաթև գետը: Միջին հոսանքում Որոտան գետի գեղատեսիլ հատվածներից մեկը՝ Հալիձոր գյուղի մոտ գտնվող կիրճն է, որի ամենամեծ խորությունը հասնում է 700 մ-ի:

Սյունիքի մարզում կարևորվում է այն հանգամանքը, որ պատմա-ճարտարապետական հուշարձաններն աշխարհագրական տեղաբաշխման առումով զուգորդվում են վերը նկարագրված գետերի և բնական հրաշալիքների (հուշարձանների) հետ, որոնք զբոսաշրջության առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

Տաթևի նշանավոր վանքի քարափների տակ, որը նույնպես գտնվում է գետի միջին հոսանքում, գտնվում է հանրապետության բնական հուշարձաններից Սատանի կամուրջը, այն կազմված է կրաքարերից ու տրավերտիններից, ունի հարթ մակերևույթ մոտ 180 մետր լայնությամբ ու 200 մետր երկարությամբ [3]:

Որոտան գետի հոսքի կանոնավորման նպատակով նրա վրա կառուցվել են Սպանդարյանի և Տոլորսի (Սիսիան գետի վրա) խոշոր ջրամբարները: Սպանդարյանի ջրամբարից սկիզբ է առնում Որոտան-Արփա թունելը, որի գործարկումից հետո գետի հոսքի մի մասը կտեղափոխվի Սևանա լիճ՝ Որոտան-Արփա-Սևան թունելի միջոցով:

Ողջի գետն իր մեծությամբ Սյունիքի մարզի երկրորդ գետն է: Գետը սկիզբ է առնում Կապուտջուղ գագաթի հարավ-արևելյան լանջից, 3530մ բարձրության վրա: Երկարությունը 82կմ է, ՀՀ սահմաններում՝ 56կմ, իսկ ջրհավաք ավազանի տարածքը 1175կմ² է, ՀՀ սահմաններում 933կմ² [32]:

Սյունիքի մարզի գետերը աչքի են ընկնում հարուստ զբոսաշրջային ռեսուրսներով: Մարզի տարածքը աչքի է ընկնում նաև բարենպաստ միկրոկլիմայական պայմաններով, որը հնարավորություն է տալիս զբոսաշրջիկներին հանգստանալու և զբաղվելու ջրային սպորտաձևերով: Սյունիքի մարզի խոշորագույն գետերից մեկում՝ Որոտանում, կարելի է անցկացնել ռաֆթինգ: Այստեղ ամենակարևոր գործոնը գետի

ջրի բարձր մակարդակն է և գետի հունի անկումը: Որոտան գետում անկումը՝ 1կմ-ի վրա հասնում է 12 մետրի: Գետի առավել ջրառատ և բարձր մակարդակի շրջանը գրանցվել է մայիս, հունիս ամիսներին: 2005թ.-ին մի խումբ ավստրիացիներ Որոտան գետով ռաֆթինգի (հատուկ փչովի նավակներով) փորձ են անցկացրել, որը հաջողությամբ է ավարտվել: Մասնագետները ռաֆթինգի երթուղին գնահատել են գերազանց: Երթուղին սկսել են իրականացնել ելակետ ընդունելով Խնձորեսկ գյուղից մինչև Կովսական՝ 40կմ հեռավորությամբ: Նույն կերպ ռաֆթինգի մասնագետները գնահատել են Մեղրի և Ողջի գետերի որոշ հատվածներ: Այսպիսով Սյունիքի մարզում որպես էքստրեմալ սպորտաձև՝ ռաֆթինգն ունի կայանալու մեծ հնարավորություններ:

Զբոսաշրջիկների համար առավել հետաքրքրություն են ներկայացնում ջրվեժները: Իր գեղեցկությամբ և ինքնատիպությամբ հայտնի է Շաքիի ջրվեժը: Այն գտնվում է Սիսիան քաղաքից 5կմ հյուսիս-արևմուտք, Որոտանի կիրճի ձախ ափին, համանուն գետի վրա: Շաքի գետը հոսելով երիտասարդ բազալտների վրայով, առաջացրել է մինչև 18մ բարձրության սանդղևվանդ: Այն համարվում է Հայաստանի ամենագեղեցիկ ջրվեժը:

Ջրամբարները Սյունիքի մարզում զբոսաշրջության տեսակետից մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև ջրամբարները: Տարածքում բացի բնական լճերից, գետերի վրա կառուցվել են մի շարք նշանավոր ջրամբարներ:

Ջրամբարարների կառուցման հիմնական նպատակը գետային հոսքի սեզոնային կամ տարեկան վերաբաշխումն է:

Սյունիքի մարզի շինականի վաղեմի ծրագիրն է եղել Որոտան գետի ջրերը բարձրացնել լեռներ և օգտագործել անջրդի, քարքարոտ հողատարածությունները ոռոգելու համար: Նկատի ունենալով գետի մեծ էներգառեսուրսները, Հրազդան գետի օրինակով աստիճանաձև դասավորությամբ նրա վրա ստեղծել են ջրամբարներ, հիդրոէլեկտրոկայաններ:

Որոտանը ՀՀ մյուս գետերի համեմատ այն առավելությունն ունի, որ կարելի է նրա գարնանային վարարուն ջրերը կուտակել հարմար ավազաններում և սակավաջուր ամիսներին տալ հիդրոէլեկտրոկայաններին, միաժամանակ ոռոգել հազարավոր

հեկտարներով հողատարածություններ: 1962թ.-ին կազմվեցին Որոտանի կասկադի նախագծային աշխատանքները և որոշվեց նրա ջրերի օգտագործման հիման վրա կառուցել երեք հիդրոէլեկտրոկայան: Որոտանի սիստեմի կառույցների առաջնեկը եղավ Տաթևի ջրամբարը՝ իր հիդրոէլեկտրոկայանով, որը շահագործման հանձնվեց 1972թ.-ին [23, էջ44]: Տաթևի ջրամբարը միլիոնավոր մ^3 ջուր է տալիս Գորիսի շրջանի տնտեսություններին, իսկ ՀԷԿ-ը ամենահզորն է Սյունիքի մարզում (աղյուսակ 11): 1974թ.-ին շահագործման հանձնվեց Որոտանի կասկադի երկրորդ՝ Շամբի ջրէկ-ը և ջրամբարը [50]: Շամբիի գեղատեսիլ ձորում կառուցվել է արհեստական լիճ, որի շրջակայքը վեր է ածվել գողտրիկ հանգստյան գոտու՝ ճամբարներով և զբոսավայրերով: Որոտանի կասկադի կառույցների մեջ կարևորվում է Սպանդարյանի ջրամբարի դերը, քանի որ ջրերը օգտագործվում են ինչպես էլեկտրաէներգիայի ստացման, այնպես էլ համալրում են Սևանա լճի ջրերը: Սպանդարյանի ջրամբարը ՀՀ մեծությամբ երկրորդն է Ախուրյանի ջրամբարից հետո:

Աղյուսակ 11

Սյունիքի մարզի ջրամբարները [50]

Անվանումը	Գետավազան	Ծավալը, մլն.մ^3	Պատվարի բարձությունը	Ջրի հայլու մակերեսը (հա)	Կառուցման տարին	Օգտագործման ոլորտը՝
Սպանդարյան	Որոտան	257.0	83	1025	1989	Է Բ Ո
Տոլորս	Որոտան	96.0	69	480	1975	Է Ո
Գեխի	Ողջի	15.0	90	35	1990	Ա Ո
Շամբի	Որոտան	13.6	41	112	1970	Է
Անգեղակոթի	Որոտան	3.40	35	54	1977	Է
Դավիթ-բեկի	Ողջի	2.50	40	14	1990	Ո
Քարահունջի	Գորիս	1.27	6	18.3	1959	Ո

(Ա-արդյունաբերություն, Բ-բնապահպանություն, Է-էներգետիկ, Ո–ոռոգում)

1976թ-ի ապրիլին սկսվեց Տոլորսի ջրամբարի կառուցումը: Այն գտնվում է Սիսիան գետի և դրա Աիրի վտակի հատման շրջանում՝ 80մլն.մ^3 ծավալով, իսկ ջրամբարի պատվարի բարձրությունը հասնում է 69մ: Ջրամբարի կառուցման հետևանքով ջրի տակ մնացին Աշոտավան և Տոլորս գյուղերը: Դավիթ-բեկի ջրամբարը գտնվում է Կապանի տարածաշրջանում, Որոտան գետի աջակողմյան վտակ Քաշունի գետի վրա [23]: Մեղրու ջրամբարն ունի 230մ երկարություն, որը կուտակում է 1.8մլն.մ^3

ջուր: Ջրամբարը նախատեսված է ոռոգման և սելավային հոսքերի կարգավորման համար: Ընդհանուր ծավալի 750հզ մ^3-ը կազմում են սելավային ջրերը: Ջրամբարը ոռոգում է 260հա հողատարածություն: Քարահունջի ջրամբարը սնվում է Գորիս գետի Քարահունջ գետի ջրերից, գտնվում է Գորիս քաղաքից 6կմ դեպի հարավ-արևմուտք՝1668մ բարձրության վրա: Ջրամբարը նախատեսված է Քարահունջ, Ավանգարդ և Վերիշեն գյուղերի 250հեկտար հողերի ոռոգման համար: Ջրամբարը շահագործման է հանձնվել 1959թ-ին [41]:

Մեր կարծիքով վերը նշված բոլոր ջրամբարներն էլ մեծ դեր են կատարում Սյունիքի մարզի սակավահող և սակավաջուր տարածքները ոռոգելու համար, ինչպես նաև կարող են համապատասխան ծառայությունները նպաստել մարզի տարածքում զբոսաշրջության զարգացմանը:

<u>Լճեր</u> ՀՀ տարածքում հաշվվում են մոտ 120 լիճ, որոնց մեծ մասը փոքր են և մի մասը պարբերաբար չորանում են: Սյունիքի մարզում բարձր լեռնային գոտիներում տարածված են ավելի քան 30 փոքր լճեր: Տարածաշրջանում փոքր լճերի լճաբանական սիստեմատիկ ուսումնասիրությունները սահմանափակ ձևով են կատարվել, ուստի բարձր լեռնային փոքր լճերի հետագա խոր ուսումնասիրությունը դարձել է այժմեական: Այժմ կարևորվում է նաև դրանց պահպանման և ռացիոնալ օգտագործման հիմնահարցերը: Արշավախմբային հետազոտությունները կատարվել են անցյալ դարի 60-ական թթ.-ին գիտությունների ակադեմիայի երկրաբանական ինստիտուտի աշխարհագրության բաժնի և ջրաօդերևութաբանական ծառայության, նախագծային կազմակերպությունների կողմից:

Բարձր լեռնային լճերի ամենաընդհանուր առանձնահատկությունը, ոչ միայն ծովի մակարդակից ունեցած բարձրություններն են՝(գտնվում են 1500մ-ից բարձր),այլև դրանց աննշան չափերը: Սյունիքի մարզում ամենամեծ լճերը չեն գերազանցում 0.5-2 կմ^2, իսկ ամենափոքրերը տատանվում են՝0.003-0.005 կմ^2-ի միջև: Լեռնային լճերը տարածված են հին սառցադաշտային կառերում և կրկեսներում, ինչպես նաև հանդիպում են տրոգների և հրաբխային հին խառնարանների շրջաններում: Զանգեզուրի լեռնաշղթայի բարձրադիր լճերն ունեն բացառապես սառցադաշտային

ծագում: Ըստ Դ.Ա.Պողոսյանի այդ լճերը հիմնականում ամբարտակային ծագում ունեն և գտնվում են հին սառցադաշտային լեզվակների փորած հովիտներում, որոնք արգելափակված են մորենային թմբերով: Լճերի սնումը բարձր լեռնային գոտիներում կատարվում է հիմնականում ձնհալքի հաշվին: Բարձր լեռնային գոտու պայմանները՝ թույլ գոլորշիացումը և ռելիեֆի մորֆոլոգիական պայմաններն ապահովում են փոքր լճերի գոյությունը: Բարձր լեռնային լճերի ջուրը քաղցրահամ է, մինիերալիզացիան տատանվում է 50-120մգ/լ սահմաններում, պատկանում է հիդրոկարբոնատային, կալցիումային ջրերի խմբին: Սյունիքի մարզի բարձր լեռնային լճերից են՝ Սև և Ալ լճերը Գորիսի շրջանում, Կապանի շրջանում մասնավորապես՝Սյունիքի հրաբխային բարձրավանդակում Գազանա, Ծաղկաքար և Կապուտան լճերը: Մեղրու շրջանում աչքի է ընկնում Կապույտ լիճը:

Սև լիճը գտնվում է 2666մ բարձրության վրա՝Մեծ Իշխանասարի զանգվածում: Լճի հայելանման մակերեսը 2կմ^2 է, երկարությունը՝1.6կմ, լայնությունը՝1.2կմ, առավելագույն խորությունը 7մ է: Լիճը ծագել է սառցադաշտային տաշտակաձև հովտի տրոգի մեջ, որը ունի 4կմ երկարություն և 3կմ լայնությամբ ձգվածություն: Ընդհանուր ջրհավաք ավազանի մակերեսը զբաղեցնում է շուրջ 12կմ^2: Սնուցման աղբյուրներն են հանդիսանում ձնհալքը և անձրևաջրերը: Լճի ջրերը հիմնականում օգտագործվում է արոտների ջրարբիացման համար [31,32]: Սակայն մեր կարծիքով տարածքը ունի մեծ հնարավորություններ իր շրջակայքով հետիոտն և էկոզբոսաշրջության զարգացման համար:

Ալ լիճը գտնվում է Ղարաբաղի սարահարթի ջրբաժանի՝ Այլախի սարավանդի 2990մ բարձրության վրա: Տարածվում է սառցադաշտային կրկեսի հատակային մասում: Ալ լիճը գոյացել է սառցադաշտային արգելափակման ճանապարհով: Կրկեսի շրջակայքը ծածկված է խոշոր մորենային ծագման քարաբեկորներո: Ալ լճի հայելանման մակերեսը՝ 0.6կմ^2 է, առավելագույն խորությունը 4.5մ, ջրի ծավալը մոտ 180հզ մ^3 [41,32]:

Գազանա լիճը գտնվում է Գեղի գետի ակունքի շրջակայքում՝ 3590մ բարձրության վրա: Տարածված է սառցադաշտային եռաստիճան կառային համալիրի երկրորդ աստիճանի վրա: Լճի առավելագույն խորությունը՝10մ է, իսկ հայելանման

մակերեսը՝ 0.06կմ^2: Ջրի ծավալը կազմում է մոտ 360հզ մ^3: Գազանա լճից մոտ 120մ վեր՝ երրորդ կառային աստիճանում գտնվում է մի փոքր լճակ [31]:

Կապուտան լիճը գտնվում է Քաջարանց գետի ակունքներում, 3299մ բացարձակ բարձրության վրա: Կապուտան լճի կառն ունի ուղղորդված պատեր, որի գոգավոր տեղամասերում կուտակվում են ձյան և ֆիռնային բծեր: Կապուտան լիճն ունի 500մ երկարություն, 200մ լայնություն և 22մ առավելագույն խորություն: Լճի հայելանման մակերեսը զբաղեցնում է 3,0 հա տարածություն, իսկ ջրի ծավալը կազմում է 1.5մլն.մ^3, ջրհավաք ավազանը հավասար է շուրջ 2կմ^2: Գետի վերին հոսանքում հանդիպում են հզոր մորենային բերվածքներ մինչև չորս մետր հզորությամբ:

Կապույտ լիճը տեղադրված է Մեղրի գետի կառի առաջին աստիճանի վրա, որը ունի 200մ երկարություն և 125մ միջին լայնություն [50]: Բազմաթիվ լճակներ են տարածված սողանքների շրջաններում, որոնցից հայտնի են Նորավան, Թազագյուղ, Բալաք գյուղերի մերձակայքում:

Վերոհիշյալ լճերը որպես բնական ջրամբարներ (բացառությամբ Սև և Ալ լճերի) հանդիսանում են Սյունիքի մարզի գետային հոսքի կարգավորիչներ: Հիշատակված լճերն իրենց գեղատեսիլ բնությամբ կարող են նպաստել լեռնային զբոսաշրջության, էկոզբոսաշրջության զարգացմանը: Աղյուսակ 12-ում ներկայացված են լճերի ջրաբանական բնութագրերը:

Աղյուսակ 12

Սյունիքի մարզի լճերի ջրաբանական բնութագիրը [50]

Լիճ	Բարձրությունը ծ.մ. (մ)	Ծագումը	Ջրհավաք ավազանի մակերեսը	Միջին խորությունը (մ)	Առավել խորությունը (մ)	Հայելու մակերեսը	Տարեկան տեղումների քանակը
Սև	2666	Տրոգա-մորենային	12.0	4.5	7.5	200	700
Ալ	2990	Կրկեսա-մորենային	1.0	3.0	4.5	60.0	800
Գազանա	3510	Կառա-մորենային	3.0	7.0	10	25.0	800
Կապուտան	3300	Կառա-մորենային	2.0	15.0	22.0	10.0	700
Ծաղկաքար	3270	Կառա-մորենային	0.5	-	8.0	5.0	700
Կապույտ	3299	Կառա-մորենային	0.3	-	-	3.0	700

Հանքային ջրեր: Զբոսաշրջության և հանգստի ինդուստրիայի կազմակերպման մեջ ջրային ռեսուրսների նշանակությունը թերի կլիներ, եթե չնշենք հանրապետության հանքային ջրերի մասին: Հանքային ջրերի տեսակետից ՀՀ տարածքը համարվում է աշխարհի հարուստ շրջաններից: Հանքային ջրերի բուժիչ հատկությունները վաղուց է հայտնի եղել բնակչությանը, օգտագործվել է բուժման նպատակով, մասնավորապես մաշկային հիվանդությունների, որի մասին են վկայում աղբյուրների «Քոս-ջուր», «Քոս աղբյուր» հին անվանումները: Հանրապետության տարածքում հայտնաբերվել են ավելի քան 400 բնական ելքեր, որոնցից մոտ 50-ը ուսումնասիրված և հետախուզված են [32]: Սյունիքի մարզում հանքային աղբյուրները տարածված են Որոտան, Սիսիան, Գորիս, Ողջի, Մեղրի գետերի ավազաններում (հավելված 6): Հաշվում են մինչև 110 առանձին աղբյուրներ և աղբյուրների խմբեր, որոնց ձևավորման գործում մեծ դեր են խաղում ապարների լիթոլոգիական կազմը, դրանց տարածման պայմանները և ծակոտկենությունը: Սյունիքի հրաբխային սարահարթում հանդես են գալիս ջրաթափանց լավաները, որոնք ստանալով զգալի քանակությամբ մթնոլորտային տեղումներ, մեծմասամբ ներծծման եղանակով հասնում են լավային շերտերին, լրացնելով ստորերկրյա ջրերի պաշարները: Տեղումների ընդհանուր քանակը Սյունիքի սարահարթում գերազանցում է գոլորշացմանը, որի հետևանքով խոնավությունն ունի դրական արժեք:

Որոտան գետի ավազանում գետի սնման 40% բաժին է ընկնում գրունտային ջրերին: Սովորաբար վերին հորիզոններում հանքային ջրերը հանդես են գալիս փոքր դեբիտով (2-2.5 լիտրը/վրկ), իսկ խորքային ծալքերում՝ 2200-2000մ հանդես են գալիս հզոր կոնցենտրատային խմբերի աղբյուրներով, որոնցից հայտնի են՝Բազարչայի, Անգեղակոթի, Սիսիանի, Շինուհայրի և այլ խմբեր, որոնցում վայրկյանում հոսում է մի քանի հարյուր լիտր ջուր [33]:

Սյունիքի մարզի գեղատեսիլ բնությունը, բուժիչ հանքային ջրերի աղբյուրների առկայությունը նպաստավոր պայմաններ կստեղծեն, որպեսզի տարածքը վերածվի առողջարանային կենտրոններից և նպաստավորի զբոսաշրջության այդ ուղղության զարգացմանը:

Քաղցրահամ աղբյուրներ: ՀՀ ջրային ընդհանուր պաշարներում աղբյուրների ջրերը զգալի տեղ են գրավում և օգտագործման տեսակետից ունեն շատ կարևոր նշանակություն: Սյունիքի մարզի տարածքում աղբյուրները տեղաբաշխված են անհավասարաչափ, որը բացատրվում է լիթոլոգիական կազմի բազմազանությամբ: Հրաբխային շրջաններում՝ ինչպիսին Սյունիքի հրաբխային բարձրավանդակն է, աչի է ընկնում քաղցրահամ, ջրերի բարձր որակով, որոնք դասվում են աշխարհի լավագույն ջրերի շարքին:

Ծալքաբեկորավոր լեռների տարածման շրջաններում աղբյուրների ջուրը մի փոքր աղի է (200-400մգ/լիտր), կոշտությունը համեմատաբար բարձր է, աղբյուրների ծախսը փոքր: Սյունիքի մարզում աղբյուրներով ամենահարուստ շրջանը համարվում է Որոտանի ավազանը, որի գումարային ելքը մոտ 5400լ/վրկ է: Իր մեծությամբ առաջինն են համարվում Շաքիի աղբյուրները համանուն գյուղի հարևանությամբ 2100լիտր/վրկ ելքով: Այնուհետև նշանավոր են Վաղուդի, Բազարչայի, Ուռուդի աղբյուրները՝ համապատասխանաբար 285, 295 և 230 լիտրը/վրկ ելքերով: Որոտանի ավազանի տարբեր մասերում կան փոքր հզորության (100լ/վրկ-ից պակաս) աղբյուրներ՝ Սիսիանի, Գորիսի [8]: Նշված բոլոր աղբյուրները տարածված են Որոտան գետի ձախափնյա ավազանում, որն ունի բարենպաստ ջրաերկրաբանական պայմաններ աղբյուրների գոյացման համար:

Ողջիի ավազանում աղբյուրները բավականին հզոր են: Այս տարածաշրջանի համար հայտնի են Գյարդ գյուղի աղբյուրները՝1312 լիտր/վրկ ելքով: Այստեղ հանդիպում են նաև փոքր հզորության աղբյուրներ, որոնցից յուրաքանչյուրի ելքը 100լ/վրկ-ից պակաս է: Ողջի գետի ավազանում բոլոր աղբյուրների ելքը հավասար է 2330լ/վրկ է [32]:

Մեղրի գետի ավազանում աղբյուրները քիչ են տարածված: Հայտնի են Ալդարայի, Կարճևանի, Շվանիձորի, Նյուվադիի, Տաշտունի և այլ փոքր աղբյուրներ: Մեղրի գետի ավազանում աղբյուրների գումարային ելքը մոտ 162 լ/վրկ է [41]:

Կենսաբանական գբոսաշրջային ռեսուրսներ: Սյունիքի մարզն աչքի է ընկնում հարուստ կենսաբազմազանությամբ, որում գերակշռում են էնդեմիկ և ռելիկտային

բույսերն ու կենդանիները: Կենսաբազմազանության յուրօրինակ համակեցությունները վաղուց ի վեր դարձել են զբոսաշրջության կազմակերպման կարևորագույն օբյեկտներից մեկը: Սյունիքի մարզի տարբեր լանդշաֆտային գոտիներում հանդիպող ուտելի, բուժիչ և գեղազարդային բույսերը, մրգերը, հատապտուղները, որսակենդանիները, հազվագյուտ և էնդեմիկ բնության հուշարձանները կազմում են որպես մարզի կենսաբանական ռեկրեացիոն ռեսուրսներ և հիմք են տալիս զարգացնելու էկոլոգիական զբոսաշրջությունը:

Բուսական ծածկույթը և բնորոշ բուսականությունը: Բուսական աշխարհի հարուստ և բազմազան ռեսուրսներ ունենալը յուրաքանչյուր երկրի զբոսաշրջության զարգացման գլխավոր նախապայմաններից մեկն է: Բուսականության, կենդանական աշխարհի խայտաբղետությունը, էկոհամակարգերի կենսաբանական մեծ բազմազանությունը պայմանավորված են ոչ միայն երկրաբանական անցած դարաշրջաններում բնական միջավայրի զարգացման օրինաչափություններով և բնության վրա մարդու աճող ներգործությամբ, այլ նաև ՀՀ ուրույն աշխարհագրական դիրքով [11]:

Սյունիքի մարզի տարածքում լայն տարածում ունեն անտառները և ալպյան մարգագետինները: Տափաստանները համեմատաբար քիչ են, սակայն մարդու միջամտության պատճառով անտառների մի զգալի մասը վերացել է, վերածվելով տափաստանի: Հիմնականում գերակշռում են վերընթաց գոտիականությունը, ներքևից վերև իրար են հաջորդում բուսականության հետևյալ տիպերը [31]:

1. Լեռների չորասեր (ֆրիգանոիդ) բուսականությունը հիմնականում մեծ տարածում ունի Մեղրու և Կապանի տարածաշրջանների մինչև 800-1000մ բարձրությունները: Հանդես են գալիս քարքարոտ սարալանջերին և ծածկված են ֆրիգանային տիպի կամ նրան նմանվող խիստ քսերոֆիլ բուսականությամբ: Վերջիններս աչքի են ընկնում հիմնականում չորությամբ և տրագանտային ձևերի բազմազանությամբ: Հիմնականում հանդես են գալիս մանրատերև թփուտներով: Հանդիպում են նաև բարձիկանման բույսեր, փռշնին, ցաքին, պիստակենին, ուռատերև տանձենին և օշինդրը:

2. Անտառային բուսականությունը զբաղեցնում է Սյունիքի մարզի շուրջ 20%-ը, կամ 8927հա: Անտառներով ամենից հարուստ է Կապանի շրջանը (տարածքի մոտ 38%-ը), իսկ աղքատ է մարզում համարվում Սիսիանի շրջանը (0.57%): Անտառային բուսականության գոտում կլիմայական պայմանները բավականին նպաստավոր են: Տարեկան տեղումների միջին քանակը կազմում է 500-800մմ: Սյունիքի մարզում կլիմայի ցամաքայնության հետևանքով անտառի վերին սահմանը հասնում է մոտ 2600մետր բարձրության գերազանցելով հանրապետության հյուսիսային անտառների վերին սահմանը մոտ 400 մետրով: Այժմ անտառի լավորակ տեղամասերը քիչ են պահպանվել: Բուսականության մեջ գերակշռում է վրացական կաղնի, որի հետ հանդես են գալիս բոխին, հացենին, վրկանյան թխկին, կովկասյան վայրի տանձենին և արևելյան կաղնին: Հանդիպում են ռելիկտային ծառատեսակներ՝ ձելվան: Մեղրու կիրճում տարածված է արաքսյան կաղնին [11]:

1929թ-ին բուսաբանները հայտնաբերել են սոսի ծառի բնական պուրակ և շագանակենիներ: Ծավի սոսիների պուրակը Անդրկովկասի անտառային ֆլորայի պատմության համար ունի բացառիկ նշանակություն: Ներկայումս այն դասվում է արգելավայրերի շարքին և պահպանվում է Բնապահպանության նախարարության կողմից: Այս պուրակը իր տեսակի մեջ եզակի է, համարվում է միակը ԱՊՀ երկրների մեջ: Անտառների յուրահատուկ տիպ են ներկայացնում՝ ձորերի խառը անտառները: Էնդեմիկ տեսակներով հարուստ է Խուստուփի լեռնաշղթան, Ծավ գետի ավազանը: Որոտանի և նրա վտակների խորը կիրճերում աճում են փռշնի, դաշտային թխկի, հացենի, թեղի և վրացական կաղնի, որոնց հետ խառնվել են վայրի մրգատու ծառեր՝ տանձենի, հոնի, թզենի, ենթանտառում մեծ տարածում ունեն մոշի թփերը: Անտառային բուսականությունը ուղղաձիգ գոտիականությամբ հասնում է մինչև 2500-2600մ բարձրությունները [28]:

3. Լեռնատափաստանային բուսականությունն ամենից շատ տարածված է Սիսիանի, Գորիսի շրջաններում, ավելի քիչ Կապանի, Մեղրու տարածաշրջաններում: Սյունիքի մարզում մեծ նշամակություն ունեն մարգագետնային տափաստանները, որոնք տարածվում են 2000-2700մ բարձրության վայրերում, որտեղ ենթալպյան

մարգագետիններն անմիջականորեն շփման մեջ են մտնում տափաստանների հետ: Լեռնատափաստանային բուսականությանը բնորոշ են երեք հիմնական տիպի տափաստաններ՝ սիզախոտային, փետրախոտա-շյուղախոտային և տրագանտային: Որոտան գետի ավազանում, Սիսիանի և Գորիսի շրջաններում տարածում ունեն օշինդրային տափաստանները[11]: Մեղրու շրջանում չոր տրագանտային տափաստաններում առատորեն ցրված են խոշոր բարձիկներ, տրագանտային, այսինքն՝ խեժանյութ արտադրող փշոտ կիսաթփուտներ ու խոտեր, հատկապես՝ գազ կամ աստրագալ: Լայն տարածում ունեն նաև փշոտ կորնգանները: Սյունիքի մարզում լեռնատափաստաններն օգտագործվում են իբրև բնական խոտհարքներ, իսկ բարձրադիր մասերում՝ որպես արոտավայրեր:

4. Բարձր լեռնային մարգագետնային բուսականություն, կամ ալպյան բուսականություն: Այն տարածվում է 2400-2500մ բարձրությունից սկսած և տարածված է Սյունիքի մարզի հյուսիսային շրջաններում: Բուսականության բարձունքային տեղաբաշխման վերլուծությունը ցույց է տալիս ըստ Ս.Բալոյանի, որ տեսակների մեծ մասը (267) հստակ կենտրոնացված են 2700-3900մ բացարձակ բարձրություններում, այսինքն որոնք դասվում են ալպիական բույսերի խմբին: Դրանցից 75 տեսակներ աճում են 2700-3000մ բացարձակ բարձրության սահմաններում, իսկ 35 տեսակներ՝3000-3900մ սահմաններում: Բույսերի այս խմբում հանդիպում են նաև հազվագյուտ և էնդեմիկ տեսակների ներկայացուցիչներ [70]:

Ս.Նարինյանի և Ա.Ֆեոդորովի կարծիքով ալպյան բուսականության գոտին բաժանվում է երկու ենթագոտու ստորին կամ ենթալպյան, և վերին կամ ալպյան: Ենթալպյան մարգագետինները խոտհարքների ձևով են հանդես գալիս, որոնցում գլխավորը հացազգիներն են՝ դաշտավլուկը, ագրխոտուկը, ցորնուկը, հոտավետ հասկիկը և շյուղախոտը:

Վերին ալպյան մարգագետինները տարածվում են 2900-3000մ բարձրություններում: Վերջիններս սահմանափակ տարածում ունեն և զբաղեցնում են ամենաբարձր լեռնակատարներն ու գագաթները: Հիմնական բուսատեսակներն են երկշաքիլավորները այսինքն, նրանց տերևները աճում են հենց արմատի մոտ, գետնի

վրա՝հողի վրա առաջացնելով գեղեցիկ վարդանման փնջեր, օրինակ՝ ծվծվուկ քողնիկատերևը, քնախոտ ալբանականը [9]:

Պետք է նշել, որ բուսականությունն աչքի է ընկնում վառ գույնի ծաղիկներով, որոնք բազմերանգ են և հեռվից նմանվում են բուսական գորգերի:

Բուսական աշխարհի հազվագյուտ և վերացող տեսակները: Էնդեմիկ բույսերը հանդիսանում են բուսական աշխարհի առավել առանձնահատուկ տարրերը: Սյունիքի մարզում հաշվվում են 17 տեսակի էնդեմիկ բույսեր, որոնք տարածվում են Զանգեզուրի լեռնաշղթայի ալպիական գոտում: Էնդեմիկներից հետաքրքրություն են ներկայացնում այն տեսակները, որոնց արիալը սահմանափակվում է մեկ լեռնային համակարգով կամ մեկ լեռնային զանգվածով: Դրանցից Լվածաղիկ Զանգեզուրին, Արաբախոտ հայկականը, Շնկոտեմ Զանգեզուրին և Սիմֆիանդրա Զանգեզուրին համարվում են մերձարաքսյան լեռնաշղթաներին բնորոշ էնդեմիկներ, իսկ Բարգուշատի լեռնաշղթայի նեղտեղային էնդեմիկներից է Գազ աղասիի տեսակը [70]:

Զագախոտ ելունդավոր տեսակը բավական հազվագյուտ տեսակ է Հայաստանի ֆլորայի համար, այն աճում է միայն մերձարաքսյան լեռնաշղթաների ալպիական գոտում: ՀՀ-ում միայն Խուստուփ լեռան վրա է հանդիպում յուրահատուկ կովկասյան էնդեմիկ՝ Մանուշակ Կովկասյանը, որն այստեղ է թափանցել հավանաբար արևելյան Անդրկովկասից: Այստեղ էնդեմիկ տեսակները, հանդիպում են սահմանափակ ձևով և հանդես են գալիս մեկ լեռնային համակարգով կամ մեկ լեռնային զանգվածով:

Անիսոն Գրոսսեյմի (Pimpinella grossheimii): Հայաստանի ԳԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիումում պահպանվում է այս տեսակի հերբարիումային մեկ թերթ՝ հավաքված 1963թ.-ին Յ.Մուլկիջանյանի կողմից Մեղրու շրջանի Լիճք գյուղի շրջակայքից [9]: Բալոյանի կողմից 1986թ-ին հայտնաբերվել է Զանգեզուրի լեռնաշղթայի Գազանասար լեռնագագաթի արևելյան լանջին, Գազանա լճի շրջակայքից 2800-3200մ բացարձակ բարձրության վրա:

Կենդանական աշխարհը: Սյունիքի մարզում կենդանական աշխարհը փոփոխվում է ըստ ուղղաձիգ գոտիների: Սիսիանի, Գորիսի, Կապանի շրջաններում հանդիպում են կովկասյան անտառներին ու բարձրալեռնային շրջաններին հատուկ

կենդանիներ, իսկ Մեղրու տարածաշրջանում՝ իրանական բարձրավանդակին հատուկ կենդանիներ:

Անտառային գոտում կաթնասուններից բնորոշ են կճղակավորները՝ այծյամները, որոնք այսօր շատ վայրերում անհետացման եզրին են հասել: Գիշատիչներից տարածված են անտառային կատուն, իսկ թռչուններից՝ շիկահավերը, գորշ մորեկանը, կարմրատուտը, փայտփորիկը, սև արոսը, երգող արոսը, զանազան դեղնաձղրիկները, սև և կապույտ երաշտահավերը, բացատներում՝ արտույտները, սերինոսները, խացկտիկները, բվերն ու բվեճները:

Սողուններ անտառային գոտում համարյա բացակայում են. հանդիպում են օձանման անոտ մողեսները, իսկ երկկենցաղներից՝ ծառագորտերը:

Կրծողներից բնորոշ են շիկառնետը, անտառային քնամոլը և անտառամուկը: Միջատների աշխարհը բազմաթիվ է: Լեռնային գետերի և վտակների ափերին սովորական է ցիցինդել բզեզները և կապույտ խլենիուսները: Ջրերի երեսին հանդիպում են գեռիս ջրչափը: Քարերի հարևանությամբ ապրում է պուտամոն խաչափառը: Փափկամարմիններից Սյունիքի մարզի տափաստանային գոտում տարածված է հեսսեոլա և կարաբագիա տեսակները: Բզեզներից բնորոշ են խոշոր գնայուկները, լուսատիտիկները, բրոնզաբզեզները, երկարակնճիթների անտառային խմբերը, կեղևակերները: Հազվադեպ հանդիպում են մոխրագույն սև բծերով ալպիական ռոզալիան[3]:

Ցերեկային թիթեռներից են մարզի տարածքում հանդիպում են եղինջաթիթեռը, սգաթիթեռը, սադաֆաթիթեռը, կապտաթիթեռները և սատիրները: Գիշերային թիթեռներից տարածված են ծառերի վրա ապրող բոժոժագործները [28]:

Սյունիքի մարզի ցածրադիր շրջաններում և նոսրանտառներում բավականին տարածված են գայլերը, աղվեսները, նապաստակները, կզաքիսները, փորսուղները, աքիսները, կրծողներից՝ լեռնային ճագարամկները և համստերները, որոնք հանդիպում են տարբեր լանդշաֆտային գոտիներում: Թռչուններից տարածված են կաքավները, տատրակները: Սողուններից հանդիպում են կովկասյան ագաման, ժայռաբնակ մողեսը, սահնօձերը և այլն [31]:

Բարձր լեռնային գոտում կաթնասուններից հանդիպում են վայրի ոչխարներ, բեզոարյան այծեր: Այս գոտում հանդիպում է նաև հովազը: Շատ կան մանր կրծողներ՝ ձյունաբնակ դաշտամուկը, անտառամկները, սրնչակները: Հարուստ է թռչնային աշխարհը՝ բնորոշ է լեռնային հնդուհավը (ուլարը), որը փոքր խմբերով հանդիպում են ամենաբարձր և քարքարոտ լեռների վրա Զանգեզուրի լեռնաշղթայում Կապուտջուղի լանջերին: Սովորական է նաև եղջերավոր արտույտը, ալպիական սերինոսը, գիշատիչներից՝ խոշորամարմին գառնանգղը, ուրուրները, մկնորս բազեն: Սառցադաշտերի շրջանում հանդիպում է կասպիական հնդկահավը: Զանգեզուրի լեռնաշղթայի վրա հանդիպում է կարմրաթև պատասողը: Երկկենցաղներից հանդիպում են կանաչ դոդոշը և անդրկովկասյան գորտը [3]:

Իրանական աշխարհին պատկանող կենդանիների գլխավոր բնակատեղին, ինչպես արդեն նշել ենք, Մեղրու տարածաշրջանն է:

Սյունիքի մարզի տարածքում կաթնասուններից բնորոշ են խոզուկը, որը նաև հանդիպում է Կապանի, երբեմն էլ Գորիսի շրջանում: Գիշատիչներից տիպիկ են շնագայլը և սիրիական արջը: Հազվադեպ հանդիպում են վայրի խոզերեր և շերտավոր բորենիներ: Քարքարոտ շոգ լեռնալանջերում և Մեղրու շրջանի ցածրադիր գոտիներում տարածված են մի շարք սողուններ որոնցից են՝ մողեսային օձը, գյուրզան, կույր օձը և փոքրիկ վիշապաօձը [11]: Այսպիսով կարող ենք նշել որ, Սյունիքի մարզում կենդանական և բուսական ռեսուրսները զբոսաշրջության զարգացման կարևոր աշխարհագրական նախադրյալներից են համարվում, որոնք ներկայումս մեծ մասամբ ունեն պետական հոգածության կարիք:

Բնության հատուկ պահպանվող տարածքները: Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգը կազմավորվել է դեռևս ԽՍՀՄ տարիներին՝ 1958թ.-ին: Ներկայումս ՀՀ-ում կան 33 բնության հատուկ պահպանվող տարածքներ (ԲՀՊՏ), 3 պետական արգելոցներ, 26 պետական արգելավայրեր, 4 ազգային պարկեր: Սյունիքի մարզում են գտնվում պետական արգելոցներից՝ Շիկահողի, Սև լճի իսկ արգելավայրերից՝ Գորիսի, Բողաքարի և Ծավի: Վերջին տարիներին ձևավորվել է «Արևիկ» ազգային պարկը: 2015թ.–ին նախատեսվում է ստեղծել «Տաթև» ազգային պարկը:

Շիկահողի արգելոցը կազմավորվել է 1958թ.-ին, որը գտնվում է Ծավ և Շիկահող գետերի ավազաններում, զբաղեցնելով 10հզ հեկտար տարածություն: Տարածվում է արգելոցը 700-2400մ բարձրությունների վրա: Շիկահողի արգելոցն առանձնանում է իր ուրույն կլիմայով հիմնականում տաք է և խոնավ, ֆլորայի ու ֆաունայի հազվագյուտ էնդեմիկ տեսակներով:

Շնորհիվ բուսականության անտառային մեզոֆիլ բնույթի, այստեղ լավ են ներկայացված Կովկասյան բորեալ տարրերը: Շիկահողի արգելոցի պահպանության հիմնական օբյեկտներն են՝ կաղնու, բոխու և կաղնուտաբոխուտային անտառները, ինչպես նաև հազվագյուտ բուսական համակեցությունները, որոնք սահմանազատված են կենու, արևելյան հաճարենու, ընկուզենու պուրակների տեսքով: Անտառի վերին սահմաններում աճում են ենթալպյան կաղնու, կեչու և խառը անտառներ: Արգելոցի տարածքում աճում են հազվագյուտ ռելիկտային պտերներ՝ իժալեզու սովորական, արծվապտեր ղրիմյան, շողավարդ կաշե, ձնծաղիկ անդրկովկասյան, խոլորձի, հիրիկի, կակաչի տարբեր տեսակներ: Այստեղ լայն տարածում ունեն նաև բազմաթիվ էնդեմիկ տեսակներ, որոնցից են՝ տանձ Զանգեզուրի, մորենի Թախտաջյանի, վարդակակաչ խառը, սրոհունդ էլեոնորայի: Մեծ բազմազանությամբ հայտնի են թռչունները, որոնք Շիկահողում ներկայացված են 141 տեսակներով: ՀՀ կարմիր գրքում ներառված են շուրջ 70 բուսատեսակներ: Այստեղ լանդշաֆտները բազմազան կենդանիների համար հարմարավետ բնակեցման վայրեր են համարվում: Կարմիր գրքում գրանցված թռչուններից են՝ վայրի հնդկահավը, գառնանգղը, սև անգղը, սպիտակագլուխ անգղը: Սողուններից տարածում ունեն դեղնափորիկը, գյուրզան և ջրային լորտուն, կաթնասուններից տարածված են՝ գորշուկը, նապաստակը, գայլը, աղվեսը, բեզոարյան այծը, հայկական մուֆլոնը [13]:

Սև լիճ արգելոցը ստեղծվել է 1987թ-ին և գտնվում է Մեծ Իշխանասար հրաբխային լեռնազանգվածի մերձգագաթային մասում: Այն զբաղեցնում է 2658 մետր բարձրության վրա գտնվող համանուն լճի տարածքը և դրան հարակից շրջանների բուսական և կենդանական համակցությունները՝ 240 հեկտար մակերեսով: Արգելոցի ֆլորան իր մեջ ներառում է 102 բուսատեսակներ: Պահպանվող օբյեկտներն են հանդիսանում

հրաբխային ծագում ունեցող ջրավազանը և նրան հարակից մարգագետնային համակեցությունները: Լճում կլիմայավարժեցված է Սևանի իշխան ձկնատեսակը [9]:

Սյունիքում գրանցված արգելավայրերից են Ծավի սոսու պուրակը, Բողաքարը, Գորիսը և Զանգեզուրը:

Ծավի սոսու պուրակը կազմավորվել է 1958թ. և տեղադրված է Ծավ և Շիկահող գետերի ափին, 700-800մ բարձրության վրա: Այն ընդգրկում է 60հեկտար տարածք, որը իր տեսակի մեջ համարվում է Կովկասի տարածաշրջանուն միակ բնական սոսու պուրակը: Ծավի սոսու պուրակը պահպանվում է պալեոգենի ժամանակաշրջանից: Առանձին ծառերի բների տրամագիծը մինչև 3մ է, իսկ բարձրությունը՝ 40-45մ: Պուրակում աճում է մոտ 3000 ծառ: Այստեղ աճում են նաև այլ ռելիկտային տեսակներ՝ ընկուզենի, շրջահյուս հունական, բազեզ և այլն [3]: Ծավի սոսու պուրակը դասվում է կենդանի հուշարձանների շարքին, իր ռելիկտային լայնատերև ծառատեսակներով:

Բողաքարի (Մեղրիի անտառտնտեսություն) արգելավայրը կազմավորվել է 1989թ. 2790հա տարածության վրա: Այն գտնվում է Զանգեզուրի լեռնաշղթայի հարավ-արևելյան լանջերին, 1400-2100մ բարձրությունների վրա: Այստեղ արձանագրված են այնպիսի էնդեմիկ հազվագյուտ տեսակներ, ինչպիսին են՝ վարդակակաչ սոսնովսկին, արքայապսակ քրդական և ուրիշներ: Կաղնու նոսրանտառներում մեծ տարածում ունեն Արաքսի կաղնի տեսակը: Տարածքում հաճախ հանդիպում են մի շարք հազվագյուտ խոլորձների տեսակներ:

Գորիսի արգելավայրը զբաղեցնում են 1900հա մակերես և գտնվում է Որոտան գետի և դրա վտակի Վարարակնի ավազանում՝1400-2800մ բարձրության վրա: Ստեղծվել է այս շրջանի կենդանական աշխարհի (այծյամ, ուսուրական բծավոր եղջերու, գորշ արջ, վարազ) պահպանության համար: Կիրճում հանդիպում է շատ հազվագյուտ կովկասյան թռչնատեսակ փասիանը: Այս վայրերը հետաքրքիր են նաև ֆլորիստիկ տեսակետից: Որոտանի կիրճի հարավային լանջերին տարածված են մի շարք ծառատեսակներ որոնցից լայն տարածում ունեն վայրի նուռը, վայրի թուզը, հիրիկը, հազվագյուտ տերեփուկը, սոխի մի շարք հազվագյուտ տեսակներ: Բոլոր վերը նշված տեսակները գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում [26]:

Զանգեզուրի արգելավայրը կազմավորվել է 2009թ.-ին և զբաղեցնում է 17 369 հեկտար տարածք: Ընդգրկում է Զանգեզուրի լեռնաշղթայի Ողջի գետի ավազանի վերին շրջանը և Գեղի վտակի մերձափնյա՝ Բարգուշատի լեռնաշղթայի տարածքները: Արգելավայրը ստեղծվել է տարածաշրջանի կենդանական և բուսական աշխարհի պահպանության համար:

«Արևիկ» ազգային պարկը ստեղծվել է 2009 թվականին: Տարածվում է Զանգեզուրի լեռնաշղթայի, Մեղրիի լեռնաբազուկի հարավային լանջին, Մեղրի, Շվանիձոր և Նյուվադի գետերի ջրհավաք ավազանում: Ազգային պարկի նպատակն է ապահովել բնական էկոհամակարգերը, դրանց կենսաբանական և լանդշաֆտային բազմազանությունը, ինչպես նաև բնության եզակի հուշարձանները, էնդեմիկ, հազվագյուտ կենդանիների տեսակներով:

Վերը նշված արգելոցների, արգելավայրերի, ազգային պարկերի կազմավորման հիմնական նպատակը տարածքների ջրային և ցամաքային էկոհամակարգերի բուսական, կենդանական յուրահատուկ աշխարհի, ինչպես նաև պատմամշակութային հարուստ ժառանգության պահպանությունն է:

Շիկահողի արգելոցի տարածաշրջանում կարելի է կազմակերպել էկոտուրիզմի տարբեր ձևեր այդ թվում ագրոտուրիզմ, քանի որ տարածքը հարուստ է հնէաբանական ու պատմամշակութային բազմաթիվ հուշարձաններով՝գյուղատեղիներով: Այստեղ Շիկահող, Սրաշեն, Ծավ, Շիշկերտ և Ներքին Հանդ գյուղերում պահպանվել են հայկական գյուղերին բնորոշ ավանդույթներն ու սովորությունները: Ծավի սոսու պուրակը՝ կենդանական, բուսական աշխարհի բազմազանությամբ, փարթամ անտառներով բնության լավագույն վայրերից մեկն է ինչպես հանրապետության, այնպես էլ Սյունիքի մարզի տարածքում[14]:

Հարկավոր է պետության կողմից պաշտպանության տակ վերցնել դարավոր և պաշտամունքի ծառերն ու պուրակները, առանձին կիրճերը, ժայռերը, քարայրները և բնության հուշարձանները: Մեր կարծիքով զբոսաշրջությունը կարող է կարևոր գործիք հանդիսանալ նման տարածքների պահպանման, ինչպես նաև բնապահպանական իրազեկությունը բարձրացնելու գործում:

2.3. Մարդածին, պատմամշակութային ռեսուրսներ

Պատմամշակութային ռեսուրսների գնահատումը ՀՀ-ում, մասնավորապես Սյունիքի մարզում ներկա ժամանակ մեծ նշանակություն է ձեռք բերել:

Պատմամշակութային ռեսուրսներ հասկացության մեջ կարևորվում է օբյեկտների ամբողջականությունը, որը կապված է մարդկային գործունեության հետ և արդյունքում բնութագրվում է նյութական կամ ոչ նյութական (հոգևոր) արժեքներով [58,69]:

Հասարակության մեջ պատմամշակութային օբյեկտները ընկալվում են, որպես նյութական արժեքների ամբողջություն, որը գնահատելու համար կատարվում է հաշվառում, տրվում է գիտական բնութագրում և դասակարգում: Ամենից առաջ բնութագրվում է պատմամշակութային օբյեկտը, նշվում է անվանումը, գտնվելու վայրը, պատմական և այլ գրական նկարագիրը: Այնուհետև անցկացնում են օբյեկտի գիտական դասակարգում, որի հիմքում կարևորվում է եզակի լինելը, ճանաչողական և այլ հատկանիշներ [69]:

Միջազգային պրակտիկայում պատմամշակութային ռեսուրսների գնահատման մեթոդիկան բավականին լավ է ուսումնասիրված:

Մեծ տարածում ունեն տեխնիկական և գեղագիտական գնահատականները: Տեխնիկական գնահատման մեջ կարևորում են օբյեկտի ֆիզիկական պահպանվածությունը (բարձր, միջին և ցածր): Գեղագիտական գնահատականը կախված է այնպիսի ցուցանիշներից ինչպիսիք են՝ եզակիությունը, գեղագիտական պատկերների բազմազանությունը և ներդաշնակությունը շրջակա միջավայրին:

Պատմամշակութային ռեսուրսների գնահատումը ինտենսիվ զարգացում է ապրում ինչպես աշխարհի շատ երկրներում այնպես էլ ՀՀ-ում: Տարեցտարի վերականգնվում են կիսավեր պատմական արժեք ունեցող կոթողները: Ճշմարիտ է ասված, որ «Հայ ժողովրդի պատմությունը և ճարտարապետությունը սերտորեն կապված են միմյանց հետ» [7, էջ141]:

ՀՀ-ը հարուստ է պատմական, ճարտարապետական, հնէաբանական հուշարձաններով, ինչպես նաև ժամանակակից հետաքրքիր շինություններով և բնության ձեռքով կերտված զարմանահրաշ հուշարձաններով: Հանրապետության ողջ

տարածքում սփռված են հազարավոր խաչքարեր, որոնք քարի վրա փորագրված ազգային բնույթ կրող զարդաքանդակներով պատմության խորքից մեզ են հասցնում հայ ժաղավրդի մշակույթի անկրկնելի նշխարները: Իրականում ճիշտ են բնութագրում, որ Հայաստանը թանգարան է բաց երկնքի տակ: Անմասն չէ մնացել նաև Սյունիքի մարզը:

Այստեղ կան բազմաթիվ պատմական հուշարձաններ, որոնք վերաբերում են տարբեր դարաշրջաններին սկսած նախնադարյան շրջանի կրոմլեխներից մինչև ուշ միջնադարում կառուցված ամրոցներն ու վանքերը: Սյունիքի մարզում իրենց բնույթով պատմական հուշարձանները բաժանվում են երկու հիմնական խմբերի՝ աշխարհիկ և եկեղեցական, որոնք իրենց ոճով, ամրությամբ արտահայտում են հայ ժողովրդի անցած պատմական ուղին: Աշխարհիկ կառույցներից են բերդերն ու ամրոցները, բնակավայրերը, կամուրջները, քարավանատները, իսկ եկեղեցական կառույցների շարքին են դասվում վանքերը, եկեղեցիները, մատուռները, խաչքարերը և դամբարանները [3]:

Առավել աչքի ընկնող հուշարձանները գտնվում են այն շրջաններում, որտեղ Սյունիքի պատմության որոշակի ժամանակահատվածում կենտրոնացած են եղել պետական կամ եկեղեցական իշխանությունը: Մինչև VII դ. Սյունյաց իշխանության կենտրոնը հանդիսանում էր Ծղուկը (Սիսիանի տարածաշրջան), որի շնորհիվ զարգացավ նշանավոր գյուղաքաղաք և ամրոց Շաղատը: Տարածքի նշանավոր հուշարձաններից են նաև Սիսիանի եկեղեցին, Որոտնավանքը և Որետնաբերդը [7]: 10-րդ դարի վերջին Սյունյաց գլխավոր իշխանանիստը հաստատվում է Բաղքում, որտեղ հիմնվում է նույնիսկ թագավորություն՝ Կապան ամրոց մայրաքաղաքով: Այս տարածքի (ներկայիս Կապանի տարածաշրջանի) գլխավոր հուշարձաններն են Կապանը, Բաղաբերդը, Վահանավանքը և այլն: Միաժամանակ ուժեղացած հոգևոր իշխանության կենտրոնատեղին է դառնում Տաթևի վանքը (ներկայիս Գորիսի տարածաշրջան), ինչպես նաև Մեծ կամ Հարանց անապատը: Գորիսի շրջանի պատմական տեսարժան վայրերից են նաև քարանձավ բնակարանները՝ (Գորիսի, Խնձորեսկի, Տեղի մոտ): XVIIIդ. սկզբի Սյունիքի ազգային-ազատագրական շարժումների հետ է կապված Դավիթ Բեկի բերդը՝ Հալիձորը, որի ավերակները գտնվում են Կապանի շրջանում: Բացի բերդերից և

ամրոցներից, Սյունիքի բնակչությունը հարյուրամյակներ ի վեր կառուցել է բազմաթիվ պաշտպանական ամրություններ (սղնախներ), որոնցում բնակչությունը պատսպարվել է վտանգի ժամանակ: Այժմ ամրությունների և ժայռերի վրա կառուցված դիրքերի մեծ մասը կիսավեր վիճակում է, մի մասի միայն հետքերն են մնացել [24]:

Զորացքարեր (Ղոշուն-դաշ, հնում կոչվել է Երիվարայ դաշտ), բնակատեղիի ավերակները սփռված են մի փոքր սարահարթի վրա, Սիսիան քաղաքից 3-4 կմ հյուսիս-արևելք: Հետազոտողները եկել են այն եզրակացության, որ Զորացքարերի բնակավայրերը կարող են թվագրվել մ.թ.ա 1-ին հազարամյակի սկզբին: Մեծքարյան հուշարձանները կամ Մենհիրները (Մենաքար), Դոլմենները (սեղանաքար), Կրոմլեխները (շրջանաքար) պատկանում են գերեզմանային ճարտարապետության տեսակին և կապված են թաղման ծեսերի հետ: Հուշարձանները վերագրվում են նեոլիթային, էնեոլիթային և բրոնզի դարաշրջաններին: Այս հուշարձանները, որոնք կոչվում են մեգալիթյան (մեգա-մեծ, լիթոս-քար), լայն տարածում ունեն հայկական լեռնաշխարհում: Զորաց քարերում Մենհիրներ չկան: Դոլմեններ կան Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի մոտ գտնվող Զորաց քարեր հնավայրում և Վերին Գորիս գյուղի մերձակայքում: Ընդհանուր առմամբ կառուցապատված է եղել մեգալիթյան շինվածքներով (հունարեն մեգալո՝մեծ) և շրջապատված հաստ պարսպով: Պարսպից ներս այժմ պահպանված են բազմաթիվ քարակույտեր, որոնք շրջապատված են հիմնականում սրածայր քարերով: Այդպիսի շրջանների տրամագիծը հասնում է մինչև 5-30մ, իսկ սուր քարերի բարձրությունը շուրջ 1,0-1,5մ է [3]:

Ուսումնասիրողներից շատերը համարում են, որ Զորաց քարերի տեղում եղել է հնագույն աստղադիտարան:

Այժմ այս բնակատեղին գիտական մեծ արժեք է ներկայացնում, այն հայկական լեռնաշխահի հնագույն ինքնատիպ մշակույթի յուրահատուկ հուշարձան է, որը պահպանության, ուսումնասիրության կարիք ունի:

Սիսիանի տարածաշրջանի ճարտարապետական կոթողների գլուխգործոցն է համարվում Որոտնա վանքը: Այն կառուցվել է 11-րդ դարում Վաղուդի գյուղի մոտ, Որոտանի աջ ափին, գեղատեսիլ բլրի վրա [7]: Տեղ-տեղ ժայռերի վրա պահպանվել են

հաստ պարսպի հատվածներ, որոնք վանքն ավելի անմատչելի են դարձրել: Պարիսպների ներսում է գտվում միջնադարյան հայ իմաստասեր Հովնան Որոտնեցու հիշատակին նվիրված եկեղեցին, որը կառուցվել է 1500թ.-ին սրբատաշ կարմրագույն տուֆից: Որոտնեցու եկեղեցուց դեպի հյուսիս (մոտ 20-30մ) գտնվում է սուրբ Աստվածածին եկեղեցին (1086թ. կառուցված): Որոտնա վանքի հարավային կողմում կանգնեցված է «սյուն գավազանը», որի բարձրությունը 5,65մ է, վերևում ունի խոյակ և խաչ: Սյուն-գավազանը ճոճվող էր (ինչպես Տաթևի վանքինը), սակայն 1931թ.-ի երկրաշարժի ժամանակ այն կործանվեց:

Ներկայումս Որոտնա բերդի մնացորդները գտնվում են Վաղուդի գյուղից ոչ մեծ հեռավորության վրա՝ Որոտան գետի աջ ափին լեռան բարձունքում և պահպանվել է մասնակի ավերված տեսքով:

Ծիծեռնավանքը գտնվում է Գորիս քաղաքից 20կմ դեպի հյուսիս, մի փոքր բլրի գագաթին: Դրա կառուցման ժամանակն անհայտ է, բայց IX-րդ դարի կեսին այն արդեն գոյություն ուներ և համարվում էր Սյունիքի նշանավոր վանքերից մեկը [3]:

Գորիսի տարածաշրջանում պատմա-ազգագրական կարևոր հուշարձաններ են հանդիսանում յուրատեսակ կացարաններ համարվող քարայրները և «քարատակերը»: Պատմական անցյալում Սյունիքի բնակչության մի զգալի մասը բնակվել է քարանձավներում:

Վարարակի գետահովտի հյուսիս-արևմտյան մասում է գտնվում «Ծակերի ձորը», որն այդպես է կոչվել իր մեծ թվով քարայրերի շնորհիվ: Բազմաթիվ քարայրեր կան Որոտան գետի ափերին (Հալիձոր, Խոտ, Շինուհայր գյուղերում) և դրա ձախակողմյան վտակների կիրճերի մեջ: Քիչ չեն նաև այնպիսիները, որոնք զետեղված են հողմահարված ժայռաբուրգերի մեջ որոնց ընդհանուր թիվը հազարից ավելի է: Տաթևի վանքը պատմական Սյունիքի հռչակավոր կրոնական, կրթագիտական կենտրոնն է եղել, այն գտնվում է Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի Տաթև գյուղի հարավային մասում, անդնդախոր Որոտան և Սվարանց գետերի ձորաբերանին:

Տաթևի վանքի տեղում հնագույն ժամանակներում եղել է հեթանոսական մեհյան, քրիստոնեությունն ընդունելուց հետո այստեղ կառուցված կառուցված փոքրիկ եկեղեցին գոյություն է ունեցել մի քանի դար [24]:

Վանքը բաղկացած է եկեղեցական և աշխարհիկ բնույթի ուշագրավ հուշարձաններից, որոնք կառուցվել են տարբեր ժամանակներում: 10-րդ դարի կեսից սկսած Տաթևի վանքը ծաղկում է ապրել և ձեռք է բերել առաջնակարգ նշանակություն: Հանդիսացել է միջնադարյան Հայաստանի հոգևոր և մշակութային կարևոր կենտրոններից մեկը: 12-14-րդ դարերում էլ ավելի է մեծանում Տաթևի վանքի հռչակը որպես գիտական խոշոր կենտրոնի [13]:

Տաթևի վանքային համալիրը կազմված է մի քանի եկեղեցիներից, բնակելի և տնտեսական նշանակության տարածքներից և ճոճվող սյունից:

Տաթևի վանքի առաջնեկն է Սբ. Գրիգոր Լուսավորիչ անունը կրող եկեղեցին, որը կառուցվել է 848թ.-ին ավերվել է սելջուկների կողմից, վերակառուցվել է, որից հետո 1138թ. երկրաշարժից մասամբ ավերվել: 1939թ. Զանգեզուրի երկրաշարժի հետևանքով որոշ շինություններ քանդվել են: Տաթևի վանքի բակի հարավային մասում է գտնվում մի ութանկյունի հուշասյուն: Դա Տաթևի նշանավոր Սյուն-գավազանն է կամ ճոճվող սյունը: Նրա գագաթը պսակված է քանդակված խաչով, որը կառուցվել է 895 թ.-ին [7]:

Մասնագետների կարծիքով սյան ճոճումը տեղի է ունենում սյան ներքնասալի ստորին հարթությանը որոշ թեքություն տալու միջոցով: Տաթևի համալիրի մասին պատկերացումն ամբողջական լինելու համար, նշենք, որ նրա կազմում ժամանակին խոշոր դեր է խաղացել Տաթևի միջնադարյան համալսարանը, որի կառույցը այժմ էլ պահպանվում է և գտնվում է Որոտանի կիրճում: Այն մեծ դեր է ունեցել հայ մտքի, զարգացման գործում:

Սիսիանի սուրբ Հովհաննես եկեղեցին գտնվում է Սիսիան քաղաքում, այն 7-րդ դարի կառույց է: Հուշարձանի հիմնական արժանիքներից մեկը՝ ներսից միանգամայն անաղարտ վիճակում պահպանվածությունն է: Առանձին ուշադրության է արժանի զմբեթի արտաքուստ 12 նիստ ունեցող թմբուկի հարդարանքը և ներսում պահպանված պատկերաքանդակները: Մեր պատմիչները մոմերի լույսի տակ գրել են բազմաթիվ գրքեր, որոնցից շատերը արշավանքների ժամանակ ոչնչացվել են:

Մեծ անապատը (այլ կերպ կոչվել է Հարանց կամ Արանց անապատ) գտնվում է Գորիսի շրջանում, Տաթև և Որոտան գետերի աջ ափին՝ Հալիձոր գյուղի դիմաց

տարածվող անտառապատ գեղեցիկ լանջի վրա: Վանքը գոյություն է ունեցել XI-XII-րդ դարերից և հայ պատմիչ Առաքել Դավրիժեցու վկայությամբ երկրաշարժի ժամանակ սահել է ներքև: Նրա տեղում XVII-րդ դարում կառուցվել է նոր տաճար [3]:

Վերջինիս մի քանի հատվածներում կանգնեցվել են պաշտպանական աշտարակ-դիտակետեր, որոնք բոլորն էլ պահպանվել են բավականին լավ վիճակում: Պարսպի մեջ կան նաև գետնափոր փոքր խցեր:

Պատմական Կապան քաղաքի ավերակները գտնվում են ներկայիս Կապանից արևմուտք, Ջրախոր գյուղի մոտ որն այժմ մտել է Կապան քաղաքի շրջագծի մեջ: Քաղաքը շատ անառիկ դիրք է ունեցել: Արևմուտքից այն պաշտպանված էր Բաղաբերդ և Բաղակուքար հզոր ամրոցներով: Բլրի արևմտյան և արևելյան լանջերը պատմական անցյալում եզերված են եղել բարձր պարիսպներով, որոնցից այժմ պահպանվել են ավերակներ, ինչպես նաև աշտարակների հիմքերը՝ հազիվ 1-2մ բարձրությամբ [3]:

Հայ պատմագրության մեջ Կապանը հիշատակվում է V-րդ դարից, բայց հավանաբար նա ավելի հին բնակավայր է եղել:

Բաղաբերդի՝ ժամանակին հզոր ամրոցի ավերակները գտնվում են ներկայիս Կապան քաղաքից արևմուտք, Ողջիի և դրա ձախ վտակ Գիրաթաղ գետակի շրջակայքում: Բաղաբերդը, ըստ ավանդության, գոյություն է ունեցել շատ հին ժամանակներից և աչքի է ընկել իր անառիկությամբ:

Սյունյաց թագավորության վերջին տարիներին, Կապանի անկումից հետո, Սյունիքի բոլոր վանքերից, այդ թվում նաև Տաթևի վանքից, բոլոր ձեռագրերը և գանձերը տեղափոխեցին Բաղաբերդ: Սակայն 1170թ.-ին սելջուկյան ցեղերի վճռական հարձակման ժամանակ Բաղաբերդը նվաճեցին: Այնտեղ հավաքված գանձերը կողոպտվեցին, Տաթևից բերված 10000 արժեքավոր ձեռագրերը ոչնչացվեցին [24]: Հալիձորի բերդը գտնվում է Կապան քաղաքից արևմուտք Բեխ կոչվող թաղամասի մոտ, Ողջի գետի բարձրադիր աջ ափին: Այն ներկայումս կիսավեր վիճակում է, ծածկված է թփերով և խիտ բուսականությամբ: XVIII դարի սկզբին բերդը պարսպապատվել, վերակառուցվել է Սյունիքի ազատագրական շարժման առաջնորդ Դավիթ Բեկի կողմից: Հալիձորի եկեղեցու հյուսիսային դռան մոտ կան չորս տապանաքարեր, որոնցից մեկը

Դավիթ Բեկի տապանաքարն է: Հալիձորի բերդից արևմուտք մոտ 2կմ հեռավորության վրա, Ողջի գետի աջ ափին գտնվում է՝ Վահանավանքը:

Վանքը կառուցվել է Զագիկ իշխանի որդի Վահանի կողմից (911թ.), նրա անունով էլ անվանակոչվել է վանքը [3, 20]: Վանքի տարածքը գեղատեսիլ է և ծառապատված:

IX դարում վանականների համար կառուցել են խցեր, դպրատուն և զանազան շինություններ: Այդ ժամանակվանից կառուցված աղբյուրը պահպանվել է մինչև այժմ:

Վերը նկարագրածից բացի Սյունիքի մարզում գոյություն ունեն բազմաթիվ պատմամշակութային այլ կառույցներ՝ մատուռներ, հուշարձաններ և խաչքարեր:

Այսպիսով Սյունիքի մարզի բնաշխարհից մեզ հասած բազմաթիվ պատմական հուշարձաններն իրենց վեհությամբ և դասական կանգուն, կիսականգուն և ավեր վիճակով, կարող են զբոսաշրջության զարգացման նախապայմանների համակարգում առանձնահատուկ նշանակություն ձեռք բերել:

2.4. Զբոսաշրջության ոլորտի ենթակառուցվածքներ

Զբոսաշրջային ենթակառուցվածքը զբոսաշրջային ինդուստրիայի անբաժանելի մասն է: Այն ընդգրկում է ինտեգրման և կարգավորման գործառույթներ ապահովող ծառայությունները [73]:

Զբոսաշրջային ենթակառուցվածքի ապահովող գործառույթը՝զբոսաշրջիկներին սպասարկող կազմակերպությունների համար անհրաժեշտ պայմանների ստեղծումն է: Ինտեգրող գործառույթը կապերի ապահովումն է արդյունաբերական ձեռնարկությունների և զբոսաշրջության միջև: Զբոսաշրջային ենթակառուցվածքի կարգավորող գործառույթը համարվում է կարևորագույնը՝ ինչպես նշում է Զորինը, տուրեր տնտեսության մեջ, այսինքն նոր աշխատատեղերի ստեղծում, ազդեցություն պահանջարկի վրա, արդյունաբերության զարգացում և տարբեր մակարդակի բյուջեներում հարկային ներդրումների համար աջակցություն [22]:

Զբոսաշրջային ենթակառուցվածքներն ունեն ուղղակի և անուղղակի ազդեցություն տարածաշրջանների տնտեսության զարգացման վրա:

Ուղղակի ազդեցությունը զբոսաշրջային ծառայության միջոցների գրավումն է, տուրիստական աշխատատեղերի նյութապես ապահովումն է և նոր աշխատատեղերի

ստեղծումը: Անուղղակի ազդեցությունը կայանում է զբոսաշրջության մեջ որպես միջճյուղային համագործակցության արդյունք: Մուլտիպլիկատորի արդյունքը կլինի այնքան մեծ, որքան շատ լինի եկամուտի բաժինը, որը ծախսվում է շրջանի սահմաններում:

ՀՀ-ում և մասնավորապես Սյունիքի մարզում, զբոսաշրջության զարգացման համար կարևորվում է զբոսաշրջային ամբողջական ենթակառուցվածքի առկայությունը: Զբոսաշրջային ենթակառուցվածքների բաղադրիչի անկատարությունը հանգեցնում է ամբողջական համակարգի ոչ լիարժեք լինելուն: Զբոսաշրջային գործունեությունը, որպես առևտրային գործունեության տեսակ, ներկայացնում է ծառայությունների լայն դաշտ [12]:

Կազմակերպված զբոսաշրջային գործունեության հիմքը զբոսաշրջային փաթեթներն են, որոնք որպես կանոն ներառում են ծառայությունների ամենաքիչը երկու գործառույթներ՝ հյուրանոցային և տրանսպորտային: Հյուրանոցային հատվածը կարող է հասնել մինչև 60-65%, իսկ տրանսպորտային ծառայությունները կազմում են զբոսաշրջային փաթեթի արժեքի մոտավորապես 10-15%,ը, այսինքն՝ հյուրանոցային ծառայության մասն է հիմնականում պայմանավորում ընդհանուր զբոսաշրջային փաթեթի շուկայական գինը [54]:

Հյուրանոցային տնտեսություն: Տնտեսական գործունեության մեջ հյուրանոցային ինդուստրիան ներառում է հյուրանոցային ծառայություններ և կազմակերպում է կարճաժամկետ կացություն հյուրանոցներում, կեմպինգներում, հյուրատներում և այլն [69]: Հյուրանոցային ընկերությունները Սյունիքի մարզում մասնավոր տնտեսվարող սուբյեկտներ են համարվում, որոնց կառուցումն ու հետագա շահագործումը խրախուսվում է պետության կողմից՝ (հավելված 7):

Սակայն սրանով կարծես, պետության մասնակցությունը վերանում է, և տուրօպերատոր-հյուրանոց փոխհարաբերությունները մնում են միայն շուկայի կարգավորման հույսին: Մտահոգիչն այն է, որ զբոսաշրջային ընկերությունը շատ հաճախ մնում է «խաղից դուրս», սակայն իր բնույթով կապող օղակ է հանդիսանում ողջ ոլորտի համար:

Շատ հյուրանոցներ բոլորովին չեն ընկալում հատուկ կամ զեղչված գների քաղաքականության իմաստը և ըստ նրանց տուրօպերատորն ընդամենն անհարկի միջնորդ է: Հյուրանոցների մեծ մասն այսպես կոչված կորպորատիվ հաճախորդներին տրամադրում է ավելի ցածր սակագներ, քան տուրօպերատորներին [54]:

Անմիջապես նկատենք, որ այս մտավախությունը տեղին չէ, քանի որ կորպորատիվ պատվերներն այսպես, թե այնպես լինելու են, սակայն հարցը միայն պատվիրատուի մասին է: Եթե տուրօպերատորներն ունենան շուկայում ամենացածր արժեքները, ապա բոլորը կաշխատեն նրանց միջոցով:

Այս փորձը կիրառվում է բազմաթիվ զարգացած երկրներում պետական կառավարման և կանոնակարգման միջոցով և դրանցից զբոսաշրջային հոսքերը ոչ միայն չեն պակասում, այլ ավելանում են:

Պետական վերահսկողության և մոնիտորինգի պակասի հետևանքով հյուրանոցային տնտեսությունները կառուցվում են տարերայնորեն՝ թե սպասարկման չափանիշների, և թե նպատակների առումով: Տնտեսության բարձր ռիսկայնությունը ձեռներեցներին մղում է ներդրված միջոցներն արագորեն ետ բերելու պահանջի, որն էլ հաճախ հանգեցնում է դաշտի աղավաղմանը: Թերևս սա է պատճառը, որ ինչպես ՀՀ-ում և այդ թվում նաև Սյունիքի մարզում կառուցվող հյուրանոցների մեծ մասի բաժնետերերը հավակնում են 4 և 5 աստղերի կարգավիճակի, չնայած որ սպասարկման առումով իրականում շատ են ետ մնում:

Տնտեսական հետազոտությունների պակասով և տուրօպերատորների կարծիքն արհամարելու պատճառով էլ շատ հյուրանոցներ այսօր սնանկացման եզրին են, քանի որ տնտեսական առաջադրանքի կամ էլ գործարար պլանի տարրական նորմերը չեն պահպանվում: Մեկ այլ ցավոտ հարց ևս, հյուրանոցների հաճախ անհարկի շուկայավարման գործունեությունն է, սակայն դրանց զբաղվածությունն ապահովող հիմնական սուբյեկտը պետք է լինի զբոսաշրջային ընկերությունը: Որպես անօգուտ մարկետինգային գործունեության օրինակ կարելի է բերել մասնավորապես, հյուրանոցների մասնակցությունը միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին: Հյուրանոցները մեծ գումարներ են ծախսում նմանօրինակ միջոցառումներին մասնակցելու համար, մինչդեռ դրանց գովազդող հիմնական շուկայական գործիքը

պետք է լինի տուրօպերատորը, որն այլընտրանք չունի, քան զբոսաշրջիկներին հյուրանոցներում տեղավորելը: Այս միջոցները կարող են ուղղվել կամ սակագների իջեցման, կամ էլ լրացուցիչ բյուջե՝տուրօպերատորների մարկետինգային բեռը թեթևացնելու նպատակով: Որպես արդյունք, տարեցտարի փոխվում են հյուրանոցային սակագները և փաթեթի արժեքները, որոնք շատ բացասաբար են ընկալվում զբոսաշրջային խիստ մրցակցային շուկայի կողմից: Հենց այս պատճառով էլ հյուրանոցները շատ ուշ են հրապարակում առաջիկա զբոսաշրջային սեզոնի սակագները, որը բարդացնում է հայկական զբոսաշրջային ապրանքի առաջխաղացումը համաշխարհային շուկայում: Արտասահմանյան գործակալները միշտ էլ նախընտրում են կանխատեսելի և ստաբիլ գործընկերներին:

Որպեսզի հյուրանոցային համալիրը շահութաբեր լինի, անհրաժեշտ է ապահովել միջինը տարեկան 45-47% զբաղվածություն: Իսկ աշխարհում ընդունելի է համարվում միջինը 75-80% ցուցանիշը (աղյուսակ 13):

Աղյուսակ 13

Հյուրանոցային տնտեսության եկամտի հիմնական աղբյուրները [12]

Եկամտի տեսակը հյուրանոցային տնտեսությունում	**Միջին արժեքը**
Զուտ գիշերակացի ծառայություններ	55%
Սննդի համակարգ (ռեստորաններ, սրճարաններ)	25%
Խմիչքների վաճառք բարերում (այդ թվում՝մինի-բար)	10%
Լրացուցիչ ծառայություններ (լվածք, արդարում և այլն)	3%
Հեռախոսային ծառայություններ	1.5%
Տարածքների վարձակալություն	2%

Համաձայն պաշտոնական տվյալների՝ Սյունիքի մարզում ցուցանիշը կազմում է մոտ 40% [54]: Սակայն մեր գնահատականներով այդ ցուցանիշը չի գերազանցում տարեկան միջին հաշվով 30% -ը:

Ուստի պարզ է, որ հյուրանոցները մի կողմից ստիպված են աշխատել բարձր սակագներով, իսկ մյուս կողմից փորձում են դիմագրավել գնային մրցակցությանը: Ինչպես տեսնում ենք, առկա են նաև շուկայի սահմանափակության և հոսքերի

սակավության խնդիրներ, որոնք էլ հենց լրջագույն հոգածության առարկա են մարզի համար: Զբոսաշրջության զարգացման համակարգում հյուրընկալությունը համարվում է ամենաազդեցիկ կառուցվածքային բաղադրիչներից մեկը: Համաձայն պաշտոնական տվյալների Սյունիքի մարզում ներկայումս գործում են 24 հյուրանոցներ, որոնց առանձին հնարավորությունները տատանվում է 2-ից 64 մարդ/մահճակալ: Տեղերի ընդհանուր թիվը կազմում է 488 մարդ/մահճակալ, իսկ հյուրանոցների մեկ օրվա գիշերակացի արժեքը մեկ մարդու հաշվով կազմում է շուրջ 20000 դրամ, նվազագույնը՝ 7000 դրամ, իսկ առավելագույնը՝45000 դրամ: Հյուրանոցներում գերակշռում են ստանդարտ կարգի սենյակներ, որը արտահայտում է հյուրանոցային ծառայությունների սպասարկման ցածր որակի մասին: Պաշտոնական տվյալներից պարզվում է նաև, որ Մեղրի Դաստակերտ քաղաքներում բացակայում են հյուրատները՝ (հավելված 7):

Տրանսպորտ: Սյունիքի մարզում նախկինում գործել են Կապանի, Գորիսի և Սիսիանի օդանավակայանները, որոնք իրականացրել են ներհանրապետական թռիչքներ, սակայն խորհրդային միության փլուզումից հետո դրանք չեն գործում: Հայ ադրբեջանական հակամարտության պատճառով չի գործում նաև Երևան-Մեղրի-Կապան երկաթգիծը:

Մեր օրերում Սյունիքի տարածքով է անցնում Իրան-Հայաստան-Վրաստան, Երևան-Ստեփանակերտ տարանցիկ ավտոճանապարհները, ինչով և պայմանավորված է ավտոմոբիլային տրանսպորտի գերակա դերը Սյունիքի մարզի տնտեսության մեջ, սոցիալական և պաշտպանական բնագավառներում:

Ավտոմոբիլային ճանապարհները հանդիսանում են Սյունիքի մարզի տրանսպորտային համակարգի կարևոր բաղկացուցիչ մասը, և ներկա փուլում վճռորոշ նշանակություն ունեն մարզի տնտեսական և սոցիալական զարգացման համար: Սյունիքի մարզում ուղևորային բեռնափոխադրումները ավտոմոբիլային տրանսպորտի միջոցով է իրականացվում, որն էլ արտահայտում է ավտոմոբիլային ճանապարհների գերակա դերը մարզի տնտեսությունում, սոցիալական, պաշտպանական բնագավառներում: Լիակատար աշխատանքների համար պահանջվում են

արդյունավետ գործող, անվտանգ երթևեկություն ապահովող ավտոճանապարհային ցանցեր:

Կապը, տրանսպորտը և ճանապարհային ցանցը համարվում են ենթակառուցվածքային կարևոր բաղադրիչներ: Սյունիքի մարզում վերջին տարիներին, էական փոփոխություններ և զարգացումներ են նկատվում ենթակառուցվածքային բաղադրիչների համակարգում: Բարելավումները հատկապես էականորեն նկատվում են ճանապարհային ցանցի համակարգում: Ընդհանուր առմամբ Սյունիքի մարզի օգտագործման ավտոճանապարհային ցանցի երկարությունը կազմում է 515.2կմ, որից Սիսիանի տարածաշրջանում 147կմ, Գորիսի տարածաշրջանում 146.7կմ, Կապանի տարածաշրջանում 172.3կմ, Մեղրու տարածաշրջանում 49.2կմ [54]:

ՀՀ այդ թվում Սյունիքի մարզի տարածքում միջպետական, հանրապետական ճանապարհների կառավարումն իրականացվում է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից: Մարզի տարածքում ավտոճանապարհների ձմեռային և ընթացիկ պահպանության աշխատանքներ են իրականացվում ՀՀ պետական բյուջեից կատարվող ամենամյա հատկացումների սահմաններում: Խճուղային ճանապարհների համեմատաբար զարգացած, ցանցի շնորհիվ բնակավայրերն ավտոմոբիլային հաղորդակցությամբ կապված են մարզկենտրոնի և Երևանի հետ [27]:

Սյունիքի մարզի զբոսաշրջային ենթակառուցվածքում ծանրակշիռ տեղ ունի «Տաթևեր» ճոպանուղին, որի կառուցումից և շահագործումից հետո զբոսաշրջիկների այցելությունը Սյունիքի մարզ զգալիորեն ավելացավ: Մասնավորապես՝ եթե մինչև Տաթևի ճոպանուղու կառուցումը Տաթև էին այցելում տարեկան մոտ 15 հազար մարդ, ապա ճոպանուղու շահագործումից հետո այստեղ է գալիս տարեկան մոտ 70 հազար մարդ: Իրավասու պաշտոնատար մարմինների հավաստմամբ՝600 զբոսաշրջիկ է օրական այցելում Որոտանի կիրճ և Տաթևի ճոպանուղի:

«Տաթևեր» ճոպանուղին 2013 թվականի հուլիսին ընդունեց 150 հազարերորդ ուղևորին: Հարյուր հազարերորդ ուղևորը գրանցվել էր 2012 թվականի հուլիսին (նկ.7):



Նկ. 7 «Տաթևեր» ճոպանուղու ուղևորների դինամիկան 2010-2014 թթ:

«Տաթևի դարպասներ» զբոսաշրջային գոտի այցելող զբոսաշրջիկների թիվը տարեկան ավելանում է 10–14%-ով: Այցելուների 65%-ը ՀՀ բնակիչներ են, 35%-ը՝ արտասահմանցի զբոսաշրջիկներ [91]:

ՀՀ կառավարության կողմից 2015 թվականի ապրիլի 29-ին հաստատվել է «Տաթև» ազգային պարկ ստեղծելու ծրագիր: Այն կապահովի տարածքի էկոհամակարգերի և հարուստ կենսաբազմազանության հետագա պահպանությունը:

Գիդ-զբոսավարներ: Այս ճյուղը համեմատաբար քիչ է տուժել անցումային շրջանում և այժմ հաջողությամբ համագործակցում է ներգնա զբոսաշրջության տնտեսվարողների հետ: Սակայն այժմ Սյունիքի մարզում առկա է մեկ այլ խնդիր՝ սերնդափոխությունը և երիտասարդների ահագնացող արտագաղթը:

Զբոսավարների վերապատրաստման կուրսերը կրում են ոչ պարբերական բնույթ, և հստակեցված չէ որակավորման և լիցենզավորման խնդիրը [12]: Դա է պատճառը, որ առաջատար տուրօպերատորները նախընտրում են գործ ունենալ հին դպրոցի զբոսավարների հետ, եթե նրանք անգամ չեն անցել հավաստագրման պահանջվող կարգը: Պետական քաղաքականության և անվտանգության խնդիրն է, որ արտասահմանյան հյուրերի հետ աշխատող մարդիկ արտահայտեն ոչ թե իրենց անձնական տեսակետներն այս կամ այն հարցի շուրջ այլ ունենան ՀՀ Արտաքին

Գործերի նախարարության կողմից մշակված և պարբերաբար թարմացվող հստակ ընդհանուր տեսակետ [42]:

Հասարակական սննդի հաստատություններ: Այս ենթաոլորտն այժմ պետական վերահսկողությունից դուրս է գտնվում և զարգացել է տարերայնորեն: Սյունիքի մարզում գործում են բազմաթիվ ռեստորաններ, արագ սննդի կետեր, սրճարաններ, որոնք հիմնականում կենտրոնացված են մարզի քաղաքներում, գլխավոր ճանապարհների հարևանությամբ և զբոսաշրջիկների հիմնական այցելության վայրերում: Սննդի այս ոլորտը գլխավորապես կատարում է իր գործառույթները, սակայն սպասարկման որակը հիմնականում մնում է ցածր մակարդակում: Այս բնագավառում նույնպես պետական միջամտության կարիք է զգացվում:

Մշակութային և այլ տեսարժան վայրեր: Այս ենթաոլորտը կազմում է Սյունիքի մարզի հիմնական առանցքը և ինտելեկտուալ սեփականությունը, ձևավորվել է սիրողական և նեղ մասնագիտական հետաքրքրություններից ելնելով:

Զբոսաշրջության ոլորտում նկատվում է այն միտումը, որ շրջագայության և հանգստի ժամանակ մարդիկ փորձում են փոխլրացնել այն, ինչ նրանք չունեն առօրյա կենցաղում: Սովորաբար այն մարդիկ, ովքեր ապրում են աղմկոտ վայրերում, փորձում են իրենց ազատ ժամանակն անցկացնել հանգիստ միջավայրում, որն իրենց առօրյա կյանքում բացակայում է: Անհրաժեշտ է զարգացնել ագրոզբոսաշրջություն, որը հանգիստն է գյուղական վայրում: Հանգստի այս ձևն այցելուներին, զբոսաշրջիկներին, թույլ է տալիս ծանոթանալ գյուղատնտեսական մթերքների արտադրությանը, ճաշակել բնական, թարմ և առողջարար սննդամթերք, ինչպես նաև օգտվել ոչ սովորական պայմաններում ժամանցի հնարավորությունից: Ագրոզբոսաշրջության զարգացման տեսանկյունից զբոսաշրջիկներին սկսել է հետաքրքրել նաև Սյունիքի մարզը: Զբաղվելով նաև գյուղական զբոսաշրջությամբ, զբոսաշրջիկն ապրելով գյուղական վայրերում՝ մասնակցում է գյուղատնտեսական աշխատանքներին, բերքահավաքներին: Եթե տարիներ առաջ «Bed and breakfast» անկողին և նախաճաշ հասկացությունը առհասարակ զարգացած չէր, ապա այսօր Սյունիքի մարզում սկսել են գործել «հացուկաց» տեսակի հյուրատներ, որոնք առավելապես զարգացած են ոչ զբոսաշրջային

կենտրոններում և որոնց կեցության արժեքը կազմում է շուրջ 20-30 դոլար, ներառյալ՝ նախաճաշը:

Դրանք հատկապես կառուցվում են զբոսաշրջային կենտրոններից դուրս այն հատվածներում, որտեղ չկան հյուրանոցային ցանցեր, և բավականաչափ զարգացած չեն զբոսաշրջային ենթակառուցվածքները: Ագրոզբոսաշրջությունը դառնում է գրավիչ նաև որոշ գործոնների շնորհիվ՝ մասնավորապես քրիստոնեության ու մշակույթի, քանի որ պատմամշակութային շատ վայրեր մոտ են հենց գյուղական համայնքներին: Եթե նախկինում զբոսաշրջիկներն այցելում էին միայն ճանաչողական, հոգևոր ու պատմամշակութային զբոսաշրջության նպատակով, ապա այժմ Սյունիքի մարզը դարձել է որպես ժամանցի և հանգստի կազմակերպման գոտի:

Հետզհետե աճող պահանջարկը զբոսաշրջության այս ճյուղի նկատմամբ բերում է հատուկ պահպանվող տարածքների՝ հատկապես ազգային և բնական պարկերի ստեղծմանը, այդ առումով՝ Սյունիքում մեծապես կարևորվում է «Արևիկ» ազգային պարկի դերն ու նշանակությունը: Ագրոտուրիզմի զարգացմամբ Սյունիքի մարզի համայնքային բյուջեները կունենան զգալի հավելյալ ֆինանսական մուտքեր: Դա հատկապես վերաբերվում է բարձր լեռնային և սահմանամերձ գյուղական համայնքներին: Ագրոտուրիզմի զարգացումը կարող է պահպանել յուրահատուկ տարածքների բնական գեղեցկությունը և բարձրացնել ազգաբնակչության կյանքի որակը, հետևաբար և կենսամակարդակը, հնարավորություն տալով տնտեսության հետագա կայուն զարգացմանը:

Այսպիսով, կատարված վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Սյունիքի մարզում զբոսաշրջային ենթակառուցվածքը և նրա առանձին բաղադրիչներ դեռևս գտնվում են կայացման փուլում և դրանց հետագա զարգացումն ու կատարելագործումը էական դեր կունենա մարզում զբոսաշրջության տարբեր տեսակների զարգացման և սոցիալ-տնտեսական առաջընթացի համար:

Գլուխ 3. ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Զբոսաշրջության կազմակերպման վրա ազդող գործոնները

Անցյալ դարի վերջերից տարբեր գիտություններ առավել քան կարևորում են ռեկրեացիայի՝ հանգստի, աշխատանքի ընթացքում վատնած մարդկային ուժի վերականգնման, զբոսաշրջության կազմակերպման, դրա զարգացման ու հեռանկարների հետազոտությանը: Մասնավորապես կարևորվում է զբոսաշրջության տարածքային կազմակերպման հարցը [22,58,60,69]:

Զբոսաշրջային գործունեության տարածքային կազմակերպման սոցիալ-տնտեսական գործոնները: Հանգստի և զբոսաշրջության կազմակերպման, ղեկավարման, պլանավորման վրա ազդում են բազմաթիվ, առանձնապես սոցիալ-տնտեսական նշանակության գործոններ: Պայմանականորեն դրանք կարելի է բաժանել երկու մեծ խմբերի.

- զբոսաշրջային գործունեության անհրաժեշտություն ծնող գործոններ, այսինքն՝ հանգստի կազմակերպման հնարավորությունն ապահովող գործոններ,
- հանգստի կազմակերպումն իրականացնող գործոններ:

Պետք է տարբերել այդ գործոնների ազդեցությունը տարածքային զբոսաշրջային գործունեության վրա ընդհանրապես և հանգստի համակարգի տարածքային տեղայնացման վրա՝ մասնավորապես:

Զբոսաշրջային գործունեության կազմակերպման անհրաժեշտություն ծնող գործոններից առաջատարներն են հանդիսանում՝ երկրի արտադրողական ուժերի զարգացումը, նյութական ապահովվածության բարձրացումը և բնակչության զարգացածության աստիճանը:

Արտադրողական ուժերի զարգացումն ազդում է ընդհանուր բյուջեի և ազատ ժամանակի վրա: Եթե նախորդ դարի կեսերին ժամանակի 56%-ը աշխատավորը տրամադրում էր աշխատանքին, 33%-ը՝ քնելուն, և 11%-ը միայն հանգստին, ապա այժմ զարգացած երկրներում աշխատանքը կազմում է ընդհանուր ժամանակի 10-25%-ը, քունը՝ 33%-ը, և ոչ աշխատանքային ժամանակը՝ 39-40%-ը: Ազատ ժամանակը ներառում

է արձակուրդները, տոն և ազատ օրերը, մինչև դպրոց գնալն ու թոշակի անցնելուց հետո եղած ազատ ժամանակը [82]:

Արտադրողական ուժերի զարգացումը և դրանց տարածքային կուտակումը արտահայտվում են նաև քաղաքային բնակչության ավելացմամբ: Այժմ աշխարհի բնակչության 1/3-ը ապրում է քաղաքում: Բնակչության այդպիսի մեծ կուտակումները քաղաքներում և հատկապես մեծ ագլոմերացիաներում ու մեգապոլիսներում, որտեղ օդը խիստ աղտոտված է, միկրոկլիման փոխված, չափազանց աղմկոտ, քիչ են արևն ու կանաչը, բացասաբար են ազդում բնակչության առողջության վրա [65]:

Ուրբանիզացիայի անդառնալի գործընթացին հետևում է բնակչության հանգստի կազմակերպման անհրաժեշտությունը: Ուրբանիզացվող երկրներում ավելանում է զբոսաշրջային բնական ռեսուրսների դերը: Վերջին տարիներին քաղաքային զբոսաշրջության զարգացման միտում է նկատվում: Որքան մեծ է քաղաքի բնակչության թիվը, այնքան շատ մարդիկ են ձգտում իրենց հանգիստը կազմակերպել բնակության վայրից հեռու:Ուրբանիզացիայի աստիճանն ունի տարածքային մեծ տարբերություններ, որն էլ արտացոլվում է զբոսաշրջային պահանջների տարածքային անհավասարաչափ տեղաբաշխման մեջ, հատկապես կարճաժամկետ հանգստի համակարգերի կազմակերպման տեսանկյունից[67]:

Սյունիքի մարզում ուրբանիզացիայի ցուցանիշը կազմում է 71%, քաղաքաբնակների թիվը 103.6 հազ.մարդ է գյուղաբնակներինը՝ 49.4 հազ.մարդ [39]:

Սյունիքի մարզի հյուսիսային շրջաններում՝ Սիսիանի և Գորիսի տարածաշրջաններում, գերակշռում են գյուղատնտեսության ոլորտում զբաղվածները, մինչդեռ Կապանի և Մեղրու տարածաշրջաններում առավել շատ են ոչ գյուղատնտեսական ոլորտում զբաղվածները, հատկապես լեռնամետալուրգիական ճյուղում:

Զբոսաշրջային ակտիվության վրա ազդում է նաև բնակչության մասնագիտական կազմը: Հայտնի է, որ զբոսաշրջային պահանջմունքներ ամենից առաջ ունեն ինտենսիվ աշխատանքով զբաղվող բանվորներն ու ծառայողները, ապա ուսանողները և դպրոցականները, իսկ վերջին տեղում են գյուղատնտեսության մեջ զբաղվածները:

Ժամանակակից հասարակության մեջ ոչ թե անհատները, այլ առավելապես ընտանիքն է զբոսաշրջության հիմնական մասնակիցը: Ուստի անհրաժեշտ է հաշվի առնել ընտանիքների առանձնահատուկ զբոսաշրջային պահանջմունքները: Դրանց են վերաբերում նաև երեխաների դաստիարակությունը և առողջության ամրապնդումը, ընտանիքի և նրա առանձին անդամների որևէ վայրում հանգստանալու ավանդույթներն ու սովորույթները հաշվի առնելը և այլն:

Նյութական բարեկեցության բարձրացումը դրսևորվում է բնակչության եկամուտների և ազգային եկամտի սպառողական մասի նշանակալի աճով: Ներկայումս բարձրացել է բնակչության տրանսպորտային շարժը՝ կապված հատկապես անձնական տրանսպորտային պարկի ընդարձակման հետ: Բարեկեցության բարձրացումը կանխորոշում է հանգստի հարմարավետ պայմանների նկատմամբ պահանջների ավելացում, որոնք տանում են բնակչության զբոսաշրջային շարժունակության նշանակալի աճի: Բնակչության կենսամակարդակի բարձրացումը էականորեն ազդում է զբոսաշրջության պահանջարկի ձևավորման և որակական բնութագրի վրա. դրանով էլ զբոսաշրջային համակարգերի որակական չափանիշները ցույց են տալիս բնակչության զարգացման մակարդակը: Ավտոմոբիլացումը և կրթական մակարդակը, օրինակ, առավել դինամիկ են, քան եկամուտների մակարդակը և բնակչության տարիքային կազմը: Զբոսաշրջային կազմակերպման անհրաժեշտություն առաջացնող կարևորագույն գործոն են նաև օտարերկրյա զբոսաշրջիկների և տեղացի հանգստացողների միջև փոխհարաբերությունները:

Զբոսաշրջային պահանջարկն իրականացնող սոցիալ-տնտեսական գործոններ: Շատ հեղինակներ համակարծիք են զբոսաշրջային գործունեության պահանջմունքների իրականացումը որոշող սոցիալ-տնտեսական գլխավոր գործոնները բնորոշելիս. դրանցից են՝ տրանսպորտային հասանելիությունը, զբոսաշրջային ձեռնարկությունների քանակը, որը կբավարարի տարեկան պահանջարկը, ազատ ժամանակի անցկացմանն ուղղված ենթակառուցվածքների զարգացածության աստիճանը, աշխատանքային ռեսուրսների առկայությունը և այլն: Ամբողջությամբ վերցրած տարածքի զբոսաշրջային գործունեության կազմակերպման վրա սոցիալ-տնտեսական բոլոր գործոնների

ազդեցությունն իրականացվում է զբոսաշրջային ծառայությունների ցանցի տարածքային տեղաբաշխման և զարգացման միջոցով:

Զբոսաշրջային ծառայությունների ցանցը, մի կողմից հանդես է գալիս որպես իրականացնող սոցիալ-տնտեսական գլխավոր գործոն, մյուս կողմից՝ մնացած բոլոր գործոնների միասնական փոխազդեցության արդյունքն է:

Ազատ ժամանակը՝ ռեկրեացիոն համակարգերի տարածքային կազմակերպման գործոն: Ազատ ժամանցի ուսումնասիրությունը բազմաթիվ արմատներ ունի, որը սկզբում դիտարկվել է որպես սոցիալական երևույթ արդյունաբերական հասարակության համար: Այս ոլորտը սկիզբ է առել մի քանի տասնամյակ առաջ: Ժամանակակից ըմբռնումը ազատ ժամանցի սկզբում նկատի է ունեցել պարզապես ազատ ժամանակը: Սոցիոլոգները ժամանակն ուսումնասիրում են տարածությունից դուրս, չնայած ակնհայտ է, որ ազատ ժամանակի օգտագործման խնդիրը չի կարող չհաշվարկվել տարածքային շերտավորմամբ և զբոսաշրջային գործընթացների հետ հորիզոնական կապերով: Ազատ ժամանակը՝ հանգստի տարածքային կազմակերպման գործոնը, պետք է լուսաբանվի որպես գիտական կատեգորիա՝ ժամանակագրական, կառուցվածքային, արժեքային և գործառական տեսանկյուններից [22,58,85]:

Ժամանակի հայեցակետ: Ազատ ժամանակի ժամանակագրական հայեցակետը բնութագրվում է հասարակության, սոցիալական խմբերի և առանձին անհատների ազատ ժամանակի դինամիկությամբ ու մեծությամբ: Հասարակության ազատ ժամանակի մեծությունը կապված են հասարակական աշխատանքի արտադրողականության մակարդակից և արտադրական հարաբերությունների բնույթից, իսկ սոցիալական խմբերի և անհատների դեպքում՝ մասնագիտությունից, աշխատանքի պայմաններից, տարիքից, սեռից և մի շարք այլ գործոններից: Հասարակության ժամանակային ֆոնդի բաշխման մեջ առանձնացվում է երկու տարր՝ աշխատանքային և ոչ աշխատանքային ժամանակներ:

Ազատ ժամանակի կարևորագույն բնութագրիչներից են ճկունությունը և շարժունակությունը, որոնք կախված են ժամանակային ֆոնդից: Բացի այդ, ազատ ժամանակի և ոչ աշխատանքային ժամանակի միջև սահմանը պայմանական է: Դա

բնորոշ է հատկապես գիտաշխատողներին, արվեստի մարդկանց և չնորմավորված աշխատաժամանակով աշխատողներին:

Հասարակության ազատ և զբոսաշրջային ժամանակի աճը պահանջում է զբոսաշրջային և հանգստի մեծ տարածքներ: Հանգստի տարածքների ժամանակակից բեռնվածությունը վկայում է այն մասին, որ զբոսաշրջային համակարգերի հնարավորությունների համեմատ՝ ազատ ժամանակն աճել է:

Կառուցվածքային հայեցակետ: Ազատ ժամանակի կառուցվածքային հայեցակետը, առաջին հերթին, պայմանավորված է մարդու կենսագործունեության ռիթմով, այսինքն՝ օրվա, շաբաթվա, տարվա և ամբողջ կյանքի ազատ ժամանակով, երկրորդ հերթին՝ ազատ ժամանակ ունեցող սուբյեկտով՝ հասարակությունով, սոցիալական խմբով, անհատով: Զբոսաշրջային գործունեության արդյունավետությունը կապված է ամենօրյա, շաբաթական ու արձակուրդային փուլերի կարգավորման և համադրության հետ: Շատ երկրներում լայն կիրառություն ունի քաղաքաբնակների համար «երկրորդ բնակարանների»՝ ամառանոցների ստեղծումը մերձքաղաքային և նույնիսկ հեռավոր շրջաններում:

Արժեքային հայեցակետ: Ազատ ժամանակի այս հայեցակետը, նախ, բնութագրում է հասարակության մեջ ազատ ժամանակի դերն ու տեղը, ապա բացահայտում մարդու ազատ ժամանակի և աշխատանքային գործունեության փոխպայմանավորվածությունը:

Գործառական հայեցակետ: Ազատ ժամանակի գործառական հայեցակետը կապված է զբոսաշրջային գործունեության տեսակների բացահայտման հետ: Սոցիոլոգիայում առանձնանում են ազատ ժամանակի համալիր գործառույթ, այսինքն մարդու ֆիզիկական, հոգեբանական և մտավոր ուժերի վերականգնման և մարդու զարգացման գործառույթ հասկացությունները:

Սոցիոլոգները մշակել են նաև ազատ ժամանակի մի քանի տիպի զբաղմունքներ [84]:

1. հասարակական օգտակար գործունեություն,
2. հոգևոր պահանջմունքների բավարարում,
3. հանգստի տարբեր տեսակներ. ակտիվ՝ մարմնակրթություն, սպորտ, տուրիզմ, զվարճանքներ և այլն կամ պասիվ հանգիստ:

Այսպիսով՝ վերոհիշյալ գործոններն էական դերակատարում ունեն Սյունիքի մարզում զբոսաշրջային համակարգերի տարածքային կազմակերպման հարցում և կանխորոշում են նաև զբոսաշրջության ինդուստրիայի մասնագիտացման բնույթն ու մարզի ներսում ստեղծում զբոսաշրջային յուրահատուկ պահանջարկ:

3.2. Զբոսաշրջային առաջարկն ու պահանջարկը

Զբոսաշրջության պահանջարկն ուսումնասիրելիս անհրաժեշտ է պարզել, թե ինչպես է դա ընկալվում, ինչ գործոններ են խթանում կամ արգելակում պահանջարկի աճը, ինչպիսին է զբոսաշրջիկի դիրքորոշումը և նրա հետագա վարքագիծը որևէ ապրանքի կամ ծառայության գնման գործընթացում, ինչպիսի հարկադրանքներ են կիրառվում զբոսաշրջության ոլորտի հարաբերական նվաճման ընթացքում: Զբոսաշրջային ծառայությունների պահանջարկը ձևավորվում է բազմաթիվ գործոնների ազդեցությամբ, որոնք կարելի է դասակարգել երեք հիմնական խմբերում՝ ուղղակի, անուղղակի, շուկայական [71]:

Ուղղակի գործոններից են՝ ֆինանսական ներդրումները զբոսաշրջության բնագավառում, մուտքի և ելքի պարզեցված պայմանների ստեղծումը, փոխադրումների ազատականացումը, անվտանգության ապահովումը և այլն: Անուղղակի գործոններից են՝ տնտեսական, քաղաքական և ֆինանսական ներդրումները զբոսաշրջային բոլոր ենթակառուցվածքներում, որոնք անմիջական կապ չունեն զբոսաշրջության հետ, սակայն ազդում են պահանջարկի չափի և ծավալների վրա: Շուկայական գործոնների խմբին են դասվում՝ մարզի բարենպաստ նկարագրի ձևավորումը, զովազդային գործունեության ծավալումը, դրանց դիմաց վճարի նվազումը, զբոսաշրջային ապրանքի պահանջարկի և առաջարկի համակցումը, զբոսաշրջիկների ցանկությունների, պահանջմունքների ուսումնասիրումը և դրա հիման վրա շուկայի կարգավորումը:

Զբոսաշրջության ոլորտում պահանջարկը կարող է լինել.

1. Տնտեսական, որը հիմնականում դրսևորվում է դրամի, ժամանակի խնայողության ձևով, ինչպես նաև հարմարավետության որոշակի մակարդակի հասնելու մեջ:
2. Որոշակի նպատակների հասնելու պահանջարկ, օրինակ՝ նորույթը, մյուսներից տարբերվելը, առավել ժամանակակից լինելը, անկախությունը և այլն: Այս խմբի մեջ

մտնում է նաև այն պահանջարկը, որը արտահայտում է որոշակի պահպանողականություն, ավանդապահություն, հուսալիություն, կայունություն և այլն:

3. Հեղինակություն ձեռք բերելու պահանջմունք, որն արտահայտվում է, մի կողմից՝ որոշակի խմբի պատկանելու ձգտում և բավարարում է որևէ ընկերության պատկանելու, տարբեր միությունների և կազմակերպությունների մասնակցության, ընկերական հարաբերությունների հաստատմանն: Մյուս կոմից՝ հեղինակությունը կարող է նշանակել լրիվ անկախություն: Այս դեպքում խոսքն արդեն անհատականության, պահանջարկը նկատելի լինելու, ամբոխից կամ միատեսակությունից առանձնանալու մասին է:
4. Պատվասիրության պահանջմունք, որը բավարարվում է որոշակի հաջողությունների հասնելու միջոցով, շրջապատի հարգանքի, հասարակության մեջ որոշակի կարգավիճակի՝ իմիջի առկայության, իշխանության, դիրքայնության, նյութական ապահովության հասնելու ժամանակ [60]:

Սյունիքի մարզի զբոսաշրջության ոլորտում մրցակցությունը բավականաչափ սուր է, ըստ էության մոտ է կատարյալ մրցակցային դաշտի դասական սահմանմանը: Սակայն մեծ մտահոգություն է առաջացնում հարկերից խուսափելու և իրական շրջանառության ծավալները ծածկելու միտումը: Մի շարք զբոսաշրջային ընկերություններ աշխատում են ֆիզիկական բանկային հաշիվների միջոցով, երբ դրսից ստացվող գումարները նստում են անձնական հաշիվների վրա և անկաշկանդ կերպով տնօրինվում է ընկերությունների ղեկավարության կողմից: Պետությունն այս դեպքում որևէ եկամուտ չի ստանում տնտեսվարողների գործարարությունից և ծառայության մատակարարներից: Միաժամանակ պետական վիճակագրական վարչությունը ստանում է իրական տվյալներ: Այս գործելաոճը շուկայում ստեղծում է անհավասար մրցակցություն և տնտեսվարողները հայտնվում են մրցակցային շուկայից դուրս:

Սյունիքի մարզի և ընդհանրապես ՀՀ զբոսաշրջության շուկայում տեղ գտնող անառողջ մրցակցության դեպքերը պայմանավորված են նրանով, որ շուկան դեռևս լավ կողմնորոշված չէ դեպի սպառողը, անհրաժեշտ է ձևավորել որակ-գին չափանիշների համապատասխանող առաջարկի համակարգ: Զբոսաշրջային շուկայում անառողջ

մրցակցությունը դրսևորվում է նաև ստվերայնությամբ, երբ կազմակերպությունները չեն գրանցվում, առաջարկում են ցածր գնով և անորակ ճամփորդական փաթեթներ՝ խոչընդոտելով բարձրորակ փաթեթեներ առաջարկող կազմակերպությունների աշխատանքին:

Մրցակցային դաշտը պետք է կենտրոնանա ոչ գնային մրցակցության վրա, սակայն այսօր, հատկապես տուրօպերատորների շրջանում, այն կենտրոնանում է գնային մրցակցությամբ, որն էլ բերում է դաշտի աղավաղմանը՝ գնային պայքարի արդյունքում: Որպես հետևանք սպասարկման որակը ետին պլան է մղվում, որը միանշանակ ազդում է մարզի վարկանիշի և սպասվելիք եկամուտների վրա:

Միասնական ճակատով հանդես գալու դեպքում տուրօպերատորները կարող են նաև մրցակցելու փոխարեն որոշ հարցերում հաջողությամբ համագործակցել: Օրինակ, հնարավոր է որոշ թիրախային շուկաների համար, որոնցում վաճառվում է միատեսակ զբոսաշրջային ապրանք, համաձայնության գալ գները կայուն պահելու մասին: Հնարավոր է նաև ջանքերը համատեղել, միասնական տեղեկատվական դաշտ ստեղծելով, որից կշահեն բոլոր մասնակիցները:

Զբոսաշրջային ոլորտը, որպես տնտեսության ճյուղերից մեկը, արտացոլում է մեր հասարակության իրական վիճակը: Բնականաբար նաև հնարավոր չէ անցումային տնտեսությունից ակնկալել արագ և միանշանակորեն արդյունավետ բարեփոխումներ կարճ ժամկետում: Սակայն, զբոսաշրջությունը կարող է Սյունիքի մարզի համար տնտեսության եկամտաբեր ճյուղ դառնալ, եթե անգամ սահմանափակ ֆինանսական հնարավորությունների պայմաններում արդյունավետ որոշումներ կայացվեն, որոնք զուգակցվեն մշտապես իրականացվող քաղաքական կամքի հետ: Զբոսաշրջային հոսքերի աճը կխթանի նրան առնչվող բոլոր ենթակառուցվածքների արագ զարգացմանը: Ամբողջ խնդիրը կայանում է ժամանակին ճիշտ որոշումներ կայացնելուն և դրանք հետևողականորեն կյանքի կոչելուն: Սյունիքի մարզը կարող է զբոսաշրջային ինդուստրիայի առումով վերելք ապրել:

Ինչպես և գործարարության այլ բնագավառներում, այնպես էլ զբոսաշրջության մեջ կիրառելի են գնագոյացման երեք հիմնական ճանապարհները [22]:

- ծախսային,
- մրցակցային,
- ծախսայինի և մրցակցայինի համադրմամբ:

Չնայած, որ շուկայական համակարգն առավելություն է տալիս հիմնականում մրցակցային գնագոյացման մեթոդին, այնուամենայնիվ զբոսաշրջային ոլորտում, հատկապես Սյունիքի մարզի պայմաններում հաճախ կիրառելի է ծախսային մեթոդը՝ հատկապես այն դեպքում, երբ ստեղծվում է զբոսաշրջային նոր ապրանք՝ հետագայում շուկա ներմուծելու նպատակով: Սակայն այս դեպքում էլ անհրաժեշտ է հաշվի առնել տարածաշրջանային մրցակցության գործոնը և կիրառել մրցակցային գնագոյացման մոտեցումը՝ ճիշտ գնային քաղաքականություն որդեգրելու նպատակով:

Արդեն կայացած շուկայական ապրանքի պարագայում պետք է ավելի ճկուն մոտեցում ապահովել՝ կիրառելով գնագոյացման մրցակցային մեթոդը և ելնել հայկական գների քաղաքականությունից, այլապես անկառավարելի գնային մրցակցությունը կարող է հանգեցնել տխուր հետևանքների: Դրա համար պարտադիր է, որ պետությունը վերահսկողական քայլեր կիրառի:

Զբոսաշրջային փաթեթների հաշվարկման դեպքում գործակալությունը հիմք է ընդունում մատակարարների կողմից տրամադրվող գները, որոնք էլ դառնում են փաթեթի հիմնական ծախսային մասը, ուստի էական է մատակարարների կողմից գնային գրագետ քաղաքականության վարումը, սակայն մենք հաճախ ականատես ենք լինում, երբ, օրինակ որևէ հյուրանոցային համալիր կարող է կիրառել անհավասար գնային մոտեցում կամ էլ անկախատեսելիորեն փոխել գները զբոսաշրջային սեզոնի ընթացքում: Մեկ այլ դժվարություն էլ կապված է ներքին համակարգում հայկական դրամով տրամադրվող գների և արտաքին շուկայում արտարժույթով վաճառք կատարելիս: Ընկերությունները գնում են չնախատեսված ռիսկերի, քանի որ հնարավոր չէ մեկ տարվա կտրվածքով կանխատեսել Դրամ/Դոլար/Եվրո փոխարժեքները:

Զբոսաշրջային ընկերության գովազդային գործունեության նպատակն է խրախուսել հավանական զբոսաշրջիկին հենց այդ ապրանքը՝ շուկայում առաջարկվող նմանատիպ բազմազան փաթեթների շարքից: Քանի որ ներգնա զբոսաշրջային գործարարությունն իրենից ներկայացնում է արտահանում, ապա տրամաբանորեն

ընկերության գովազդային հիմնական միջոցառումները պետք է ուղղված լինեն դրսի շուկային, եթե անգամ գովազդային նյութերը հրատարակվում և ցրվում են Սյունիքում: Առաջխաղացման առումով մարզային զբոսաշրջային ընկերությունը պետք է իր ջանքերը և նյութական միջոցները կենտրոնացնի հետևյալ ուղղությունների վրա:

- Գովազդային նյութերի և տեղեկությունների տրամադրում արտասահմանյան գործընկերներին՝ դրանք տեղում օգտագործելու նպատակով:
- Ճանաչողական այցերի կազմակերպում Սյունիքի մարզ՝արտասահմանյան գործընկերների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների համար:
- Մասնակցություն տարբեր ձևաչափի հանդիպումներ ՀՀ-ում և արտերկրում:
- Գովազդային նյութերի զետեղում արտասահմանում լույս տեսնող տարբեր տեղեկատվական աղբյուրներում:
- Արդյունավետ գործող համացանցային սեփական կայք էջ, ինչպես նաև մասնակցություն ընդհանուր բնույթի և նպատակային ուղղվածություն ունեցող տարբեր կայք էջերում:
- Մասնակցություն միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին:
- Մասնակցություն հասարակական բնույթի զանազան միջոցառումներին:
- Այլ միջոցառումներ, որոնք նպաստում են առաջխաղացմանը:

Նշված բոլոր միջոցառումները շատ ավելի արդյունավետ կգործեն միայն պետական մակարդակով իրականացվող գովազդային և առաջխաղացման ծրագրերի ֆոնդի ստեղծմամբ, որին պետք է ակտիվորեն մասնակցի Սյունիքի մարզը:

Այսօրվա դրությամբ զբոսաշրջության զարգացման ամենահզոր միջոցներից մեկը միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին և տոնավաճառներին մասնակցելն է, որի ֆինանսական ողջ բեռը դրվում է տուրօպերատորների վրա: Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել տնտեսական բազմապատկման գործոնը. մարզ այցելող ամեն 25 զբոսաշրջիկ մեկ լրացուցիչ աշխատատեղ է ապահովում սպասարկման և առևտրի ոլորտներում: Բացի այդ զբոսաշրջային հոսքերից օգտվում են ոչ միայն տուրօպերատորները, այլ նաև հյուրանոցները և գիշերակացի այլ վայրերը, տրանսպորտային ընկերությունները, ժամանցի օբյեկտները, ռեստորանները և

սրճարանները, զբոսավարները, թարգմանիչները և խանութները, հեռախոսային կապի ընկերությունները և այլն: Այս դեպքում արդեն ընկերությունները պետք է համամասնորեն մասնակցեն առաջխաղացման հետ կապված ծախսերին, քանի որ զբոսաշրջային տուրօպերատորներն ըստ էության իրենց շահույթը կիսում են Սյունիքի մարզում գործող սպասարկման ոլորտի մնացյալ կազմակերպությունների հետ:

Միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսները և տոնավաճառները համարվում են ամենաարդյունավետ միջոցառումներից մեկը, որն ամեն տարի ավելի ու ավելի շատ մասնակիցներ ու այցելուներ է ներգրավում: Բացի այդ մի շարք հայկական ընկերություններ, որոնք ներկայացնում են նաև Սյունիքի մարզը, ամեն տարի մասնակցում են մի քանի նմանատիպ միջոցառումների, որն արդեն բավականին շոշափելի ներդրում է: Այդ մասնակցությունն ունի իր դրական կողմերը և խնդիրները:

- Միջազգային ցուցահանդեսները նպաստում են դրան, որ մեծ թվով գործարարներ հանդիպում են մեկ վայրում միևնույն պահին, որն էլ ավելի է մեծացնում հաջողության հնարավորությունները:
- Հայաստանը հանդես է գալիս միասնական ճակատով՝ ընդանուր տաղավարի սահմաններում, որը նպաստում է երկիրը ներկայացնելուն:
- Հայաստանցի մասնակիցների շարունակական ու քանակապես և որակապես աճող մասնակցությունը բարձրացնում է ՀՀ միջազգային զբոսաշրջային վարկանիշը:
- Ընկերությունները որոշակի աչալրջություն և մարկետինգային դիվանագիտություն դրսևորելու դեպքում, կարող են տեղում կողմնորոշվել և գործնական նոր կապեր հաստատել:
- Բարձրանում է ընկերությունների սեփական վարկանիշը, քանի որ միայն ֆինանսական կայունություն և հաջողություն ունեցած ընկերությունը կարող է իրեն նման մասնակցություն թույլ տալ:
- Բարձրանում է ընկերության աշխատակիցների հմտությունը միջազգային զբոսաշրջության և ընդհանրապես փորձի փոխանակման առումով:

Որպես բացասական դրսևորումներ կանգ առնենք որոշ լուրջ խնդիրների վրա.

- Զբոսաշրջային ցուցահանդեսներն արդյունավետ են լինում միայն շարունակական մասնակցման դեպքում: Գրեթե անհնար է մեկ մասնակցությամբ ապահովել

գործնական կապեր մի քանի տարվա համար: Հաստատված է նաև այն փաստը, որ որևէ ցուցահանդեսի ընթացքում կայացած նախնական պայմանավորվածությունը կարող է դրական արդյունքներ տալ 2-3 տարի անց միայն:

- Ցուցահանդեսները շատ ծախսատար են և այդ բեռը գրեթե ամբողջությամբ ընկած է տուրօպերատորների ուսերին: Պետական աջակցությունը գրեթե բացակայում է:
- Զբոսաշրջային ընկերությունները հսկայական ժամանակ և միջոցներ են ծախսում նախապես Հայաստանը և այդ թվում Սյունիքի մարզը ներկայացնելու համար:
- Ծառայությունների մատակարարները չեն աջակցում տուրօպերատորներին, մինչդեռ գովազդում և վաճառում են նաև դրանց ծառայությունները:

Այսպիսով, զբոսաշրջությունը որպես Հայաստանի ընդհանրապես և Սյունիքի մարզի մասնավորապես տնտեսության գերակա ճյուղ ընդունելն անհրաժեշտություն է, պետության կողմից ճիշտ և նաև հրամայական քայլ, սակայն իրականացման մեխանիզմները հստակեցված չեն և դարձյալ թողնվել են շուկայի ամենակարողության հույսին:

Անցումային տնտեսական իրավիճակն ու համաշխարհային ճգնաժամը, որի հետևանքները զրանցվում են նաև ՀՀ զբոսաշրջության ոլորտում, վերջինս կարողացավ որոշ չափով մաքրել շուկան ավելորդ տարրերից առանց ներդրումների կարճ ժամանակում եկամուտներ ստանալու ակնկալիքով: Ներկայումս զբոսաշրջության ասպարեզում գոյատևում են միայն լրջորեն տրամադրված և կանխամտածված կերպով գործող ընկերությունները:

3.3. Զբոսաշրջային կլաստերների ձևավորման նախադրյալները

Մ.Պորտերի տեսության համաձայն՝ կլաստերը (համախումբ) կենտրոնացված աշխարհագրական հատկանիշով փոխկապակցված ընկերությունների, կազմակերպությունների ամբողջություն է, որոնք մրցակցում են և միևնույն ժամանակ իրականացնում համատեղ աշխատանք: Կլաստերի չափերը տատանվում է առանձին համայնքից մինչև պետության կամ պետությունների սահմաններով: Կլաստերները չեն ձևավորվում ինքնաբերաբար: Դրանց գոյացումը հնարավոր է միայն այնտեղ, որտեղ առկա են անհրաժեշտ գործոններ, միջոցներ և կոմպետենցիաներ: Կլաստերը, որպես

տարածաշրջան, ըստ Պորտերի ունի հստակ և վճռորոշ մրցակցային առավելություններ այլ տարածաշրջանների համեմատ, շնորհիվ բարձր արտադրողականության, նորամուծությունների և գործարարության նոր ձևերի զարգացման:

Կլաստերային քաղաքականությունը գործարարության և իշխանության փոխհարաբերությունների շրջանակ է, որը կողմնորոշված է տարածաշրջանային կլաստերների խթանման միջոցով մրցունակության բարձրացման: Վերջին տասնամյակներում կլաստերների նկատմամբ հետաքրքրությունն ուղեկցվում է տարածաշրջանի հանդեպ, իբրև վերլուծության միավորի:

Ըստ Մ.Պորտերի՝ ճյուղային արդյունաբերական քաղաքականության կլաստերային մոտեցման առավելությունն է [75]:

- միմյանց լրացնող ռազմավարական խմբերի (գնորդներ, մատակարարներ, լրացնող հաստատություններ) փոխազդեցության վերլուծությունը,
- որոշակիորեն մրցակից համարվող, բազմակիորեն փոխկապված տարբեր ճյուղերի կազմակերպությունների համագործակցությունը,
- մասնավոր-պետական գործընկերության մեխանիզմների կիրառումը: Այս գործընկերությունը տեղի է ունենում արտադրողականության բարձրացման, մրցակցության ամրապնդման և սիներգետիկ արդյունքի շրջանակներում:

Զբոսաշրջային կլաստերները՝ այսինքն համախումբը զբոսաշրջության համալիր զարգացման կարևոր գործիք են, քանի որ դրանք ստեղծում են տարածք ոչ միայն զբոսաշրջային արդյունքի կենտրոնացած առաջարկի, այլև կենտրոնացված շրջանների համար, որտեղ տնտեսության այլ հատվածները կապվում են զբոսաշրջության հետ: Այդպիսի ինտեգրված կլաստերները շահում են նաև համատեղ օգտագործման ենթակառուցվածքային բարելավումներից: Կլաստերներն ապահովում են, որպեսզի զբոսաշրջիկներն ավելի լավ ինտեգրվեն տեղի բնակչությանը և, դրանց միջոցով հնարավոր է լինում ավելի հեշտությամբ խուսափել իրականությունից կտրված շքեղ զբոսաշրջային արդյունքների զարգացումներից: Բնապահպանության տեսանկյունից՝ կլաստերները զբոսաշրջիկներին կենտրոնացնում են նախընտրելի վայրերում և շեղում են նրանց ճնշման տակ գտնվող վայրերից: Զբոսաշրջային այնպիսի միջոցներ,

ինչպիսիք են ավտոմեքենայով թեմատիկ երթուղիները կամ զբոսաշրջիկների արահետները, կիրառվում են այցելուներին՝ շրջակա միջավայրի վրա ազեցության առումով խոցելի շրջաններից հեռու պահելու նպատակով:

Համակարգային մոտեցման սկզբունքի շնորհիվ մարզի տարածքում կարևորվել են ինչպես բնական, այնպես էլ սոցիալ-մշակութային միջավայրերը:

Սյունիքի մարզում զբոսաշրջային ինդուստրիայի զարգացմանը կարող են նպաստել այն տարածքները, որոնք իրենց մի շարք առավելությունների շնորհիվ առաջնային նշանակություն ունեն և կարող են հանդիսանալ զարգացման կենտրոններ: Մարզում զբոսաշրջության զարգացման կլաստերները մեր կողմից առանձնացվել են հիմնվելով մշակութային հուշարձանների և բնական տեսարժան վայրերի, գյուղական համայնքների ենթակառուցվածքների առկայության վրա: Մեծ կարևորություն է տրվում նաև տարածաշրջանային մակարդակներում գործող պետական առողջապահական, փրկարարական ու անվտանգության համակարգի առկայությանը:

Այդ առումով առաջնային խնդիրներից է համարվում առկա զբոսաշրջային ռեսուրսների կադաստրի իրականացումը, որում ոչ միայն պետք է տրվի ռեսուրսի համալիր նկարագիրն ու տեղադրվածությունն, այլև անհրաժեշտ է արժևորել այդ ռեսուրսն ըստ պահանջարկի:

Քանի որ զբոսաշրջությունը համարվում է այնպիսի գործունեություն, որը բացի անընդհատություն ապահովելու արժեքից, ունի նաև ռեսուրսի տեղական, տարածաշրջանային, ազգային և միջազգային նպատակներով օգտագործելու արժևորման առաջնահերթություն:

Զբոսաշրջային կլաստերների առանձնացման նպատակով ռեսուրսների արժևորումը մեր կողմից իրականացվել է ըստ ռեսուրսի հատկանիշների և գրավչության տեսակի, օգտագործման նշանակության և մատչելիության: Հաշվի է առնված նաև սպասարկման ծառայությունների տեսականին և իրականացման որակը: Այդ առումով կատարվել է համապարփակ ուսումնասիրություն, վիճակագրական տեղեկատվության հավաքագրում ու տվյալների մշակում: Կազմված է Սյունիքի մարզի զբոսաշրջության գրավչությունների ցանկ, որտեղ ընդգրկված են Սյունիքի վարչական

միավորների կարևոր զբոսաշրջային ռեսուրսները, տրվել է համալիր բնութագիրն ու օգտագործման հնարավորություններն ըստ նպատակի և նշանակության:

Սյունիքի մարզում զբոսաշրջության համալիր և բազմակողմ զարգացմանը կխթանի կլաստերների առանձնացումն ըստ դրանցում եղած զբոսաշրջային ռեսուրսների ցրվածության աստիճանի և տարբերակված օգտագործման հնարավորության:

Կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ որպես զբոսաշրջային կլաստերներ կարելի է դիտարկել Սյունիքի մարզի տարածաշրջանների համայնքային միավորումները, որոնք այդ առումով ունեն միմյանցից տարբերվող յուրատիպություն: Ընդհանուր վերլուծությունից բացի ամբողջական պատկեր ունենալու համար, մեր կողմից քննարկվում է նաև վարչական միավորներում առկա գրավչություններն, ըստ իրենց տարածական ցրվածությամբ, օգտագործման նշանակության և մակարդակի:

Սյունիքի մարզում զբոսաշրջության գրավչությունները համաչափ կարգով չեն բաշխված, քանի որ մարզի գրավչությունների տարածական բաշխումը կախված է պատմական բնութագրից, կլիմայական ու երկրաձևաչափական պայմաններից, ինչպես նաև սոցիալ-տնտեսական վիճակից:

<u>Սիսիանի զբոսաշրջային կլաստեր:</u> Առանձնացված զբոսաշրջային կլաստերն իր սահմաններով համապատասխանում է Սիսիանի նախկին վարչական շրջանին՝ (նկ. 8): Այստեղ գտնվող 36 գյուղերից կլաստերի սահմաններում են հանդես գալիս 25 գյուղեր և Սիսիան քաղաքը: Սիսիանի կլաստերի տարածքում առավել հայտնի են Զորաց քարերը, Ուխտասարի ժայռապատկերները և Որոտնավանքը: Բնության հուշարձաններից հայտնի են Շաքիի ջրվեժը, Շամբի տաք աղբյուրները և Սև լիճը:

Պետք է նշել որ Սյունիքի մարզի մյուս կլաստերների հետ համեմատ զբոսաշրջային ակտիվների ծավալը փոքր է: Զբոսաշրջության հետագա զարգացմանը խոչընդոտում են մարզի Որոտնաբերդ, Բնունիս, Թանահաթ գյուղերի տարածքում վատ վիճակում հայտնված սննդի, հյուրատների և գյուղական ճանապարհների ենթակառուցվածքները: Սիսիանի կլաստերում մասնագիտացված զբոսաշրջության ուղղություններ կարող են համարվել էկոզբոսաշրջությունը, ագրոզբոսաշրջությունը, գիտաճանաչողական և սպորտային զբոսաշրջությունները:

Հիշատակված զբոսաշրջային հնարավորությունները թույլ են տալիս տարածաշրջանում կազմակերպել ներքին և ներգնա զբոսաշրջության բազմաճյուղ ինդուստրիա:



Նկ. 8 Սիսիանի տարածաշրջանի առաջարկվող կլաստեր

Մեր կողմից առաջարկվում է Սիսիանի զբոսաշրջային կլաստերի ուժեղ և թույլ կողմերի բացահայտումը, հնարավորությունների ու սպառնալիքների (ՈւԹՀՍ)՝ (աղյուսակ 14), վերլուծության ելակետային նյութը [36]:

Աղյուսակ 14

Սիսիանի զբոսաշրջային կլաստերի ՈՒԹՀՍ (SWOT) վերլուծությունը

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
• Առաջին տարածքն է Վայոց Ձորի մարզից Սյունիքի մարզ մտնելիս: • Բնական և մարդածին զբոսաշրջային ռեսուրսների առկայություն: • Անհրաժեշտ ենթակառուցվածքների առկայություն: • «Ձորաց քարերի» մեծ ճանաչվածություն: • Նոր զարգացող լեռնագնացային, խոհանոցային, ագրո, էկո զբոսաշրջության ճյուղեր: • Հայաստանը ԼՂՀ-ին և Իրանին կապող միջպետական ճանապարհ:	• Զբոսաշրջային ներուժի ոչ լիարժեք օգտագործում: • Ծառայությունների ոլորտում սպասարկող անձնակազմի ցածր պատրաստվածություն: • Առկա ենթակառուցվածքների վատ որակ: • Մարքեթինգային թույլ քաղաքականություն: • Միջազգային և տեղական զբոսաշրջային շուկաներում ոչ լիարժեք ճանաչվածություն: • Զբոսաշրջիկների հետ շփվելու տեղացիների փորձի և հմտությունների ցածր մակարդակ: • Բարձր արտահայտված սեզոնայնություն:
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ**
• Սպասարկման նյութա-տեխնիկական կարողությունների հզորացում: • Զբոսաշրջային նոր երթուղիների մշակում: • Էկոլոգիապես մաքուր սննդի արտադրության կազմակերպում: • Ներքին զբոսաշրջության խթանում: • Մշակութային միջոցառումների կազմակերպում: • Ազգային ճաշատեսակների պատրաստման փառատոնների կազմակերպում: • Զբոսաշրջային ապրանքի գնային քաղաքականության կարգավորում: • Զբոսաշրջային գյուղ-կենտրոնների ստեղծումը: • Զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացում, օդանավակայանի վերաբացում: • Հուշանվերների արտադրության և վաճառքի կազմակերպում:	• Զբոսաշրջային կազմակերպությունների թույլ համագործակցություն մայրաքաղաքում գործող զբոսաշրջային կազմակերպությունների հետ: • Զբոսաշրջային կամզակերպությունների թույլ ներգրավածություն միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսների և զբոսաշրջության ոլորտին առնչվող ֆորումներին: • Հարկային դաշտի ոչ արդյունավետ պայմանների առկայություն: • Մարդկային ռեսուրսների արտագաղթ: • Անկազմակերպ զբոսաշրջություն:

Ներկայացված զբոսաշրջային կլաստերում զբոսաշրջության զարգացմանը նպաստելու նպատակով մարզի ղեկավարությանը, տեղական ինքնակառավարման մարմիններին, ոլորտի ընկերություններին և աջակցող կազմակերպություններին առաջարկվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- օժանդակել պատմամշակութային, գյուղական, արկածային և էկոզբոսաշրջության կազմակերպմանը,
- կազմակերպել ձմեռային սպորտաձևերի ամենամյա մրցույթներ,
- կազմակերպել ապրանքների վաճառք (հուշանվերներ),

- օգտագործել ջրամբարների զբոսաշրջային ներուժը հանգստի և ջրային սպորտաձևերի զարգացման նպատակով,
- իրականացնել զբոսաշրջային ռեսուրսների կադաստր, ստեղծել տարածքի զբոսաշրջային քարտեզն ու կայք էջը,
- մշակել տարբեր բնույթի զբոսաշրջային երթուղիներ և հրատարակել բուկլետներ,
- կազմակերպել շարունակական մասնագիտական դասընթացներ սպասարկման ոլորտի աշխատակիցների համար,
- զբոսաշրջային նշանակության բնամարդածին օբյեկտների ոչ անմիջական հարևանությամբ ստեղծել սննդի, առաջին անհրաժեշտության ապրանքների և հուշանվերների վաճառակետեր ու հասարակական նշանակության սանհանգույց,
- իրականացնել մասնավոր հատվածի նախաձեռնությունները (գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ իրականացված առևտրային ծրագրերից ստացված շահույթ):

Գորիսի զբոսաշրջային կլաստեր: Առանձնացված զբոսաշրջային կլաստերն իր սահմաններով համապատասխանում է Գորիսի նախկին վարչական շրջանին (նկ. 9): Այստեղ գտնվող 27 գյուղերից կլաստերի սահմաններում են հանդես գալիս 8 գյուղեր և Գորիս քաղաքը: Գորիսի տարածաշրջանն աչքի է ընկնում բնական և մարդածին զբոսաշրջային ռեսուրսների հարուստ բազմազանությամբ, որոնք իրենց ամբողջությամբ արտահայտում են այս կլաստերի համապարփակ պատկերը: Այն արտահայտվում է ենթակառուցվածքներով, բնապատմական հուշարձանների յուրատիպությամբ և ազգային մշակութային առանձնահատկություններով: Զբոսաշրջային կլաստերի ներուժն առավել մեծացավ հատկապես «Տաթևեր» ճոպանուղու և Խնձորեսկի «Ճոճվող» կամրջի կառուցմամբ, որն արտահայտվում է զբոսաշրջիկների հոսքի ակտիվացմամբ և տարեցտարի նրանց թվի ավելացմամբ: Եթե Սիսիանի զբոսաշրջային կլաստերում գերակշռում էր զբոսաշրջային բնական ռեսուրսների ներուժը, ապա Գորիսի զբոսաշրջային կլաստերում մեծ դերակատարում ունեն զբոսաշրջային մարդածին ռեսուրսները, որոնք արտահայտում են տեղաբնակների պատմական հարուստ հոգևոր, մշակութային անցյալը, ապրելակերպը և սովորույթները:



Նկ. 9 Գորիսի և Տաթևի տարածաշրջանների առաջարկվող կլաստերներ

Գորիսի տարածաշրջանի առաջարկվող կլաստերում մասնագիտացված զբոսաշրջության ուղղություններ կարող են համարվել պատմամշակութային, կրոնական, գիտաճանաչողական, ագրոզբոսաշրջային և էկոզբոսաշրջային ուղղությունները: Զբոսաշրջային հիշատակված հնարավորությունները ստեղծում են նպաստավոր պայմաններ տարածաշրջանում կազմակերպել ներքին և ներգնա

զբոսաշրջության բազմաճյուղ ինդուստրիա: ՀՀ կառավարության կողմից 2013թ.-ի հունվարի 31-ին հաստատվել է Գորիս քաղաքում զբոսաշրջության զարգացման նոր ծրագիր: Այն նախատեսում է Գորիսը դարձնելու մեր հանրապետության չորրորդ զբոսաշրջային քաղաք: Մեր կողմից առաջարկվում է Գորիսի, կլաստերի ուժեղ և թույլ կողմերի բացահայտումը, հնարավորությունների ու սպառնալիքների (ՈւԹՀՍ)՝ (աղյուսակ 15), վերլուծության ելակետային նյութը [36]:

Տաթևի զբոսաշրջային կլաստեր: Առանձնացված այս կլաստերը իր սահմաններով ընդգրկում է Տաթև գյուղը և իր շրջակա 11 գյուղերը (նկ. 6):

ՀՀ-ում զբոսաշրջության զարգացման նոր մոտեցման մշակման գործում, այստեղ իրացվեց խոշորագույն ռազմավարական նշանակության ծրագիր՝ Տաթևեր ճոպանուղու կառույցով: Անցած հինգ տարիների փորձը ցույց տվեց, որ «Տաթևեր» ծրագիրն ՀՀ հաջողված ծրագրերից է:

Գորիսի և Տաթևի զբոսաշրջային կլաստերներում զբոսաշրջության զարգացումը խթանելու համար մարզի իշխանություններին, տեղական ինքնակառավարման մարմիններին, ոլորտի ընկերություններին և շահագրգիռ կազմակերպություններին առաջարկվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- նպաստել պատմական, ազգային, մշակութային, ագրո, էկո, արկածային և խոհանոցային զբոսաշրջության կազմակերպմանը,
- կազմակերպել մշակութային ամենամյա միջոցառումներ,
- Հին Խնձորեսկի տարածքում ստեղծել բացօթյա պատմական գյուղ,
- օժանդակել ձեռագործ գորգերի արտադրությանը,
- իրականացնել զբոսաշրջային ռեսուրսների կադաստր, ստեղծել տարածքի զբոսաշրջային քարտեզն ու կայք էջը,
- մշակել բազմաբնույթ զբոսաշրջային երթուղիներ և հրատարակել բուկլետներ,
- շարունակական դասընթացներ կազմակերպել ծառայությունների ոլորտի աշխատակիցների համար,
- բնապատմական հուշարձանների ոչ անմիջական հարևանությամբ ստեղծել ավտոկայանատեղիներ, սննդի, առաջին անհրաժեշտության ապրանքների և հուշանվերների վաճառակետեր ու հասարակական նշանակության սանհանգույց:

Աղյուսակ 15

Գորիսի և Տաթևի զբոսաշրջային կլաստերների ՈՒԹՀՍ (SWOT) վերլուծությունը

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
• Հայաստանը ԼՂՀ-ին և Իրանին կապող միջպետական ճանապարհ: • Բնական և մարդածին զբոսաշրջային ռեսուրսների հարուստ բազմազանություն: • Անհրաժեշտ ենթակառուցվածքների առկայություն: • «Տաթևի» վանական համալիրի մեծ ճանաչվածություն: • Նոր զարգացող արկածային, լեռնագնացային, խոհանոցային, ագրո, էկո զբոսաշրջության ճյուղեր: • Հարուստ մշակութային ավանդույթներ: • Պետական հոգածություն իրականացվող ծրագրերի միջոցով:	• Զբոսաշրջային ներուժի տարերային և ոչ լիարժեք օգտագործում: • Ծառայությունների ոլորտում սպասարկող անձնակազմի մասնագիտական ցածր կարողություն: • Հաղորդակցության ուղիների վատ որակ: • Տեղեկատվական կենտրոնների բացակայություն: • Գնային մրցակցության գերագնահատում: • Մշտական մոնիտորինգի և աուդիտի պակաս: • Տեսարժան վայրերի ոչ բարվոք վիճակը, դժվար հասանելիությունը: • Միջոցառումները կազմակերպվում են հազվադեպ և ունեն ցածր հաճախելիություն:
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ**
• Սպասարկման նյութա-տեխնիկական կարողությունների հզորացում: • Զբոսաշրջային նոր երթուղիների մշակում: • Էկոլոգիապես մաքուր սննդի արտադրության կազմակերպում: • Ներքին զբոսաշրջության խթանում: • Մշակութային միջոցառումների կազմակերպում: • Ազգային ճաշատեսակների պատրաստման փառատոնների կազմակերպում: • Զբոսաշրջային ապրանքի գնային քաղաքականության կարգավորում: • Պետական կարգավորման դերի մեծացում: • Զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացում, օդանավակայանի վերագործարկում: • Հուշանվերների արտադրության և վաճառքի կազմակերպում:	• Զբոսաշրջային կազմակերպությունների թույլ համագործակցություն մայրաքաղաքում գործող զբոսաշրջային կազմակերպությունների հետ: • Զբոսաշրջային կամզակերպությունների թույլ ներգրավածություն միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսների և զբոսաշրջության ոլորտին առնչվող ֆորումներին: • Հարկային դաշտի ոչ արդյունավետ պայմանների առկայություն: • Մարդկային ռեսուրսների արտագաղթ: • Անկազմակերպ զբոսաշրջություն:

Կապանի զբոսաշրջային կլաստեր: Կլաստերը իր սահմաններով համապատասխանում է Կապանի նախկին վարչական շրջանին՝ (նկ. 10): Այստեղ գտնվող 42 գյուղերից կլաստերի սահմաններում են հանդես գալիս 31 գյուղեր և Կապան քաղաքը: Կապանի տարածաշրջանը հարուստ է բնապատմական զբոսաշրջային ռեսուրսներով, որոնք առկա ենթակառուցվածքներով հանդերձ արտահայտում են այս կլաստերի ամբողջական պատկերը:



Նկ. 10 Կապանի տարածաշրջանի առաջարկվող կլաստեր

Լեռնային ռելիեֆն ու անտառային լանդշաֆտը (Ճիկահողի արգելավայր, Ծավի արգելոց), մեծ ներուժ ունեն արկածային, գիտաճանաչողական և վրանային զբոսաշրջության կազմակերպման համար: Նախատեսվող Զանգեզուր արգելավայրը Կապանի տարածաշրջանի եզակի անկյուններից է, որը հնարավորություն կտա պահպանելու հազվագյուտ և անհետացող բույսերի և կենդանիների տեսակները: Տարածաշրջանի զբոսաշրջային առկա ռեսուրսները հնարավորություն են ընձեռում

կազմակերպել ներքին և ներգնա զբոսաշրջության բազմաճյուղ ինդուստրիա: Իր մեծությամբ և նշանակությամբ շրջանի երկրորդ քաղաք Քաջարանը չի ընդգրկվել կլաստերի սահմաններում, քանի որ հանքաարդյունաբերական կենտրոններից մեկն է ՀՀ-ում:

Մեր կողմից իրականացվել է Կապանի զբոսաշրջային կլաստերի ուժեղ և թույլ կողմերի բացահայտումը, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ)՝ (աղյուսակ 16), վերլուծության ելակետային նյութը [36]:

Կապանի զբոսաշրջային կլաստերում զբոսաշրջության զարգացումը խթանելու համար պատկան մարմիններին և շահագրգիռ կազմակերպություններին առաջարկվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- սահմանափակել հանքարդյունաբերության հետագա ընդլայնումը և մշակել շրջակա միջավայրի պահպանության գործողությունների պլան,
- փակ պոչամբարների մակերեսը վերակուլտիվացնել և օգտագործել սպորտային միջոցառումների նպատակով, ստեղծել սպորտային համալիրներ,
- վերանորոգել և վերականգնել պատմական հուշարձաններն ու կոթողները,
- բարեկարգել զբոսաշրջային ենթակառուցվածքները՝ Վահանավանքի էկոլոգիական վիճակը պահպանելու նպատակով, իրականացնել բարեկարգման տիպի աշխատանքներ,
- իրականացնել զբոսաշրջային ռեսուրսների կադաստր, ստեղծել տարածքի զբոսաշրջային քարտեզն ու կայք էջը,
- մշակել բազմաբնույթ զբոսաշրջային երթուղիներ և հրատարակել բուկլետներ տարբեր լեզուներով,
- զբոսաշրջային նշանակություն ունեցող վայրերում ստեղծել ավտոկայանատեղիներ, սննդի, առաջին անհրաժեշտության ապրանքների և հուշանվերների վաճառակետեր ու հասարակական նշանակության սանհանգույց,
- իրականացնել օտարերկրյա աջակցություն,
- իրականացնել հյուրատների տրամադրում:

Աղյուսակ 16

Կապանի զբոսաշրջային կլաստերի ՈՒԹՀՍ (SWOT) վերլուծությունը

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
• Հայաստանը Իրանին կապող միջպետական ճանապարհ: • Բնամարդածին զբոսաշրջային ռեսուրսների մեծ ներուժ: • Անհրաժեշտ ենթակառուցվածքների առկայություն: • Կապան քաղաքի մարզկենտրոն լինելու կարգավիճակ: • Նոր զարգացող ագրոզբոսաշրջության, էկոզբոսաշրջության ճյուղեր: • Մշակութային ավանդույթներ:	• Զբոսաշրջային ներուժի անկազմակերպ օգտագործում: • Ծառայությունների ոլորտում սպասարկող անձնակազմի աշխատանքային ցածր որակ: • Ենթակառուցվածքների վատ որակ: • Թույլ ուսումնասիրված զբոսաշրջային շուկա: • Անկատար տեղեկատվական համակարգ: • Բնապատմական հուշարձանների անբարվոք վիճակ, դժվար հասանելիություն: • Համացանցային և տպագիր նյութերի սակավությունը՝ հատկապես օտար լեզուներով:
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ**
• Ծառայությունների ոլորտի կատարելագործում: • Ոլորտին առնչվող բոլոր կառույցների համար սեմինար դասընթացների մշտապես անցկացում: • Օրգանիկ գյուղմթերքի արտադրության կազմակերպում: • Ներգնա զբոսաշրջության խթանում: • Մշակութային միջոցառումների շարունակական կազմակերպում: • Ժամանցային վայրերի ստեղծում: • Զբոսաշրջային այլընտրանքային տեսակների զարգացում: • Օդանավակայանի վերագործարքում: • Զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացում: • Հայաստան-Իրան երկաթագծի կառուցումը:	• Անորակ և էժանագին ծառայությունների մատուցում զբոսաշրջիկներին: • Գին/ապրանք անհամամասնության հետագա աճը: • Անապահով տարածաշրջանի և դրացիության կարծրատիպը: • Հանքարդյունաբերության կողմից շրջակա միջավայրի աղտոտում: • Զարգացման միտումների չիմացություն և անօրինաչափություն: • Ոչ հեռանկարային ճյուղերի խրախուսում: • Ուսուցումն կտրված է արտադրությունից: • Զբոսաշրջային փաթեթների անհարկի թանկացում:

<u>Մեղրիի զբոսաշրջային կլաստեր:</u> Մեղրի զբոսաշրջային կլաստերն իր սահմաններով համապատասխանում է Մեղրու նախկին վարչական շրջանին՝ (նկ. 11): Այստեղ գտնվող 13 գյուղերից կլաստերի սահմաններում են հանդես գալիս 9 գյուղեր և Մեղրի քաղաքը: Մեղրիի տարածաշրջանն ունի զբոսաշրջային մեծ ներուժ, այն ձևավորվում է բնական և մարդածին զբոսաշրջային բազմազան ռեսուրսների համադրման արդյունքում:



Նկ. 11 Մեղրիի տարածաշրջանի առաջարկվող կլաստեր

Մեղրիի զբոսաշրջային կլաստերը Կապանի, Սիսիանի և Գորիսի զբոսաշրջային կլաստերներից տարբերվում է բնակլիմայական առանձնահատկություններով և առավել ծայրամասային սահմանամերձ աշխարհագրական դիրքով:

Քանի որ Մեղրու տարածաշրջանն անմիջական սահմանակցում է Իրանին, հետևաբար կարելի է միանշանակ պնդել, որ այս տարածաշրջանում պետք է զարգացվի բազմաճյուղ ներգնա զբոսաշրջություն: Հետևաբար Մեղրու զբոսաշրջային կլաստերի առաջարկը պետք է ստեղծվի հաշվի առնելով Իրանի արտագնա զբոսաշրջության պահանջարկը:

Աղյուսակ 17

Մեղրիի զբոսաշրջային կլաստերի ՈՒԹՀՍ (SWOT) վերլուծությունը

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
• Հայաստանն Իրանին կապող միջպետական ճանապարհ: • Հարուստ բնամարդածին զբոսաշրջային ռեսուրսներ: • Բարենպաստ հարկային դաշտ՝ հատկապես ներգնա զբոսաշրջության համար: • Սպասվող փոփոխություններ օրենսդրական դաշտում: • Ժողովրդի ընդհանուր դրական վերաբերմունքը զբոսաշրջության նկատմամբ: • Համեմատաբար փոքր տարածք և աշխարհագրական բազմազանություն: • Նոր զարգացող ագրոզբոսաշրջության, էկոզբոսաշրջության ճյուղեր:	• Բազմաձևության պակաս զբոսաշրջության ոլորտում: • Զբոսաշրջային ներուժի անկազմակերպ օգտագործում: • Սպասարկող անձնակազմի մասնագիտական ցածր որակ: • Թույլ զարգացած ենթակառուցվածքներ: • Ներքին զբոսաշրջային շուկայի նկատմամբ ծայրամասային դիրք: • Գովազդի բացակայություն: • Պատմական հուշարձանների անբարվոք վիճակ, դժվար հասանելիություն: • Օտար լեզուներով համացանցային և տպագիր նյութերի սակավությունը:
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ**
• Տեղական բնակչության և ռեսուրսների օգտագործում զբոսաշրջության բնագավառում: • Համեմատաբար փոքր ներդրումներով՝ ճաշակով և արդյունավետ հանգստավայրերի ստեղծում: • Չորացրած մրգերի արտադրության կազմակերպում: • Ներգնա զբոսաշրջության խթանում: • Ցածրարժեք փոխադրումների խրախուսում: • SS առավել արդյունավետ օգտագործում: • Լայնորեն օգտագործել զբոսաշրջության ալտերնատիվ հնարավորությունները: • Կանոնակարգված մոտեցում որսի և ձկնորսության նկատմամբ: • Զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացում: • Տարածաշրջանային համագործակցություն զբոսաշրջության ոլորտում:	• Ցածր տնտեսական հետաքրքրություն: • Յուրօրինակության և զբոսաշրջային հետաքրքրության աստիճանական նվազում: • Անտարբեր սպասարկման վարկանիշի ձեռքբերում: • Զբոսաշրջային ապրանքի բարձր գներ և մշտական թանկացում: • Հողերի ոչ նպատակային օտարում: • Էկոլոգիական աղետներ և կորուստ: • Գործազրկության աճ: • Բացակայում են հասանելի տեղեկությունները լեռնայի, արկածային զբոսաշրջության, ազգագրական, գյուղական և այլ հնարավորությունների մասին: • Անորակ և էժանագին ծառայությունների մատուցում զբոսաշրջիկներին: • Մրցակցային շուկաներից ետ մնալը:

Լինելով ծայրամասային տարածաշրջան, այստեղ զգացվում է զբոսաշրջային ենթակառուցվածքների լուրջ անկատարություն, որը թերևս լրացվի Մեղրիի զարգացման համապարփակ ծրագրում, այն մշակվում է ՀՀ կառավարության կողմից և ըստ այդմ նախատեսվում է ստեղծել ազատ տնտեսական գոտի, ինչպես նաև զարգացնել ժամանցային զբոսաշրջություն: Ծրագիրը կխթանի Մեղրու տարածաշրջանում մասնավոր ներդրումների մեծացման և զբոսաշրջության աշխուժացման զարգացմանը:

Տարածքում չի ընդգրկվել Ագարակը և նրա մերձակա բնակավայրերը, քանի որ հանքաարդյունաբերական շրջաններից է հանդիսանում:

Մեր կողմից իրականացվել է Մեղրու զբոսաշրջային կլաստերի ուժեղ և թույլ կողմերի բացահայտումը, հնարավորությունների ու սպառնալիքների (ՈւԹՀՍ)՝ (աղյուսակ 17), վերլուծության ելակետային նյութը [36]:

Մեղրու զբոսաշրջային կլաստերում զբոսաշրջության զարգացումը խթանելու համար մարզի իշխանություններին, տեղական ինքնակառավարման մարմիններին, ոլորտի ընկերություններին և շահագրգիռ կազմակերպություններին առաջարկվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- կատարելագործել զբոսաշրջային ենթակառուցվածքները,
- իրականացնել հյուրատների տրամադրում,
- համակարգել ագրոզբոսաշրջության զարգացումը,
- հիմնանորոգել պատմական հուշարձաններն ու կոթողները,
- կազմակերպել դասընթացներ «Մահճակալ և նախաճաշ» հյուրընկալության վերաբերյալ,
- իրականացնել զբոսաշրջային ռեսուրսների կադաստր, ստեղծել տարածքի զբոսաշրջային քարտեզն ու կայք էջը,
- կազմավորվող «Արևիկ» ազգային պարկի սահմանում նախագծել էկոզբոսաշրջության երթուղիներ,
- օժանդակել գյուղական զբոսաշրջության զարգացմանը նպաստող միջոցառումների, մասնավորապես «Բերքահավաքի օրերի» և աշնանային տոնավաճառների կազմակերպմանը,
- զբոսաշրջային նշանակություն ունեցող վայրերում ստեղծել ավտոկայանատեղիներ, սննդի, առաջին անհրաժեշտության ապրանքների և հուշանվերների վաճառակետեր ու հասարակական նշանակության սանհանգույց:

Զբոսաշրջային գրավչությունների նմանատիպ քննարկումն ու արժևորումը հնարավորություն է ստեղծում զբոսաշրջության զարգացման ծրագրավորման համար, որը հենվելով միջավայրի որակի պահպանման վրա առաջ է բերում կայուն

զբոսաշրջության զարգացման գաղափարը: Դա ենթադրում է հաշվի առնելով առկա զբոսաշրջային ռեսուրսային ներուժն ու դրանց նկատմամբ ժամանակակից պահանջարկը, ճիշտ ռազմավարություն մշակել զբոսաշրջային ինդուստրիայի զարգացման ոլորտում:

Հանդիսանալով տնտեսության արագ զարգացող հեռանկարային ճյուղ, կարելի է զբոսաշրջային ինդուստրիան Սյունիքի մարզում ընդհանրապես և մարզի վարչական միավորներում մասնավորապես կատարելագործել և նոր ուղղություններ հաղորդել: Հաշվի առնելով վերը նշված նյութերը կարելի է նշել, որ Սյունիքի մարզի որոշ բնակավայրեր, ունենալով մեծ հնարավորություններ, ռեսուրսներ և զբոսաշրջության գրավչություններ, տարածքում ունեն մեծ ներուժ զբոսաշրջության զարգացման և ընդլայնման հարցում:

Սյունիքի մարզի վարչական միավորներում և բնակավայրերում զբոսաշրջային ներուժով պայմանավորված կարելի է խրախուսել ֆինանսական ներդրումները, որը կունենա զբոսաշրջային ինդուստրիայի կայացման, ամրապնդման և հետագա զարգացման միտում և կապահովի ներդրված ֆինանսական միջոցների արագ վերադարձ, ինչն էլ պատճառ կհանդիսանա այդ շրջաններում տնտեսության վերելքին ու զարգացմանը: Պետք է նշել, որ զբոսաշրջային ինդուստրիան աչքի է ընկնում ներդրումների արագ վերադարձով և էկոլոգիապես անվտանգ զբոսաշրջային ապրանքի ստեղծմամբ և իրացմամբ:

Գլուխ 4. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԸ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ

4.1. Գյուղական համայնքային զբոսաշրջության հայեցակարգը

Զբոսաշրջիկների համար գյուղական բնակիչների կողմից կազմակերպված միջոցառումները կամ տոները, ցուցաբերած հյուրասիրությունը նպաստում են գյուղի սոցիալական աշխուժությանը, իսկ զբոսաշրջության ստեղծած աշխատատեղերը և ստացված եկամուտը տեղի բնակչության կողմից գյուղական համայնքները չլքելու մեծ խթան են:

Զբոսաշրջությունն առանցքային գաղափար է դարձել գյուղերի զարգացման և աղքատության հաղթահարման նվազեցմանն ուղղված ծրագրերում և տեղական համայնքների մշակութային բազմազանության պահպանության ոլորտում:

Սյունիքի մարզի համայնքներում՝ հատկապես գյուղական զբոսաշրջությունը մնում է գյուղի տնտեսության բազմազանեցման հիմնական տարբերակը, ուղղված գյուղական բնակչության համար նոր հեռանկարների ստեղծմանն ու աղքատության կամ հողերից հրաժարվելու դեպքերի նվազեցմանը: Գյուղական զբոսաշրջության ամենահայտնի տեսակներից է համայնքների վրա հիմնված զբոսաշրջությունը: Գյուղական համայնքային զբոսաշրջության հիմնական բաղադրիչը զբոսաշրջության միջոցով ֆոնդերի հավաքագրումն է, որը նպաստում է գյուղերի զարգացմանն ու բնության պահպանությանը:

Գյուղական համայնքային զբոսաշրջության զարգացման, կառավարման և վերահսկման գործընթացներում ներգրավված են մեծ թվով տեղաբնակներ, որոնց ստացված եկամտի մեծ մասը մնում է համայնքի ներսում: Համայնքի բնակիչները, նույնիսկ նրանք, ովքեր անմիջականորեն ներգրավված չեն զբոսաշրջային ինդուստրիայի մեջ ստանում են որոշակի եկամուտ: Համայնքային զբոսաշրջությունը կարող է լրացուցիչ կողմնակի եկամուտ ապահովել, սակայն կարող է փոխարինել ավանդական տնտեսական գործունեությանը՝ դառնալով համայնքի միակ և հիմնական եկամտի աղբյուրը: Գյուղական համայնքային զբոսաշրջության առանձնահատկություններն են.

- ուսուցում և բացատրություն՝ որպես զբոսաշրջության ոլորտում տրամադրվող

ծառայության մաս,

- բնության պահպանության հարցերի վերաբերյալ տեղի բնակիչների և այցելուների իրազեկության բարձրացում,
- կազմակերպվում է տեղական կառույցների կողմից, հիմնականում մասնագիտացված խմբերի համար,
- նվազեցնում է վտանգավոր ազդեցությունները բնական և սոցիալ-մշակութային միջավայրի վրա,
- նպաստում է բնական միջավայրի պահպանությանը՝ դրանց կառավարման համար տնտեսական օգուտների ստեղծման միջոցով [73]:

Սյունիքի մարզի գյուղական համայնքները կարող են առաջարկել հետևյալ ծառայությունները՝ ուղեկցում, տրանսպորտի, սննդապահովում, կացարանների ապահովում, արհեստներ, մշակութային միջոցառումներ և ցուցադրումներ, խոհարարություն և ուսուցում՝ (զբոսավարի):

Մեր կողմից առանձնացված զբոսաշրջային կլաստերներով, կարելի է տարբերակել գյուղական համայնքների մի շարք մասնագիտացումներ՝ օրինակ, Սիսիանի կլաստերում մեծ դեր կարող է ունենալ պանրագործությունը, Գորիսի կլաստերում թթի օղու թորումը, Կապանի կլաստերում ժինգյալով հացը, Մեղրու կլաստերում անուշահամ մրգերն ու դրանց չրերի պատրաստումը:

Գյուղական համայնքային զբոսաշրջության մոդելներ: Սյունիքի մարզում կարող են գործել գյուղական համայնքային զբոսաշրջության երկու տարբեր մոդելներ, որոնք տարբերվում են համայնքի բնակչության ներգրավվածության աստիճանով և մասնակցության ձևով.

- Ծրագրում ներգրավված է համայնքի կամ ընտանիքների մի մասը,
- Համայնքի անդամների և բիզնես գործընկերների համատեղ ձեռնարկություն:

Սյունիքի գյուղական համայնքների բնակչության մասնակցության չափն ու ձևը պայմանավորված են բնակավայրերի աշխարհագրական դիրքով, զբոսաշրջային ներուժով, դրա օգտագործման հնարավորություններով և տնտեսության ճյուղերի ու ենթակառուցվածքների զարգացման ժամանակակից միտումներով: Նպաստելով

եկամուտների նոր շրջանառությանն այն հնարավորություն է տալիս խթանել գյուղատնտեսության զարգացումը:

Աղյուսակ 18

Զբոսաշրջության մեջ գյուղական համայնքի ներգրավվածության ձևերը

Կառույցի տեսակը	Ներգրավվածության մակարդակը	Օրինակներ
Դրսի գործարարների կողմից կառավարվող մասնավոր բիզնես	• Զբաղվածություն, աշխատանք • Ապրանքների և ծառայությունների մատակարարում	• Խոհանոցի աշխատակազմ • Սննդի, շինանյութի վաճառք
Տեղաբնակների կողմից կառավարվող մասնավոր բիզնես	• Ձեռնա,րկության սեփականություն • Ինքնազբաղվածություն • Ապրանքների և ծառայությունների մատակարարում	• Ձեռքի աշխատանքների վաճառք, • Սննդի կետ, հյուրատներ • Ուղեկցման ծառայություն • Սննդի և այլի վաճառք
Համայնքային ձեռնարկություն	• Կոլեկտիվ սեփականություն • Անհատական կառավարում • Ապրանքների և ծառայությունների մատակարարում • Զբաղվածություն	• Գյուղական հյուրատներ,կարող են հատկացնել իրենց սեփական տան մի մասը • Արհեստի կենտրոն • Մշակութային կենտրոն
Համայնքային և մասնավոր անձանց համատեղ ձեռնարկություն	• Պայմանագրային պարտավորություններ կամ կիսովի սեփականություն • Եկամտի մասնաբաժին • Ռեսուրսների վարձակալում • Մասնակցություն որոշումների կայացմանը	• Կացարաններից և/կամ տուրերից ստացված եկամտի մասնաբաժնի տրամադրում տեղի համայնքին համաձայնեցված պայմաններով • Համայնքը վարձակալության է տալիս հող զբոսաշրջային այլ գործունեությանը
Զբոսաշրջության պլանավորման մարմին	• Խորհրդատվություն • Ներկայացուցչություն • Մասնակցություն	• Տեղական խորհրդատվություններ տարածաշրջանային զբոսաշրջության պլանավորման նպատակով • Համայնքի ներկայացուցիչներ զբոսաշրջության խորհրդում և պլանավորման նիստերում

Գյուղական համայնքային զբոսաշրջությունը չի պահանջում պետական մեծ ներդրումներ, այլ բավարարվում է գյուղական համայնքներում առկա ներուժով: Զբոսաշրջության զարգացումը համայնքներում նպաստում է ապագա զբոսաշրջային կենտրոնների ձևավորմանը [54]:

Սյունիքի մարզում ներկայումս ծրագրերի մեջ ընդգրկվել են՝ միայն Տաթևի տարածքի 11 համայնքներ: Ծրագրերի շրջանակներում նախատեսվում է հիմնել տեղական արտադրանքների մթերման, փաթեթավորման կետեր, կստեղծվեն նոր

ենթակառուցվածքներ՝ որոնցից է Տանձատափի համայնքում տեղեկատվական կենտրոնի ստեղծումը: Այս ձևաչափը կարող է օրինակ ծառայել տարածաշրջանում հետագայում նմանատիպ ծրագրեր իրականացնելու համար:

Սյունիքում համայնքային զբոսաշրջության կազմակերպումն ունի մի շարք առավելություններ, որոնք դիտարկվում են որպես դրական սցենար, և թերություններ, վերջինս դիտարկվում է որպես բացասական սցենար (աղյուսակ 19):

Աղյուսակ 19

Համայնքային զբոսաշրջության առավելություններն ու թերությունները

Առավելությունները	**Թերությունները**
Տեղական զարգացման ոլորտում	
• Աշխատատեղերի ապահովում տեղացիների՝ հատկապես երիտասարդների և կանանց համար • Համայնքային եկամուտ • Բիզնեսի հնարավորություններ • Գործնական հմտությունների ձեռքբերում • Առնչվող ենթակառուցվածքների ապահովում • Գյուղական տարածքներից արտագաղթի դադարեցում Տեղական վերահսկողություն և պատասխանատվություն համայնքում իրականացվող գործողությունների և օգտագործվող ռեսուրսների հանդեպ	• Ներդրում ուսուցման ոլորտում • Ռիսկային ներդրում • Ենթակառուցվածքներ միայն զբոսաշրջիկների համար • Վերահսկողություն դրսի անձանց կողմից • Տեղական կոնֆլիկտների սրում հատկապես հարևան համայնքների հետ, որոնք, բնակվելով նույն տարածաշրջանում, որևէ եկամուտ չեն ստանում զբոսաշրջությունից
Տնտեսական աճի ոլորտում	
• Ավելի մեծ տեղական եկամուտ • Տեղական արտադրության խթանում • Տնտեսական բազմազանություն հատկապես գյուղական տարածքներում, ուր միայն գյուղատնտեսական զբաղվածությունը բավարար չէ • Համայնքում փոքր և միջին ձեռնարկությունների խթանում	• Անկայուն պահանջարկ • Գերկախվածություն • Կոնֆլիկտ համայնքի բնակիչների միջև եկամուտների բաշխման հարցում • Տեղական ապրանքների գների աճ
Պահպանության և մշակույթի ոլորտում	
• Բնական ռեսուրսների կառավարման խթանում • Բնապահպանության կարևորության վերաբերյալ ճանապարհորդողների և տեղաբնակների կրթություն • Թափոնների կառավարման բարելավում • Կենսաբազմազանության, ջրերի, բնական և մշակութային լանդշաֆտների, հուշարձանների պահպանություն • Մշակութային արժեքների պահպանություն և ընդլայնում • Տեղական ավանդույթների և արհեստների վերածնունդ • Մշակութային գիտելիքների և փորձի փոխանակումը կարող է օգտակար լինել թե' հյուրերի, և թե' հյուրընկալողների համար • Եկամտի աճը հնարավորություն կտա վճարել հնագիտական տարածքների, պատմական կառույցների և տեղամասերի պահպանության համար	• Բնական ռեսուրսների գերօգտագործում • Սուղ կերպով բաշխված անբավարար օգուտներ, որոնք հստակ կապ չունեն ռեսուրսների պահպանության հետ • Արագ զարգացումը կարող է փոխել տարածքի բնական միջավայրը և հանգեցնել զգայուն տարածքների ու բնակատեղիների կորստի • Աղբի և ջրի հետ կապված խնդիրներ • Սոցիալական արժեքների, մշակույթի և ավանդական նորմերի փլուզում

Անիրատեսական ակնկալիքներից խուսափելու համար պետք է գիտակցել, որ զբոսաշրջությունից ստացված եկամուտը երբեք չի կարող հավասարաչափ բաշխվել համայնքի ներսում [22]: Համայնքի առավել գործուն, ազդեցիկ և ակտիվ բնակիչները սովորաբար ավելի մեծ մասնաբաժին են ունենում, որը բնականոն երևույթ է ողջ աշխարհի տնտեսական ոլորտում: Այնուամենայնիվ գյուղական զբոսաշրջության հիմնական նպատակներից մեկը կոլեկտիվ եկամուտն է և դրա արդարացի բաշխումը: Կոլեկտիվ եկամուտը կարող է ներդրվել համայնքի կողմից օգտագործվող արտադրություններում կամ տրամադրվել համայնքի ամենաաղքատ ընտանիքներին:

Գյուղական համայնքների զբոսաշրջության հայեցակարգի անհրաժեշտություն: Չնայած, որ Սյունիքում գյուղական համայնքների զբոսաշրջությունն ունի դրական զարգացում և ապագայի լավ հեռանկարներ, հասարակական ընկալման մեջ այն քաղաքային և մշակութային զբոսաշրջության համեմատ դեռ գտնվում է ստվերում [91]: Այդ իսկ պատճառով սեփական հայեցակարգային մոտեցումն իր ներդրումն ունի քաղաքային և գյուղական զբոսաշրջությունը իրավահավասար սկզբունքով դիտարկելու և դրանց աջակցելու հարցում (նկ. 12):



Նկ. 12 Գյուղական համայնքային զբոսաշրջության ոլորտի պահանջները

Սյունիքի մարզում գյուղական համայնքների համար զբոսաշրջության հայեցակարգի մշակման անհրաժեշտությունը բխում է կարևոր տնտեսական հնարավորությունների միջև ծագած լարվածությունից, ինչպես նաև այն մեծ պահանջներից, որոնք առաջադրված են այդ ոլորտին: Մեր կարծիքով ընդհանուր զբոսաշրջության հայեցակարգը գյուղական համայնքների համար կարող է օգնել կարևորագույն քաղաքական ոլորտների ճիշտ կոորդինացմանը, օրինակ՝ զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման ժամանակ տեղի ունեցած ժողովրդագրական փոփոխությունների հետևանքով ադապտացման անհրաժեշտության կամ գյուղական համայնքներում կառուցվածքային փոփոխությունների թույլտվության և գյուղական զբոսաշրջությանն աջակցող միջոցառումների իրականացման ժամանակ:

Զբոսաշրջությունը գյուղական համայնքի տնտեսական զարգացման միջոց. Սյունիքի մարզում առկա տարաբնույթ զբոսաշրջային ռեսուրսների ճիշտ և նպատակային օգտագործման շնորհիվ երաշխավորվում է եկամուտների ստացում և աշխատատեղերի ստեղծումը գյուղական համայնքներում, որից շահում են ոչ միայն հյուրատները, այլ նաև շատ այլ ձեռնարկություններ, օրինակ՝ արհեստագործությունը, առևտուրը, սննդի ինդուստրիան և ժամանցի կազմակերպումը:

Գյուղական համայնքային զբոսաշրջության մեծ մաշտաբով աննպատակ և չվերահսկվող կազմակերպումը Սյունիքի մարզում կարող է հանգեցնել տեղական լանդշաֆտների ոչնչացման: Նմանատիպ խնդիրներից խուսափելու համար անհրաժեշտ է.

1. տեղական իշխանությունները հստակ պատկերացնեն, թե ինչ են ցանկանում,
2. կազմել զարգացման ռազմավարական պլան,
3. մշակել հողաօգտագործման արդյունավետ նախագիծ,
4. կազմակերպել արդյունավետ զբոսաշրջային ծրագրեր,
5. հաշվի առնել գյուղական համայնքի զբոսաշրջային համալիր տարողունակությունը:

Վերը թվարկվածներն ստեղծում են զարգացած գյուղական ենթակառուցվածքներ և դրանով հանդերձ տարածքն աստիճանաբար դառնում է ավելի հրապուրիչ, որն էլ առաջին հերթին օգուտ է բերում տեղի բնակիչներին, բարձրացնում է կյանքի որակը

գյուղում և խոչընդոտում է բնակչության արտագաղթը: Ինչպես նշվեց, զբոսաշրջության բարեհաջող զարգացումը կարող է իր նշանակալի ներդրումն ունենալ գյուղական համայնքի տնտեսական, էկոլոգիական և սոցիալական զարգացման մեջ երկարաժամկետ հեռանկարում: Թույլ ենթակառուցվածքներով շատ շրջաններում զբոսաշրջությունը երաշխիք է հանդիսանում ապագայում կարևոր ենթակառուցվածքների ստեղծման համար, դրա վառ օրինակն է «Տաթևեր» ճոպանուղին:



Նկ. 13 Զբոսաշրջության ոլորտում հայեցակարգի հնարավոր նպատակները

Այս և հետագա նպատակները, ինչպիսիք են օրինակ, մշակութային, լանդշաֆտի և կենսաբազմազանության պահպանումն մեր կարծիքով անհրաժեշտ է բերել առաջնային պլան (նկ. 13): Սրանք այն նախադրյալներն են, որոնք համայնքը դարձնում են գրանիչ և պայման են հանդիսանում զբոսաշրջության կազմակերպման համար: Զբոսաշրջության զարգացման պետական հայեցակարգի մշակման հաջողությունը երկարաժամկետ հեռանկարում անհրաժեշտ է ամբողջությամբ համադրել վերը նշված նպատակներին:

4.2. Գյուղական զբոսաշրջության զարգացման հիմնական փուլերը

Նախքան նոր զբոսաշրջային արտադրանքի ստեղծումը, կազմակերպությունները պետք է կարողանան գտնել զբոսաշրջության շուկայի խրախուսման նոր ձևեր: Չպետք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ այդ բնագավառում դրական փոփոխությունները կարող են կատարվել միայն համապատասխան ֆինանսական ներդրումների և պետական հովանավորության պայմաններում: Մյուս կողմից զբոսաշրջությունը չպետք է դիտվի որպես հասույթի անսպառ աղբյուր:

Գյուղական զբոսաշրջությունից ստացվող եկամուտը նոր հոսքերով ներգրավվում են տեղական տնտեսության շրջանառության մեջ և ունենում կրկնակի դրական ազդեցություն, այն կարծես թե դառնում է տեղական տնտեսության կարևոր միջոցը:

Միջազգային ժամանցային զբոսաշրջությունն արագ զարգանում է՝ իր մեջ ընդգրկելով ոչ միայն հարուստներին, այլ նաև միջին դասին: Իհարկե, ոչ բոլորը հնարավորություն կամ ցանկություն ունեն ճանապարհորդելու, սակայն ներկայումս մարդիկ ճանապարհորդում են, և անհրաժեշտ է մտածել, թե ինչ ձևերով կարելի է ապահովել զբոսաշրջիկների մշտական հոսքը դեպի Սյունիքի մարզ, հատկապես գյուղական բնակավայրեր: Հայտնի է որ բազմաթիվ բնական և մարդածին հուշարձանները տեղաբաշխված են հիմնականում գյուղական բնակավայրերի հարևանությամբ:

Զբոսաշրջիկների ամենամյա հոսքն ապահովելու համար պահանջվում են որոշակի ջանքեր և հստակ պատկերացումներ, ինչն էլ գրավում է զբոսաշրջիկներին: Անհրաժեշտ է նաև նրանց մատուցվող ծառայությունների մանրամասն մշակված ծրագրեր, ապահովելով հյուրընկալության որոշակի մակարդակ և կազմակերպչական ճիշտ կառուցվածք զբոսաշրջությունը խրախուսող վայրերում:

Եթե ազգային կառավարությունները զբաղված են զբոսաշրջիկների ներգրավման աշխատանքով, ապա գյուղական համայնքային կազմակերպություններն ու ինքնակառավարման մարմինները պետք է հոգ տանեն զբոսաշրջիկներին անվտանգ և պատշաճ մակարդակով հյուրընկալելու մասին:

Շատ հաճախ Հայաստանի զբոսաշրջային տարբեր կազմակերպություններ, ելնելով իրենց նեղ շահերից, չեն համագործակցում միմյանց հետ, ինչը մեծապես խոչընդոտում է ներքին և ներգնա զբոսաշրջության զարգացմանը: Ներկայումս առաջ է քաշվել համամրցակցություն նոր կարգախոս տերմինը, որը կնպաստի տարբեր կազմակերպությունների և մարզերի ավելի սերտ համագործակցությանը:

Միջազգային փորձագետների բազմամյա դիտարկումները ցույց են տվել, որ շատ երկրներ դուրս են եկել միջազգային շուկա՝ աստիճանաբար կամ կտրուկ թռիչք կատարելով: Տնտեսագետներն ըմբռնեցին զբոսաշրջության դերը ազգային տնտեսության զարգացման մեջ, սևեռելով ուշադրությունը նաև գյուղական զբոսաշրջային կազմակերպությունների վրա, որի ճիշտ գործունեության արդյունքում ստացվում են մեծածավալ շահույթ:

Այս հարցին պետք է մոտենալ նույնպիսի զգուշությամբ և մանրակրկիտ նախապատրաստությամբ, թե ինչպես մասնավոր նոր արտադրանքը շուկա դուրս բերել: Բացի այդ խելացի իրագործվող մարկետինգը լուրջ մոտեցում է պահանջում պլանավորման հարցում: Դա նշանակում է որ անհրաժեշտ է իրացնել հիմնահարցերի և այն դժվարությունների շարունակական ուսումնասիրություններ, որոնք կարող են առաջանալ նոր արտադրանքի ձևավորման և իրացման ժամանակ:

Սյունիքի մարզում գյուղական համայնքային զբոսաշրջության պլանավորման մեջ կարևորվում են մի քանի գործընթացներ որոնցից կարևորվում են՝ զբոսաշրջության արդյունքի բնութագրում, հիմնական միջոցների գույքագրում, շուկայի վերլուծություն, միջազգային կապերի հաստատում, տեղեկատվական և գովազդային կարգախոսները:

Զբոսաշրջության արդյունքի բնութագրում: Զբոսաշրջության զարգացման համար պատասխանատուները և կազմակերպիչները պետք է մեկ ընդհանուր կարծիքի գան այն հիմնական առանձնահատկությունների շուրջ, որոնք կարող են հետաքրքրել և գրավել օտարերկրյա զբոսաշրջիկներին տվյալ տարածքում: Այս փուլում մեծապես կարևորվում է գյուղական համայնքների և մարզային իշխանությունների դերը, որպես ոլորտը կարգավորող և ընթացիկ գործողությունները համակարգող ու պլանավորող մարմին:

Հիմնական միջոցների գույքագրում: Պատասխանատուները պետք է հստակորեն պատկերացնեն, թե ինչ կարգի տրանսպորտ, սնունդ, օթևան-կացարաններ,

զվարճալիքներ կամ ժամանցի ձևեր և ծառայություններ կարող են տրամադրվել ներգնա զբոսաշրջիկներին, ովքեր տվյալ համայնք են այցելում:

Շուկայի վերլուծություն: Կազմակերպիչները պետք է որոշեն հետաքրքրվող օտարերկրյա այցելուների տիպերը, կամ օտարերկրյա այն շուկաները, որոնք, ամենայն հավանականությամբ, կարձագանքեն և կգնահատեն մրցակցության բնույթն ու ծավալները մյուս երկրների կողմից: Այս առումով Սյունիքի մարզի համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում Իրանի զբոսաշրջային շուկայի պահանջարկի վերլուծությունն ու գնահատումը:

Կարևոր է նաև գնահատել մարզի զբոսաշրջային տարանցիկ նշանակությունը պայմանավորող ԼՂՀ ազդեցությունը:

Միջազգային կապերի հաստատում: Պատասխանատուները պետք է հստակ պատկերացնեն արտաքին նպատակային շուկաները և այն, թե ինչից է սկսում իր նախապատրաստությունը միջին միջազգային զբոսաշրջիկը «նոր երկիր» այցելության համար, և թե ինչպես լավագույն ձևով նրան տրամադրել անհրաժեշտ ու օգտակար տեղեկություններ: Այդ նպատակով անհրաժեշտ է կատարել շուկայի հատվածավորում, որը թույլ է տալիս վեր հանել Սյունիքի մարզի գյուղական համայնքների զբոսաշրջային գրավչությունների առաջարկն ու դրանց նկատմամբ հավանական պահանջարկը:

Աշխատանքի կազմակերպում: Սյունիքի մարզի համայնքները պետք է ստեղծեն որոշակի աշխատող վարչական մեխանիզմ՝ բոլոր աշխատանքները համակարգելու նպատակով: Գյուղական համայնքները պետք է այնպես կազմակերպեն աշխատանքները, որ իրենց շրջան առաջին անգամ այցելած զբոսաշրջիկն անմիջապես զգա սրտաբաց ու անկեղծ հյուրընկալություն և վերադառնալով՝ պատմի այդ մասին իր բարեկամներին ու ընկերներին՝ նրանց մոտ առաջացնելով հետաքրքրություն:

Տեղեկատվական, գովազդային նյութերի մշակում: Տեղական իշխանություններն ու մասնավոր ձեռներեցները պետք է հոգ տանեն տպագրական ու էլեկտրոնային լայնածավալ գրականության ստեղծման մասին, որն օգտակար կլինի ինչպես մասնագետների, այնպես էլ ճանապարհորդական երթուղիներ ընտրող զբոսաշրջիկների համար: Սյունիքի մարզի գլխավոր մայրուղիների վրա տեղակայել համայնքային զբոսաշրջությունը գովազդող վահանակներ:

Մասնագետների ներգրավում: Գյուղական համայնքներն ու մասնավոր կազմակերպությունները պետք է համագործակցեն այնպիսի մասնագետների և կազմակերպությունների հետ, որոնք մեծ փորձ ունեն զբոսաշրջային մարքետինգի բնագավառում: Տեղական իշխանություններն ու մասնավոր կազմակերպությունները պետք է դուրս գան արտաքին շուկա օգտվելով այնպիսի ծրագրերից, որոնք հնարավորություն են տալիս առավելագույն ձևով օգտագործել զբոսաշրջային արտադրանքի իրացման համար նախատեսված ֆինանսական ռեսուրսները:

Զբոսաշրջային արդյունքի ճշգրտում: Գյուղական համայնքներն ու կազմակերպությունները արտասահմանյան շուկայում չեն կարող վաճառքի հանել իրենց արտադրանքը, եթե նրանք դեռ չեն ճշգրտել՝ ինչ են վաճառելու: Այստեղ է, որ կարևորվում է Սյունիքի մարզային իշխանությունների կողմից ոլորտը համակարգելու անհրաժեշտությունը:

Ընտրության իրական տարբերություն: Անկասկած, Սյունիքի մարզի մի շարք գյուղական համայնքների ու կազմակերպությունների համար վաճառվող «ապրանքի» ընտրությունը դժվարություն չի ներկայացնում: Նրանք պարզապես «վաճառում են» պատմական նկարագիրը, որին նպաստում է նաև զարգացած ենթակառուցվածքը: Բայց դա բավարար չէ և պահանջ ունի համայնքների զբոսաշրջային հնարավորությունների առավել խորացման և կատարելագործման: Զբոսաշրջիկներ գրավելու նպատակով համայնքներում պետք է կազմակերպել ուշագրավ միջոցառումներ, որոնցից մեծ մասայականություն են վայելում բերքի, ազգագրական երգերի, պարերի կատարումները:

Զբոսաշրջության մեջ ներգրավելու մեթոդների վերլուծություն: Սյունիքի մարզ ներգնա զբոսաշրջիկների հոսքը խթանելու նպատակով բնակավայրը և դրա տեսարժան վայրերը բավարար միջազգային ճանաչման արժանացնելու համար տվյալ գյուղական համայնքից որոշակի ջանքեր են պահանջվում նոր ծառայությունների ու ենթակառուցվածքների ստեղծման բնագավառում: Թեև առաջին հայացքից նոր տեսարժան վայրերի ստեղծումը կարող է թվալ դժվար իրականացվող գործ, սակայն պետք է հիշել, որ զբոսաշրջիկների մեծ մասը տիրապետում է զգալի ազատ կապիտալի:

Գովազդային կարգախոսներ: Անհրաժեշտ է զբոսաշրջային այնպիսի ապրանք, որը հեշտությամբ կճանաչվի ու կգրավի զբոսաշրջիկներին: Նման զբոսաշրջային ապրանք ստեղծելիս հարկավոր է հաշվի առնել զբոսաշրջիկի ցանկություններն ու նախասիրությունները: Ըստ էության զբոսաշրջային օբյեկտի ընտրությունն ավելի շատ կախված է զբոսաշրջիկների ցանկություններից և ֆինանսական հնարավորություններից, քան տեղական կազմակերպությունների առաջարկից: Այլ կերպ ասած՝ պահանջարկը որոշում է առաջարկը:

Այսպիսով, կարող ենք նշել, որ չնայած զբոսաշրջային շուկա ներկայացվող ապրանքները կարող են բազմատեսակ լինել, սակայն դրանք պետք է ներկայացնել որպես մեկ ամբողջություն, առավել մեծ արդյունք ունենալու համար:

4.3. Տեղական կառավարման մարմինները և զբոսաշրջության կազմակերպումը

Սյունիքի մարզում կայուն զբոսաշրջության հաստատման համար մեծ նշանակություն ունեն տեղական ինքնակառավարման մարմինների գործնական, դրական վերաբերմունքը: Զբոսաշրջային ենթակառուցվածքների ստեղծման հարցում այդ դրական վերաբերմունքը ձեռք բերելու համար համայնքի բոլոր բնակիչները պետք է տեղեկություն ստանան առաջարկվող զբոսաշրջային գործունեության զարգացման պայմանների ու հետևանքների մասին: Որոշումը ընդունելու համար տեղական ինքնակառավարման մարմիններին նախապես պետք է ներկայացնել զբոսաշրջությունից սպասվող շահույթի և ծախսերի ճշգրիտ հաշվարկները, գործունեության ընթացքի նկարագիրը: Զբոսաշրջության կայուն զարգացումն անմիջականորեն կախված է նաև համայնքի մասնավոր ու հասարակական կազմակերպությունների համագործակցությունից:

Տեղական ինքնակառավարման մարմինները պատասխանատվություն են կրում գլխավոր ենթակառուցվածքների համար, առանց որի զբոսաշրջությունը չի կարող գործել: Սա կապված է փոխադրամիջոցների, զբոսայգիների, հասարակական անվտանգության հսկման, ոստիկանության, հրշեջ ծառայությունների, բժշկական և այլ ծառայությունների կողմից զբոսաշրջիկների սպասարկման հետ: Տեղական ինքնակառավարման մարմինները պետք է ուսումնասիրեն զբոսաշրջության զարգացման համայնքի հնարավորությունները և կարողանան այն ճիշտ գովազդել:

Կայուն զբոսաշրջության կազմակերպման հարցում իրենց առանձնահատուկ դերն ունեն բանկերն ու ձեռներեցները, որոնք մինչև զբոսաշրջային գործարարության ծրագրավորումն ու նախագծումը, պետք է ծանոթանան զբոսաշրջության գործելակերպին, որպեսզի առավել արդյունավետ համագործակցեն այդ աշխատանքներին՝ պահպանելով համայնքի ճարտարապետական, մշակութային և բնական ամբողջությունը:

Քանի որ զբոսաշրջությունը ոչ արտադրական ոլորտ է, ուստի գործարարներն ու բանկերը հաճախ հրաժարվում են համագործակցելուց, կանխիկ ներդրումներ կատարելուց: Սակայն զբոսաշրջության զարգացումը պարունակում է «հետադարձ ներդրումով» նախագծեր, որի արդյունքում ֆինանսավորողները ունենում են ավելի հաստատուն ապահովվածություն, քան այլ արտադրական ներդրումներում: Հաճախ զբոսաշրջային գործունեության առանձնահատկությունների ճիշտ ընկալումը բերում է դրան, որ զբոսաշրջությունը ֆինանսավորում են արտասահմանցի գործարարները և տեղի է ունենում համայնքի շահույթի անցանկալի արտահանում:

Սյունիքի մարզում կայուն զբոսաշրջության հաստատման գործում, չափազանց կարևոր է նաև համայնքի բնակիչների դերը, հարկավոր է կազմակերպել հատուկ ուսուցում՝ մարդկանց որոշակի խմբերի համար «Զբոսաշրջությունը և դրա օգուտները» թեմայով: Զբոսաշրջությունը պետք է ամբողջ համայնքի նպատակը լինի: Հաճախ տեղացի բնակչի վերաբերմունքից է կախված, թե զբոսաշրջիկը կամ այցելուն, արդյոք, նորից կվերադառնա, թե ոչ:

Զբոսաշրջության հաջողությունը մեծապես կախված է նաև հյուրերի տպավորությունից, որը նա ստանում է հյուրանոցում, ռեստորանում, միջոցառումների ընթացքում, մասնավոր բնակարանների հաճելի սպասարկումից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սյունիքի մարզի բնակավայրերի գերակշիռ մասը (ընդհանուր 135 բնակավայրից 105-ը) համարվում են սահմանամերձ ու բարձր լեռնային ուստի անհրաժեշտություն է առաջանում ուժեղացնել զբոսաշրջիկների անվտանգության կազմակերպումը: Այն պետք է իրականացնեն տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն այդ գործընթացում ընդգրկելով պատասխանատու գերատեսչություններին ինչպիսիք են՝ փրկարար

ծառայությունը և ոստիկանությունը, ինչպես նաև կարևորվում է կանխարգելիչ նպատակների համար՝ սահմանապահ զորքերի մասնակցությունը:

4.4. Զբոսաշրջային ծառայությունների փաթեթի կառուցվածքը

Հիմնական զբոսաշրջային արդյունքի գործնական նշանակությունը կայանում է կոմպլեքս ծառայություններերով, որոնք համակարգված ծառայություններ են և տրվում են զբոսաշրջիկին ամբողջական փաթեթով: Ծառայությունների փաթեթը իրենից ներկայացնում է, երբ տուրօպերատորը առաջարկում է զբոսաշրջային արտադրանք, որը բաղկացած է որոշակի ծառայություններից, ինչպիսիք են՝ բեռնափոխադրումներ, տեղավորում, սնունդ, ժամանց և այլն [69]:

Զբոսաշրջությունը մրցակցային ոլորտ է, և որպեսզի համայնքների ղեկավարներն այդ ոլորտում մրցակցության հաղթողներ ճանաչվեն, պետք է պարզաբանեն շրջագայությունների պատճառները, ձևերն ու նպատակները, նպաստավոր պայմաններ ստեղծեն դրանց իրականացման համար:

Ինչպիսի դրդապատճառներով էլ որ շրջագայում է զբոսաշրջիկը, նա մշտապես ունի որակյալ ծառայությունների և բարձրակարգ սպասարկման կարիք:

Գործարար ծրագրով ճանապարհորդողները միմյանց հետ հանդիպման, համաձայնագրերի ընդունման ու հաստատման վայր են ընտրում իրենց ժամանցի ու հանգստանալու պահանջներին համապատասխան, որի հետևանքով այդ վայրի բնակիչները կարող են ստանալ լրացուցիչ եկամուտներ՝այցելած գործարարների հանգիստը կազմակերպելու և նրանց սպասարկումն ապահովելու համար:

Աշխատող զբոսաշրջիկները իրենց հանգիստը նախընտրում են անցկացնել աշխատավայրից հեռու: Թոշակառուները շրջագայության վայր ընտրելիս ղեկավարվում են անցյալը վերհիշելու ցանկությամբ: Նորապսակները փնտրում են ռոմանտիկա, ընտանիքով շրջագայողները նախընտրում են իրենց հանգիստն անցկացնել հաճելի և հանգիստ միջավայրում:

Սյունիքի մարզի տեսարժան վայրերը գտնվում են այս բոլոր նախասիրությունների ու ցանկությունների կենտրոնում, որն ընդգրկում է թե՛ պատմական վայրերի այցելություններ, թե՛ ժողովրդական կիրառական արվեստի և

արհեստների աշխատանքների կամ ուղղակի բնության գողտրիկ վայրում լռության մեջ հանգիստ:

Անհրաժեշտ է ուսումնասիրության առարկա դարձնել արձակուրդային օրերին միջոցառումների կազմակերպման հարցը: Հաշվի առնելով այն հնարավորությունները, որոնք առկա են Սյունիքի մարզի գրեթե բոլոր համայնքներում, հարկավոր է՝

- Ներգրավել առավելագույն քանակի այցելուների:
- Նպաստելու այցելուին՝ առավելագույնս մնալու համայնքում:
- Այցելուի հանգիստը կազմակերպել այնպես, որ նա նորից իրենց համայնք վերադառնալու ցանկություն ունենա և ավելին՝ իր հետ այցելության հրավիրի ծանոթներին ու բարեկամներին:

Վերը նշված նպատակին հասնելու համար պետք է հստակ գիտակցել, որ արձակուրդի օրերը սահմանափակ են և այդ ժամանակահատվածում մարդիկ գերադասում են հանգստանալ իրենց բնակավայրերից ոչ մեծ հեռավորությամբ: Հետևաբար, հանգստյան օրերին՝ «ուիքենդի» կամ այսպես կոչված, «փոքր-արձակուրդի» ընթացքում, Սյունիքի համայնքներին, հարևան շրջաններից (հատկապես Երևան քաղաքից) այցելուներ գրավելու մեծ հնարավորություն է ստեղծվում: Այս տեսակետից ելնելով պետք է հաշվի առնել.

- Հանգստյան վայրի կազմակերպում,
- Այցելուների սնվելու վայրի ընտրություն,
- Գնումներ կատարելու համար առևտրական կետերի ստեղծում,
- Ուրախ, ակտիվ ժամանցի կազմակերպում:

Անհրաժեշտ է, որ մանրակրկիտ ու մատչելի ձևակերպվի զբոսաշրջային փաթեթեի բովանդակությունը, որպեսզի ամբողջական պատկերացում լինի ճանապարհորդության ամբողջ ընթացքի, գնի և փաթեթի մասին:

Քանի որ այցելուներից շատերը ճանապարհորդում են կրեդիտ քարտերով, ուստի ռեստորանները, հյուրանոցներն ու առևտրի կետերը պետք է պատրաստ լինեն ընդունելու այդ քարտերը, նույնը վերաբերվում է զբոսաշրջային վառուչերներին:

Որպես կանոն՝ մարդիկ ճանապարհորդում են հարամարավետ հագուստով, իսկ այցելության ժամանակ շատ հաճախ անհրաժեշտություն է առաջանում փոխել հագուստը, ուրեմն նաև առաջ է գալիս թե՛ինքնասպասարկման և թե՛լրացուցիչ այլ

ծառայությունների կազմակերպման անհրաժեշտություն, որն իր հերթին կարող է հանդիսանալ լրացուցիչ շահույթի աղբյուր:

Զբոսաշրջային ճանապարհորդությունների վրա մեծ ազդեցություն ունի համայնքի տնտեսության զարգացման մակարդակը: Եթե տնտեսությունը անկում է ապրում, ապա այս գործոնն ավելի քիչ է ազդում խմբակային այցելությունների, կոնֆերանսների հետ կապված ճանապարհորդությունների վրա, որոնք հովանավորվում են պետական պաշտոնյաների կողմից: Հայտնի է, որ տնտեսության անկումից տուժում է թե՛ մեծահարուստը և թե՛ աղքատը, միջին խավը ճանապարհորդում է միայն որոշակի գումարի առկայության դեպքում: Այս խավը հանգստի համար նախընտրում է ոչ հեռու և էժանագին վայրերը՝ ճանապարհորդելով ընկերների ու բարեկամների խմբով, որի հետևանքով ճանապարհորդության ծախսերը կրճատվում են:

Սյունիքի մարզի զբոսաշրջության վրա բացասաբար են ազդում բնական աղետները և հանքարդյունաբերությունից առաջացած թափոնները: Տարադրամի ու փոխադրամիջոցների վառելանյութի գների տատանումներն անկայուն վիճակ են ստեղծում համայնքի զբոսաշրջության ոլորտում: Դրանք ժամանակավորապես կրճատում են այցելուների քանակը և իջեցնում զբոսաշրջային ինդուստրիայի արդյունավետությունը:

Զբոսաշրջության արդյունավետ զարգացման համար անհրաժեշտ է լավատեղյակ լինել համայնքի զբոսաշրջության նյութատեխնիկական բազային: Զբոսաշրջության նյութատեխնիկական բազան իր մեջ ներառում է լեռնային ու ջրային տարածքների տեսարանները, բնապատմական հուշարձանների բարեկարգվածության աստիճանը, նախատեսվող փառատոները, շուկաները, այդ թվում՝ աճուրդները, մշակույթը, պատմական ավանդույթը:

Անհրաժեշտ է հաշվարկել համայնքի զբոսաշրջության նյութատեխնիկական բազայի բոլոր հնարավորությունները և զբոսաշրջության ծրագրավորման ժամանակ գնահատել դրանց օգտագործման արդյունավետությունը: Օգտագործման անհրաժեշտությունը որոշելիս պետք է հաշվի առնել.

- Տեսարժան վայրը կամ միջոցառումն արդյոք եզակի է և յուրօրինակ,
- Կգրավի արդյոք այցելուների մեծ քանակ:

Սյունիքի մարզի զբոսաշրջային ինդուստրիայի մեջ կարևորվում է նաև զբոսաշրջությանը նպաստող ծառայությունների գնահատումը, որի մեջ մտնում են փոխադրամիջոցները, կացարանները, սննդի ծառայությունները, առևտրական կետերը, ջրմուղ-կոյուղու բարեկարգ վիճակը և այլն: կարևոր է հստակ գիտակցել, որ զբոսաշրջության բիզնեսի հաջողությունից ու արդյունավետությունից է կախված զբոսաշրջությանը հովանավորող ծառայությունների բարելավվում:

Լավ մշակված տեղեկատվական միջոցներն իրենց մեջ պետք է ընդգրկեն համայնքում գործող ճանապարհային երթևեկության կանոնները և ուղիները, իսկ այցելուին տրված քարտեզները պետք է օգնեն ճիշտ կողմնորոշվելու:

Օտարերկրացի այցելուների պահանջած ծառայությունները նույնն են, ինչ մոտակա վայրերից եկած այցելուներինը: Տարբերությունը միայն լեզվի, տարադրամի փոախանակման, սոցիալ-մշակութային ու կրոնական ավանդությունների մեջ է, որոնք իրենց հերթին ծառայություններ, սպասարկում ստեղծելու, հետևաբար նոր շահույթ ստանալու աղբյուր են: Այսպես, համայնքի բանկերը պետք է պատրաստ լինեն տարադրամի փոխանակման գործընթացին: Հյուրանոցների, ռեսորանների, տեսարժան վայրերի և հանդիսությունների ղեկավարները լրացուցիչ շահույթ կարող են ստանալ համապատասխան ծառայություններ մատուցող գործիմաց անձնակազմ ապահովելու դեպքում:

Հանգամանալից ուսումնասիրելով Սյունիքի մարզի գյուղական համայնքներում զբոսաշրջության կազմակերպաման հնարավորություններն ու դրա շահավետության խնդիրները՝ հստակ կերպով պետք է հանգել մի եզրակացության՝ նպատակահարմար ու ցանկալի է արդյոք, զբոսաշրջային ինդուստրիայի կազմակերպումը գյուղական բնակավայրերում: Խնդրի ուսումնասիրությունների ու եզրակացությունների հիմքում պետք է նկատի ունենալ հետևյալը.

- Արդյունաբերական այլ ոլորտների նման զբոսաշրջության ոլորտը նույնպես շահավետ է և հնարավորություն ունի ստեղծելու լրացուցիչ աշխատատեղեր:

- Համայնքի շահույթների զգալի մասը կարելի է ստանալ զբոսաշրջությունից:
- Զբոսաշրջությունը համայնքի բնակիչներին ավելի սերտորեն է կապում համայնքի ծառայությունների հետ:
- Զբոսաշրջությունը մեծապես նպաստում է համայնքի բարեկարգմանը:
- Զբոսաշրջությունը հնարավորություն է տալիս ամրապնդելու բնակիչների կապը համայնքի պատմամշակութային արժեքների հետ:
- Զբոսաշրջության զարգացումը հնարավորություն է ստեղծում ավելի խորությամբ ճանաչել համայնքի պատմական ժառանգությունը, տեսարժան վայրերը, մշակույթն ու արհեստները:
- Զբոսաշրջության զարգացումը նպաստում է հարակից ոլորտների զարգացմանը:
- Զբոսաշրջության սպասարկման ծառայություններում հնարավորություն են ստանում աշխատելու երիտասարդները, մասնակի ու սեզոնային աշխատանքներում ներգրավվում են անապահով թոշակառուները, ընտանիքի ոչ հիմնական կերակրողները:
- Զբոսաշրջության բիզնեսը շահութաբեր է ձեռնարկողի համար:
- Բնության ռեսուրսների վրա հիմնվող զբոսաշրջությունը շահութաբեր է և էկոլոգիապես մաքուր:
- Խելացիորեն մշակված զբոսաշրջային ծրագրերը և դրանց ճիշտ իրագործումը տվյալ համայնք կտեղափոխեն նոր ընտանիքներ:

Իսկ մյուս կողմից

- Զբոսաշրջությունը խթանում է նոր, անծանոթ մարդկանց մուտքը գյուղական համայնք, որը կարող է խանգարել տեղի բնակիչների աշխատանքներին:
- Զբոսաշրջությունը հիմնականում սեզոնային բնույթ ունի, և նրանում շատ աշխատանքներ ցածր վարձատրելի են:
- Տեղական ռեստորանների ու ծառայությունների վրա ծանրաբեռնվածության ավելացումը կարող է պատճառ հանդիսանալ շրջակա միջավայրի վիճակի վատացման և աղտոտվածության:

Սյունիքի մարզի գյուղական համայնքային զբոսաշրջության կազմակերպման ու ծրագրավորման ժամանակ հանգամանալից վերլուծության ենթարկելով վերը նշված

գործոնները, կարելի է նվազագույնի հասցնել բացասական ազդեցությունները և առավելագույնի՝ դրականը:

Այսպիսով, կատարված վերլուծությունից կարելի է եզրահանգել, որ Սյունիքի մարզն ունի զբոսաշրջային ռեսուրսների հարուստ պաշարներ և գյուղական համայնքային զբոսաշրջության զարգացման նախադրյալներ: Համապատասխան ներդրումների շնորհիվ հնարավոր է ստեղծել զբոսաշրջային տնտեսության և միջազգային զբոսաշրջության բազմաճյուղ համակարգ, որը սոցիալ-տնտեսական և էկոլոգիական բոլոր չափանիշներով կդառնա մարզի տնտեսության առաջատար և հիմնական ճյուղերից մեկը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զբոսաշրջությունը ճանաչվել է ՀՀ տնտեսության գերակա ճյուղերից մեկը, որը նպաստում է մարզերի կայուն զարգացմանը: Սյունիքի մարզի զբոսաշրջային ռեսուրսների, զբոսաշրջության զարգացման, սոցիալ-տնտեսական նշանակության համալիր ուսումնասիրություններից ստացված արդյունքները թույլ են տալիս կատարելու հետևյալ եզրակացություններն ու առաջարկությունները.

Եզրակացություններ

- Սյունիքի մարզի հարուստ բնական, մարդածին զբոսաշրջային ռեսուրսները և ենթակառուցվածքները նպաստավոր պայմաններ են ստեղծում բազմաճյուղ զբոսաշրջային ինդուստրիայի զարգացման համար:
- Սյունիքի մարզի տարածաշրջաններում (Սիսիան, Գորիս, Կապան և Մեղրի) ֆինանսական ներդրումները ունեն զբոսաշրջային ինդուստրիայի կայացման հետագա զարգացման միտում, և կարող են ապահովել ֆինանսական միջոցների արագ վերադարձ: Առաջին օրինակը «Տաթևեր» ճոպանուղու առկայությունն է:
- Զբոսաշրջային ինդուստրիայի զարգացումը Սյունիքի մարզում կստեղծի նոր աշխատատեղեր ոչ միայն բուն զբոսաշրջության ոլորտում, այլ նաև այն սպասարկող տնտեսության բազմաթիվ ճյուղերում՝ նպաստելով բնակչության եկամուտների ավելացմանը:
- «Հյուսիս-հարավ» ճանապարհային միջանցքը կնպաստի Սյունիքի մարզի տրանսպորտաաշխարհագրական դիրքի բարելավմանը, ինչպես նաև կնպաստի ՀՀ, ԼՂՀ և Իրանի Իսլամական Հանրապետության միջև զբոսաշրջային կապերի զարգացմանը:
- Սյունիքի մարզի առաջարկված զբոսաշրջային կլաստերները ունեն տարբեր նշանակության բնական և մարդածին զբոսաշրջային ռեսուրսներ, որոնց նպատակային և պլանավորված օգտագործումը դրական ազդեցություն կունենա համայնքի եկամուտների ավելացման և բնակչության կյանքի որակի բարձրացման համար:

- Կլաստերների առանձնացումները կնպաստեն զբոսաշրջային ինդուստրիայի հետագա զարգացմանը, որոնցում առկա ռեկրեացիոն ռեսուրսները լիարժեք կոգտագործվեն:
- Գյուղական համայնքների զարգացումը բարենպաստ պայմաններ կստեղծի զբոսաշրջության և գյուղատնտեսության ճյուղերի զարգացման համար:

Առաջարկություններ՝

- ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության վարչության՝ Սյունիքի մարզի համար առաջարկված մեթոդաբանությունը կիրառել ՀՀ այլ մարզերի զբոսաշրջային գործընթացներում:
- Սյունիքի մարզի գյուղական համայնքների ղեկավարներին առաջարկված կլաստերների սահմաններում իրականացնել բարեկարգման աշխատանքներ հատկապես զբոսաշրջային ենթակառուցվածքներում՝ (մասնավորապես հյուրատներ, սննդի օբյեկտներ և գյուղական ճանապարհների բարեկարգում):
- ՀՀ մշակույթի նախարարությանը և Սյունիքի մարզպետարանին առաջարկված զբոսաշրջային կլաստերների սահմաններում իրականացնել պատմամշակութային հուշարձանների բարեկարգման աշխատանքներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ալեքսանյան Կ.Բ. Բնաաշխարհագրական օբյեկտների անվանափոխման հարցերը Սյունիքի մարզում, «Երկրաբանության, Աշխարհագրության և էկոլոգիայի արդի հիմնախնդիրները»: Դոցենտ Է.Խ. Խարազյանի ծննդյան 70-ամյակին նվիրված գիտաժողովի գիտական աշխատությունների ժողովածու: Երևան 2012թ. Նոյեմբերի 14-16: «Տիգրան Մեծ» հրատ., 2014.- 320էջ:
2. Աթայան Ջ.Խ. Հայկական ՍՍՀ բնությունը և նրա պահպանությունը, «Լույս» հրատ., Երևան 1982. - 206էջ:
3. Ասլանյան Ա.Ա., Ավետիսյան Խ.Ա. Զանգեզուր, (աշխարհագրական ակնարկ), «Հայաստան», հրատ., Երևան 1975.- 140էջ:
4. Ասմանգուլյան Ա.Ա. Հիգիենա և էկոլոգիա, (ուսումնական գրականություն), Հերացու անվան Բժշկական Համալսարանի հրատ., Երևան 1996. – էջ134:
5. Ավագյան Գ.Ե. Հայաստանը և Հայերս աշխարհում, «Սփյուռք», հրատ., Երևան 1993. -165էջ:
6. Ավանեսյան Ա., Մալխասյան Է., Նազարեթյան Ս.,- Հայաստանի երկրաբանական եզակի հուշարձանները, (Ուղեցույց զբոսաշրջիկի համար), «Սեյսմիկ Պաշտպանության Հայկական Հիմնադրամ», Երևան, 2000. - 159էջ:
7. Ավետիսյան Կ.Մ., Ավետիսյան Ա.Ա. Հայրենագիտական էտյուդներ, «Սովետական գրող» հրատ., Երևան 1979.- 319էջ:
8. Ավետիսյան Վ.Ա., Դավթյան Դ.Ե. Կենսաբեր ստորերկրյա ջրերը, «Հայաստան», հրատ., Երևան 1987.- 141էջ:
9. Բալոյան Ս.Ա. Հայաստանի Ալպիական բուսական ծածկույթը, «Գասպրինտ», հրատ., Երևան 2005.-199էջ:
10. Բարսեղյան. Ի.Վ. Զբոսաշրջության ոլորտի զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում և օրենսդրական դաշտի ձևավորումը, Երևան 2008. - 158էջ:
11. Գասպարյան Ա.Գ. Կենսաաշխարհագրություն, «Տիգրան Մեծ» հրատ., Երևան 2009.- 304էջ:
12. Գևորգյան Ս.Ա., Խաչիյան Դ.Է. Ներգնա զբոսաշրջության արդյունավետության բարձրացման հիմնահացերը հայաստանում, «Ասողիկ». Հրատ.,Երևան 2011.-206էջ:

13. Գևորգյան Ֆ.Ա., Հայաստանի տուրիստական ուղեցույց, տեղեկատու, Ոսկան Երևանցի հրատ., Երևան 2004.-125էջ:
14. Դուրգարյան Է.Ռ. Սյունիքի մարզի բնական հուշարձանները և նրանց պահպանման խնդիրները, Ալպ-Հիմալայան լեռնային գոտու աշխարհագրական և երկրաբանական հարցերը (Ս.Պ. Բալյանի 95 ամյակին նվիրված հոդվածների ժողովածու), ԵՊՀ, Երևան 2007. - էջ456-461:
15. Դուրգարյան Է.Ռ. Սյունիքի մարզի ռելիեֆի ձևաչափական վերլուծությունը, ԵՊՀ, Գիտական տեղեկագիր 3, Երևան 2007.- էջ140-145:
16. Դուրգարյան Է.Ռ. Ռելիեֆի համեմատական գեղագիտական ուսումնասիրության մասին՝ Ալպերի, Զանգեզուրի օրինակով, Կիրառական Երկրաբանության և Աշխարհագրության արդի հիմնահարցերը Պրոֆեսոր Պերճ Բոշնաղյանի ծննդյան 90 ամյակին նվիրված գիտաժողովի հոդվածների ժողովածու, ԵՊՀ, Երևան 2011. էջ120-125:
17. Դուրգարյան Է.Ռ. «Սյունիքի մարզի բնական պայմանները որպես բնակչության առողջության գործոն», Աշխարհագրության գիտակառուցողական ներուժը և գործնական կիրառումը (Լ.Հ. Վալեսյանի ծննդյան 80 և գիտամանկավարժական գործունեության 55 ամյակին նվիրված գիտաժողովի նյութերը), ԵՊՀ, Երևան 2011. էջ 273-279:
18. Դուրգարյան Է.Ռ., Թորոսյան Մ.Մ. Զբոսաշրջության տարածքային կազմակերպման վրա ազդող գործոնները, Կրթությունը և գիտությունը Արցախում, 3-4, Երևան 2014.- էջ95-98:
19. Երանոսյան Հ.Մ. Ընտանեկան տուրիզմ, ԵՊՀ հրատ., Երևան 1990.- 138էջ:
20. Երանոսյան Հ.Մ. Տուրիզմը բոլորի համար, «Հայաստան» հրատ., Երևան 1972.- 181էջ:
21. Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին: ՀՀ օրենքը, ՀՀՊՏ 29.01.04./6(305). էջ9-10:
22. Զորին Ի.Վ., Կվարտալնով Վ.Ա. Տուրիստիկա, «Անտարես» հրատ., Երևան 2006.- 344էջ:
23. Թադեվոսյան Հ.Թ. Սանձված ջրեր: (Կապույտ լճերի երկիրը), «Լույս» հրատ., Երևան 1984.- 60էջ:

24. Հակոբյան Թ.Խ. Հայաստանի պատմական աշխարհագրություն, 4-րդ հրատ., ԵՊՀ հրատ., Երևան 1984.- 464էջ:
25. Հակոբյան Թ.Խ. Հայ ժողովրդի պատմության հիշարժան վայրերը, «Լույս» հրատ., Երևան 1990.- 233էջ:
26. Հայաստանի ազգային ատլաս.- Հատոր Ա. «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն», ՊՈԱԿ, Երևան 2007.- 228էջ: Սյունիքի մարզ, էջ 219, 83, 87:
27. Հայաստանի զբոսաշրջության հարավային միջանցքի ռազմավարական նախագիծ: Ազգային մրցունակության հիմնադրամ: Երևան 2011.- 214էջ:
28. Հայաստանի ֆլորայի և բուսական ծածկույթի վիճակն ու պահպանությունը: Երևան 1984.- 214էջ:
29. Հայաստանի Հանրապետություն. Ռիո+20 ազգային գնահատման զեկույց, «Բավիղ» ՍՊԸ հրատ., Երևան 2012.- 156էջ:
30. Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագիր: Երևան, 2001.- 150էջ:
31. Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն: Գլուխ 19-րդ; Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան 1971.- 422էջ:
32. Հայկական ՍՍՀ ջրագրությունը (պատ.խմբ. Ա.Բ. Բաղդասարյան): Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան 1981.- 178էջ:
33. Հայկական ՍՍՀ երկրաբանություն, Հատոր 8. (Հիդրոերկրաբանություն), Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան 1974.- էջ191-201:
34. Հայկական ՍՍՀ գեոմորֆոլոգիա, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան 1986.-239էջ:
35. Հայկական Սովետական Հանրագիտարան, (Հատոր 3), Երևան 1977., քարտեզ (Հայկական ՍՍՀ նյութական մշակույթի հուշարձաններ):
36. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2010-2013թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, Կապան 2009.-208էջ:
37. Հայաստանի Հանրապետության բնակավայրերի ատլաս, Սյունիքի մարզ, Երևան 2001.- 100էջ: էջ 77, 79, 81, 83, 85:
38. Հայաստանի Հանրապետության կլիմայական տեղեկագիր: Հայաստանի հիդրոօդերևութաբանական և մոնիտորինգի պետական ծառայություն

«ՀՏՅՊԵՏՀԻԴՐՈՄԵՏ», Կլիմայական Տեղեկագիր, I-ին մաս, Օդի և Հողի ջերմաստիճանը, Երևան, «ՄՏԶԾ/գէֆ/00035196», 2011.-149էջ:
39. ՀՀ Սյունիքի մարզի վիճակագրական վարչության տարեկան հաշվետվություն, 2013:
40. Հարությունյան Շ.Լ. Զբոսաշրջության ինդուստրիա և աշխարհագրություն, Երևան, «Զանգակ-97», 2004.- 160էջ:
41. Մանասյան Մ.Գ., Գրիգորյան Ա.Թ., Պոտոսյան Ա.Հ. Սյունիքի մարզ, բնությունը, բնակչությունը, տնտեսությունը: Երևան, «Նահապետ» հրատ., 2002.- 158էջ:
42. Մարկոսյան Ա., Նազարյան Գ., Հախվերդյան Դ. Միջազգային տնտեսական հարաբերություններ: Ուսումնական ձեռնարկ երկու մասով (Աշոտ Մարկոսյան, Գրիգոր Նազարյան, Դավիթ Հախվերդյան, Մասն. խմբագիր՝ Ատոմ Վարդանյան): ԵՃՇՊՀ, Մաս 1-ին, Երևան 2012.- 640էջ:
43. Մարտիրոսյան Լ.Մ. Ռեկրեացիոն աշխարհագրություն, Մենագրություն, «ՍԻՄ տպագրատուն» ՍՊԸ, Վանաձոր 2014. -278էջ:
44. Մելքումյան Ս.Ա. Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն: Երևան, «Զանգակ-97» հրատ., 2005.- 448էջ:
45. Մկրտչյան Ռ.Ս., Հայրապետյան Ֆ.Փ. Հայաստանի բնության օրացույց, Երևան 1976. - 208էջ:
46. Մկրտչյան Ռ.Ս. Հայաստանի բժշկակլիմայական գոտիները, Աշխարհագրություն-99, Գիտական աշխատանքների ժողովածու, ԵՊՀ, Երևան 1999.- 196էջ:
47. Մնացականյան Բ.Պ. Հայաստանի ջրային հաշվեկշիռը: «Զանգակ-97» հրատ., Երևան 2005.-184էջ:
48. Ներսիսյան Ա.Գ. Հայաստանի կլիման, Հայպետհրատ., Երևան 1964.- 304էջ:
49. Շիրինյան Գ.Թ. Հայրենի արահետներով, « Լույս» հրատ., Երևան 1991.-152էջ:
50. Չիլինգարյան Լ.Ա., Մնացականյան Բ.Պ., Աղաբաբյան Կ.Ա., Թոքմաջյան Հ.Վ. Հայաստանի գետերի ու լճերի ջրագրությունը (ջրային հիմնահարցերի և հիդրո տեխնիկայի ինստիտուտ), «ՄՄ Պրինտ» ՍՊԸ: Երևան 2002.- 49էջ:
51. Պողոսյան Դ.Ա., Խոյեցյան Ա.Վ. Հայկական լեռնաշխարհի լանդշաֆտները և ֆիզիկաաշխարհագրական շրջանները: ԵՊՀ հրատ., Երևան 2008.- 230էջ:

52. Խոյեցյան Ա.Վ., Հակոբյան Ք.Յ. ՀՀ բնական լանդշաֆտային գոտիների կլիմայական դիսկոմֆորտայնության տարբերությունները և կայուն զարգացման հայեցակարգը: Կայուն Հասարակական Զարգացումը և Հայաստանը, առաջին ազգային կոնֆերանսի նյութեր, Երևան, ապրիլ 1997.- էջ 65-69:
53. Կլիմայական ուսումնասիրությունները Հայաստանում: ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն «ՀԱՅՊԵՏՀԻԴՐՈՄԵՏ», Երևան 2010.- 18էջ:
54. Սելվինազյան Բ.Ս., Հաջոյան Ռ.Մ. Զբոսաշրջության մարքեթինգ,(ուսումնական ձեռնարկ), Երևան, «Տնտեսագետ», 2003.- 124էջ:
55. Սեկոյան Վ.Գ. Զանգեզուրի տուրիստական երթուղիներով, «Հայաստան» հրատ., Երևան 1985.- 52էջ:
56. Վալեսյան Լ.Հ. Հայկական ՍՍՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրություն, Երևան, «Լույս» հրատ., 1988.- 455էջ:
57. Агроклиматические ресурсы Армянской ССР (под редакция Р. С. Мкртчяна). Ленинград, Гидрометеоиздат, 1975, 388с.
58. Асташкина М.В., Козырева О.Н., Кусков А.С., Санинская А.А. География туризма, учебное пособие - М.: Альфа-М, 2008, 432с.
59. Александрова А.Ю. Международный туризм. Учебник.-М.: Аспект Пресс, 2002. 470с.
60. Александрова А.Ю. Экономика и территориальная организация международного туризма: Учебное пособие. М.: Издательство МГУ, 1996, 104с.
61. Армения. Энциклопедия путешественника (Ред.колл. К.Худавердян и др.),- Ереван 1990, 318с.
62. Атлас природных условий и естественных ресурсов Республики Армения. “Гидрология”, Ереван, изд. АН РА, 1990, 68с.
63. Биржаков М.Б., Введение в туризм. СПб.: Издателский торговый дом «Герда» Москва, 2000. 192с.
64. Бредихин А.Б. Рельеф как рекреационное условие и ресурс Туризма/ Вестник МГУ. Сер. 5. 2004, 23-28с.
65. Горбунов А.А. и др. Управление развитием городских социально – экономических систем. СПб., ИСЭП РАН, Москва 1996, 232с.
66. Кабушкин Н.И., Менеджмент туризма, Минск 2001, 409с.

67. Квартальнов В.А., Туризм: Учебник, «Финансы и статистика», Москва 2000, 320с.
68. Котлер Ф., Боуэн Дж. Маркетинг. Гостеприимство и туризм: Учебник для вузов (Пер. с англ. под. ред. Ноздревой Р.Б.), М.: «ЮНИТИ», 1998. 787с.
69. Кусков А.С, Джаладян Ю.А Основы туризма 3-е издание., М.: «КНОРУС», 2008, 400с.
70. Красная книга Арм. ССР, Исчезающие и редкие растений, Ереван «Айастан» 1989, 270с.
71. Маринин М.М. Туристские формальности и безопасность в туризме М.: «Финансы и статистика», 2003, 139с.
72. Мироненко Н.Т., Твердохлебов И.Т. Рекреационная география М.: МГУ, 1981, 208с.
73. Морозов М.А. Экономика и предпринимательство в социально-культурном сервисе и туризме: (учеб. для студ. высш. учеб. Заведений). 5-е издание – М.: издательский центр «Академия», 2009, 288с.
74. Мусаелян С. М. Водные ресурсы Армянской ССР. Ереван, изд. ЕГУ, 1989, 206с.
75. Портер М. Конкуренция / Пер. с англ. - М.: Изд. дом «Вильямс», 2005, 256с.
76. Саак А.Э., Пшеничных Ю.А. Менеджмент в социально-культурном сервисе и туризме: (Учебное пособие). – СПб.: «Питер», 2008, 512с.
77. Самойленко А.А. География туризма: учебное пособие. 3-е издание: Ростов на Дону: «Феникс», 2008, 359с.
78. Справочники по климату СССР. Выпуск16, часть IV, Влажность воздуха, атмосферные осадки и снежный покров. Ленинград, «Гидрометеоиздат», 1969, 194с.
79. Степанян М.С., Карамян Р.К. Содержание йода и некоторых других микроэлементов в почвах и водах районов Зангезура, Арм. ССР. Журнал армении АН Арм. ССР, 29 (1) Ереван, 1976, 109, 110с.
80. Саакянц Р.Г., Романов А.А. География туризма: учебное пособие.-М.: «Советский спорт», 2002, 464с.
81. Храбовченко Б.Б. Географические особенности развития международного туризма в горных районах Краснодарского края и Республики Адыгея. Краснодар, 2000, 154с.
82. Фролова Т.А. Экономика и управление в сфере социально-культурного сервиса и туризма: Таганрог: « ТТИЮФУ», 2010, 117с.

83. Getz, D.(2008), Event tourism: Definition, evolution, and research, Tourism Management, 29, 403–428.
84. Hudman L., Hawkins D. (1989), Tourism in Contemporary Society. Englewood Cliffs, NJ: Prentice Hall. 221 p.
85. Mill Robert Christie, Morrison Alislair M. The Tourism System. An Introductory Text. New Jersy: Prentice-Hall, Inc., 1992. 506 p.
86. Seetanah B. (2008), Transport economic performance, The case of Mauritius, Journal of transport Economics and Policy, 42, 1-13.
87. World Tourism Organization /A special report for the WTO-Towards new forms of public-private sector partnership. The changing role, structure and activities of National Tourism Administration. Madrid, Spain, January, 1996. C 5.
88. World Tourism Organization (2006), WTO Tourism Highlights.
89. www.armstat.am , ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կայք
90. http://mineconomy.am/arm/39/gortsaruyt.htm/
91. http://www.armstat.am/file/RegStat/marz/MARZ_07.pdf
92. http://www.wto.com
93. http://rudocs.exdat.com/docs/index-244928.html?page=3
94. http://www.kmvline.ru/lib/turizm/38.php
95. http://www.polina.in/2008/03/22/faktory-vlijajushhie-na-razvitie-turizma.html
96. http://www.armstat.am/file/article/arevtur_12_3.pdf

Հավելված 1

Ներգնա ճանապարհորդության տևողությունն ըստ կացարանի տեսակի և այցելության նպատակի, օր [90]

ԿԱՑԱՐԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐ	Գործնական	Աշխատանքի	Կրթության	Բուժման	Հանգստի և ժամանցի	մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցություն	Այցելություն հարազատներին, ընկերներին	Ուխտագնացություն	Այլ	Ընդամենը
Հյուրանոց	6.25	5.16	8.04	10.40	6.00	6.78	6.97	2.75	7.46	6.32
Վարձով բնակարան	24.44	65.03	51.23	180.0	16.38	7.00	44.15	205.0	92.86	38.89
Մ/Ն (B&B), պանդոկ	4.42	2.33	76.10	2.50	6.77	8.00	5.71	6.0	68.00	12.38
Բարեկամի տանը	11.97	36.78	40.47	6.99	23.04	25.55	22.36	13.92	20.19	20.37
Առողջարաններում	1.00	-	-	6.63	10.14	10.00	13.33	-	5.00	10.43
Այլ հանգրվաններում	4.45	2.96	7.20	10.75	7.11	12.29	21.70	5.00	14.92	6.87
Մեկ զբոսաշրջիկի հաշվով միջին գիշերած օրերի քանակը	8.27	12.93	36.31	7.80	10.47	12.29	22.75	18.87	20.91	17.59

ՀՀ սահմանային անցման կետերում ժամանողների և մեկնողների շրջանում 2013թ. հունվար-դեկտեմբերին իրականացված ընտրանքային հետազոտության նախնական արդյունքները:

Հավելված 2

Արտագնա ճանապարհորդության տևողությունն ըստ կացարանի տեսակի և այցելության նպատակի, օր [90]

ԿԱՑԱՐԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐ	Գործնական	Աշխատանքի	Կրթության	Բուժման	Հանգստի և ժամանցի	Մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցություն	Այցելություն հարազատներին, ընկերներին	Ուխտագնացություն	Այլ	Ընդամենը
Հյուրանոց	7.7	15.7	33.3	11.8	9.7	8.1	22.6	5.9	2.5	8.6
Վարձով բնակարան	61.5	147.2	64.6	250.0	18.7	14.9	109.6	-	118.0	109.6
Մ/Ն (B&B), պանդոկ	4.6	114.3	16.0	-	7.2	5.5	16.9	7.0	2.3	5.5
Բարեկամի տանը	17.3	125.5	63.8	55.8	29.2	21.6	32.1	34.7	23.3	37.2
Այլ հանգրվաններում	3.5	120.9	85.0	18.5	11.5	36.5	11.7	3.0	19.1	89.3
Մեկ ճանապարհորդի հաշվով միջին գիշերած օրերի քանակը	11.1	124.2	61.2	47.8	16.6	11.8	33.2	22.3	10.8	41.7

ՀՀ սահմանային անցման կետերում ժամանողների և մեկնողների շրջանում 2013թ. հունվար-դեկտեմբերին իրականացված ընտրանքային հետազոտության նախնական արդյունքները:

Հավելված 3

Հայկական ծագմամբ ներգնա ճանապարհորդների աշխարհագրական բաշխվածության կառուցվածքն ըստ այցելության նպատակի, % [90]

ԵՐԿՐՆԵՐ	Գործնական	Աշխատանքի	կրթության	Բուժման	Հանգստի և ժամանցի	մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցություն	Այցելություն հարազատներին, ընկերներին	Ուխտագնացություն	Այլ	Ընդամենը
Ռուսաստանի Դաշնություն	2.14	0.42	0.44	1.35	2.13	0.35	40.94	0.14	6.65	54.56
Վրաստան	2.28	0.48	1.51	10.43	0.71	0.08	17.58	0.14	0.48	33.68
Իրան	0.12	0.00	0.01	0.00	0.10	0.03	1.49	0.01	0.08	1.84
Ուկրաինա	0.01	0.00	0.01	0.00	0.25	0.00	1.27	0.01	0.00	1.55
ԱՄՆ	0.11	0.00	0.04	0.04	0.08	0.03	1.13	0.00	0.08	1.51
Արաբական Միացյալ Էմիրություններ	0.08	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.46	0.00	0.03	0.57
Բելգիա	0.05	0.01	0.00	0.00	0.03	0.03	0.33	0.00	0.04	0.49
Գերմանիա	0.03	0.00	0.00	0.01	0.03	0.00	0.33	0.00	0.03	0.42
Բելառուս	0.03	0.00	0.00	0.00	0.03	0.03	0.30	0.01	0.01	0.41
Ֆրանսիա	0.01	0.00	0.00	0.00	0.04	0.00	0.29	0.00	0.05	0.40
Հունաստան	0.05	0.00	0.00	0.00	0.04	0.00	0.25	0.00	0.04	0.38
Լեհաստան	0.03	0.00	0.00	0.00	0.01	0.01	0.29	0.00	0.01	0.35
Սիրիա	0.04	0.00	0.00	0.01	0.03	0.01	0.18	0.00	0.07	0.34
Լիբանան	0.03	0.00	0.01	0.03	0.01	0.00	0.20	0.00	0.03	0.31
Ղազախստան	0.00	0.00	0.00	0.00	0.01	0.00	0.22	0.01	0.03	0.27
Իսպանիա	0.01	0.00	0.00	0.00	0.03	0.00	0.20	0.00	0.01	0.26
Կանադա	0.01	0.00	0.00	0.01	0.01	0.01	0.14	0.00	0.05	0.25
Նիդերլանդներ	0.01	0.00	0.00	0.01	0.00	0.00	0.20	0.00	0.01	0.25
Չեխիայի Հանրապետություն	0.00	0.00	0.00	0.00	0.01	0.00	0.16	0.01	0.00	0.19
Թուրքիա	0.04	0.04	0.00	0.00	0.01	0.00	0.10	0.00	0.00	0.19
Այլ երկրներ	0.15	0.01	0.01	0.04	0.26	0.04	1.09	0.00	0.15	1.76
Ընդամենը	5.25	0.97	2.05	11.95	3.82	0.63	67.13	0.34	7.87	100.0

ՀՀ սահմանային անցման կետերում ժամանողների և մեկնողների շրջանում 2013թ. հունվար-դեկտեմբերին իրականացված ընտրանքային հետազոտության նախնական արդյունքները:

Հավելված 4

Արտագնա ճանապարհորդների աշխարհագրական բաշխվածության կառուցվածքն ըստ այցելության նպատակի, % [90]

ԵՐԿՐՆԵՐ	Գործնական	Աշխատանքի	Կրթության	Բուժման	Հանգստի և ժամանցի	Մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցություն	Այցելություն հարազատներին, ընկերներին	Ուխտագնացություն	Այլ	Ընդամենը
Ռուսաստանի Դաշնություն	4.31	16.11	0.29	0.75	3.77	0.63	20.70	0.14	2.21	48.90
Վրաստան	3.73	0.07	0.00	0.01	5.14	0.25	8.07	0.12	5.38	22.78
Իրան	0.86	2.90	0.05	0.01	0.23	0.01	0.75	0.00	0.02	4.82
Թուրքիա	2.84	0.07	0.00	0.00	0.52	0.02	0.18	0.04	0.82	4.49
Արաբական Միացյալ Էմիրություններ	0.46	0.06	0.01	0.00	3.30	0.01	0.13	0.00	0.00	3.98
Ուկրաինա	0.38	0.25	0.06	0.01	0.36	0.05	0.78	0.01	0.07	1.97
Գերմանիա	0.74	0.04	0.21	0.02	0.23	0.11	0.18	0.00	0.02	1.54
ԱՄՆ	0.43	0.02	0.18	0.00	0.13	0.02	0.34	0.00	0.06	1.19
Իտալիա	0.21	0.00	0.02	0.00	0.77	0.04	0.08	0.00	0.01	1.14
Ավստրիա	0.36	0.00	0.01	0.01	0.29	0.10	0.08	0.00	0.01	0.86
Չեխիայի Հանրապետություն	0.13	0.00	0.07	0.01	0.24	0.13	0.11	0.00	0.00	0.69
Ֆրանսիա	0.13	0.01	0.02	0.01	0.44	0.00	0.07	0.00	0.00	0.69
Լեհաստան	0.14	0.02	0.08	0.00	0.13	0.04	0.18	0.00	0.06	0.65
Բելառուս	0.12	0.12	0.05	0.00	0.06	0.01	0.26	0.00	0.01	0.63
Իսպանիա	0.12	0.00	0.00	0.00	0.32	0.01	0.02	0.00	0.01	0.49
Միացյալ Թագավորություն	0.13	0.01	0.15	0.00	0.10	0.02	0.04	0.00	0.00	0.45
Բելգիա	0.24	0.00	0.00	0.01	0.10	0.00	0.06	0.00	0.01	0.42
Հունաստան	0.02	0.05	0.00	0.00	0.18	0.01	0.13	0.00	0.01	0.40
Բուլղարիա	0.02	0.00	0.00	0.00	0.27	0.02	0.02	0.00	0.00	0.34
Թաիլանդ	0.02	0.00	0.00	0.00	0.27	0.00	0.00	0.00	0.00	0.30
Ղազախստան	0.11	0.01	0.01	0.00	0.01	0.01	0.10	0.00	0.02	0.27
Շվեյցարիա	0.14	0.02	0.01	0.00	0.06	0.00	0.04	0.00	0.00	0.27
Չինաստան	0.19	0.00	0.01	0.00	0.01	0.01	0.02	0.00	0.00	0.25
Նիդերլանդներ	0.07	0.00	0.02	0.00	0.04	0.01	0.08	0.00	0.01	0.24
Այլ երկրներ	0.63	0.10	0.15	0.01	0.71	0.15	0.38	0.04	0.06	2.23
Ընդամենը	16.54	19.86	1.43	0.87	17.67	1.68	32.80	0.34	8.82	100.0

ՀՀ սահմանային անցման կետերում ժամանողների և մեկնողների շրջանում 2013թ. հունվար դեկտեմբերին իրականացված ընտրանքային հետազոտության նախնական արդյունքները:

Հավելված 5

Սյունիքի մարզի լեռնագագաթների դասակարգումը

Գագաթներ	Բարձրություն (մ)	Լեռնագրական շրջան	Դժվարության աստիճանը	Երթուղու ուղղությունը
Ծղուկ (Գեղասար)*	3581	Սյունիքի բարձրավանդակ	2-րդ աստիճան	հր.արմ.-հս.արլ.
Մեծ Իշխանասար	3550	Սյունիքի բարձրավանդակ	3-րդ աստիճան	հր.արլ.-հս.արմ.
Թրասար	3594	Սյունիքի բարձրավանդակ	3-րդ աստիճան	հր.-հս.
Գլուխ Զագեձոր	3233	Սյունիքի բարձրավանդակ	2-րդ աստիճան	հր.արմ.-հս.արլ.
Մետաղաբլուր	1489	Սյունիքի բարձրավանդակ	1-ին աստիճան	հր.արմ.-հս.արլ.
Դրունքասար	2705	Զանգեզուրի լեռնաշղթա	2-րդ աստիճան	հր.արլ.-հս.արմ.
Նահապետ	2706	Զանգեզուրի լեռնաշղթա	2-րդ աստիճան	արլ.- արմ.
Գազանալեռ	3829	Զանգեզուրի լեռնաշղթա	3-րդ աստիճան	արլ.- արմ.
Կապուտջուղ	3904	Զանգեզուրի լեռնաշղթա	3-րդ աստիճան	արմ.-հս.արլ.
Սիսկատար	3826	Զանգեզուրի լեռնաշղթա	3-րդ աստիճան	արլ.-ամ.
Փառական	3826	Զանգեզուրի լեռնաշղթա	3-րդ աստիճան	արլ.-ամ.
Գեղաքար	3348	Բարգուշատի լեռնաշղթա	3-րդ աստիճան	հր.արլ.-հս.արմ.
Արամազդ	3399	Բարգուշատի լեռնաշղթա	3-րդ աստիճան	հր.արլ.-հս.արմ.
Թառկատար	3277	Բարգուշատի լեռնաշղթա	3-րդ աստիճան	հս.-հր.
Շաբաթասար	2691	Բարգուշատի լեռնաշղթա	3-րդ աստիճան	արլ.- արմ.
Բաղացսար	3249	Մեղրու լեռնաշղթա	3-րդ աստիճան	հր.արմ.-հս.արլ.
Շահպոնք	2373	Մեղրու լեռնաշղթա	2-րդ աստիճան	արլ.- արմ.
Խուստուփ	3201	Խուստուփ լեռնաշղթա	3-րդ աստիճան	հր.արմ.-հս.արլ.
Արջի գլուխ	2229	Խուստուփ լեռնաշղթա	3-րդ աստիճան	հր.արմ.-հս.արլ.

* Ծղուկի նոր անվանման հիմքը՝ [1, էջ193]:

Հավելված 6

Սյունիքի մարզի հանքային աղբյուրները [33]

Աղբյուր	Ջերմաստիճան (t˚)	Դեբիտը (լ/վրկ)	Հանքայնացումը
Որոտանի գետի ավազան			
Բազարչայ	16˚C-17˚C	1-2լ/վրկ	Ca, HCO_3
Անգեղակոթ	14˚C-24˚C	0.2-10.3լ/վրկ	Ca, HCO_3
Սիսիան	14˚C-22˚C	10լ/վրկ	Ca, HCO_3
Տոլորս	16˚C	0.3-0.4լ/վրկ	HCO_3
Գորիս գետի ավազան			
Ախլատյան	12˚C	0.2լ/վրկ	Ca
Ուրուտ	16˚C-23.1˚C	0.6լ/վրկ	HCO_3
Շամբ	13.5˚C	0.2լ/վրկ	HCO_3
Գորիս	12˚C-17˚C	0.1-0.2լ/վրկ	Ca, HCO_3
Քարաունջ	18˚C	0.1լ/վրկ	Ca, HCO_3, Sr
Խնածախ	17˚C	0.1լ/վրկ	Ca, HCO_3
Քարաշեն	15˚C	0.1-0.3լ/վրկ	Li, Mn
Արիգետ-Լեռնաշենի ավազան			
Արավուս	12˚C	0.1լ/վրկ	Ca^2
Դաստակերտ	10˚C	0.9լ/վրկ	HCO_3
Լոր	14˚C	2.5լ/վրկ	Ca
Լեռնաշեն	10.5˚C	4.5լ/վրկ	$HCO_3SO_4^2$
Գեխի-Ոխչիի ավազան			
Քիրս	12˚C	0.07լ/վրկ	Ca
Գյարդ	9˚C	0.2լ/վրկ	HCO_3
Կապուտջուղ	7˚C	10լ/վրկ	Ca, HCO_3
Եղասար	11˚C	0.06լ/վրկ	Ca, HCO_3
Ոխչի	9˚C	0.05լ/վրկ	HCO_3
Քաջարան	13˚C	0.1լ/վրկ	HCO_3, Na
Լիչքի խումբ			
Լիչքար	13˚C	0.1լ/վրկ	Na, Ca
Տաշտուն	8˚C	0.2լ/վրկ	Ca, Mg
Լիչք	8˚C	0.1լ/վրկ	Ca
Մեղրի-Ագարակի խումբ			
Մեղրիգետ	11˚C	0.2լ/վրկ	HCO_3
Գուդեմնիս	14˚C	0.01լ/վրկ	HCO_3, Cl
Ագարակ	17˚C	0.04լ/վրկ	HCO_3
Կապանի խումբ			
Տաթև	21˚C-24˚C	1.1-4.1լ/վրկ	HCO_3
Անտառաշատ	17˚C	0.03լ/վրկ	Ca, HCO_3
Շիկախոր	17˚C	0.6լ/վրկ	HCO_3

Հավելված 7

Սյունիքի մարզի հյուրանոցներն ըստ սակագների (դրամ/օր) [91], Սյունիքի մարզպետարան

Անվանումը	Բնակավայրը	Սենյակների տեսակը	Սակագինը
Դարիստ	ք. Կապան	Մեկ տեղանոց	12000
		Էկոնոմ երկտեղանոց	15000
		Ստանդարտ երկտեղանոց	18000
		Կիսալյուքս երկտեղանոց	22000
Մի ընդ Մաքս	ք. Կապան	Մեկ տեղանոց	25000
		Երկտեղանոց	25000
		Ստանդարտ երկտեղանոց	25000
		Կիսալյուքս երկտեղանոց	45000
Դիան	ք. Կապան	Մեկ տեղանոց	15000
		Երկտեղանոց	18000
		Ստանդարտ երեք տեղանոց	25000
		Կիսալյուքս երկտեղանոց	35000
Էմ Էլ	ք. Ագարակ	Երկտեղանոց	25000
		Ստանդարտ երկտեղանոց	35000
		Կիսալյուքս	35000
		Կիսալյուքս երկտեղանոց	40000
		Ստանդարտ երեք տեղանոց	40000
Մարիշոկ	ք. Ագարակ	Ստանդարտ	15000
		Երկտեղանոց լյուքս	20000
Զանգեր	ք. Գորիս	Մեկ տեղանոց	9000
		Ստանդարտ երկտեղանոց	18000
		Ստանդարտ երեք տեղանոց	24000
		Ստանդարտ չորս տեղանոց	30000
Միրհավ	ք. Գորիս	Մեկ տեղանոց	20000
		Երկտեղանոց	25000
		Ստանդարտ երեք տեղանոց	30000
		Ստանդարտ չորս տեղանոց	35000
Դիաննա	ք. Գորիս	Մեկ տեղանոց	18500
		Երկտեղանոց	22500
		Կիսալյուքս երկտեղանոց	30000
		Լյուքս երկտեղանոց	35000
Մինա	ք. Գորիս	Մեկ տեղանոց	16500
		Երկտեղանոց	20500
		Ստանդարտ երեք տեղանոց	29000
		Լյուքս չորս տեղանոց	36000
Խաչիկ	ք. Գորիս	Ստանդարտ երկտեղանոց	7500
Լառա	ք. Գորիս	Մեկ տեղանոց	12000
		Երկտեղանոց	17000
		Ստանդարտ երեք տեղանոց	22000
		Ստանդարտ չորս տեղանոց	26000
		Ստանդարտ հինգ տեղանոց	29000
Քրիստի	ք. Գորիս	Մեկ տեղանոց	14000
		Ստանդարտ երկտեղանոց	20000
		Երկտեղանոց	20000
		Լյուքս երկտեղանոց	24000
		Ստանդարտ չորս տեղանոց	30000

Հավելված 7-ի շարունակությունը:

Լյովա և որդիներ	ք. Գորիս	Մեկ տեղանոց լյուքս	10000
		Ստանդարտ երկտեղանոց	7000
		Ստանդարտ երեք տեղանոց	7000
		Լյուքս երկտեղանոց	18000
		Ստանդարտ չորս տեղանոց	5000
Միռա	ք. Գորիս	Ստանդարտ մեկ տեղանոց	12000
		Ստանդարտ երկտեղանոց	18000
		Ստանդարտ երեք տեղանոց	22000
		Ստանդարտ չորս տեղանոց	25000
Կյորես	ք. Գորիս	Ստանդարտ մեկ տեղանոց	8000
		Երկտեղանոց	16000
		Երկտեղանոց լյուքս	17000
		Ստանդարտ երեք տեղանոց	24000
Մանա	ք. Գորիս	Ստանդարտ մեկ տեղանոց	8000
		Երկտեղանոց	13000
		Ստանդարտ երեք տեղանոց	18000
		Ստանդարտ չորս տեղանոց	23000
Տաթև	ք. Գորիս	Ստանդարտ մեկ տեղանոց	13000
		Երկտեղանոց	17000
Եղևնուտ	ք. Գորիս	Ստանդարտ մեկ տեղանոց	18000
		Երկտեղանոց	22000
		Ստանդարտ երեք տեղանոց	25000
		Ստանդարտ չորս տեղանոց	35000
Գորիս	ք. Գորիս	Ստանդարտ մեկ տեղանոց	8000
		Երկտեղանոց	14000
		Ստանդարտ երկտեղանոց	17000
		Ստանդարտ չորս տեղանոց	25000
Վիվաս	ք. Գորիս	Ստանդարտ երկտեղանոց	15000
		Երկտեղանոց	20000
		Ստանդարտ երեք տեղանոց	25000
		Ստանդարտ չորս տեղանոց	25000
		Լյուքս երկտեղանոց	25000
Բասեն	ք. Սիսիան	Ստանդարտ մեկ տեղանոց	12000
		Երկտեղանոց	18000
		Ստանդարտ երեք տեղանոց	24000
Լալաներ	ք. Սիսիան	Երկտեղանոց	15000
		Կիսալյուքս	20000
		Ստանդարտ երկտեղանոց	20000
		Կիսալյուքս երկտեղանոց	25000
		Ստանդարտ չորս տեղանոց	35000
Քարահունջ	ք. Սիսիան	Երկտեղանոց	14000
		Ստանդարտ երեք տեղանոց	14000
		Լյուքս երկտեղանոց	18000
Զորաց քարեր	ք. Սիսիան	Երկտեղանոց	10000
		Ստանդարտ չորս տեղանոց	10000